



ԷԶՄԻԱԾԻՆ

1970 - թ.


Ռ Ն Ի  
Ի Է Տ Ա Ր Ի

Սեպտեմբեր

# ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ  
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Թ  
1970



ՀՐԱՄԱՆԱԻ

**Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ


ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





ԵՐԶԱՆՎԱՀԻՇԱՏԱԿ Տ. Տ. ՆԵՐՍԵՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑԻ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ  
ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ԾՆՆԴՅԱՆ  
200-ԱՄՅԱԿԻ ԱՌԹՎ**

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ  
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ  
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ  
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ  
ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՐՑՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ  
Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ, ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ  
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԵՂԻԾԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ՀԱՅՈՑ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ Տ. ԾՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,  
ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,  
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍԺՈՒՄԱՆԱԿԱՆ  
ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ  
ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԽԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Աստուծոյ ողորմութեամբ, ժԹ դարը Հայաստանեայց եկեղեցւոյ եւ ժո-  
ղովորդի պատմութեան վրայ կը բացուի հոգեւոր զարթօնքի ու ազատութեան  
շեփորներով:

Հերոսական մաքառումներու այդ դարաշրջանի սեմին, մեր առջեւ կը  
բարձրանայ պայծառ ու հզօր իմացականութիւնը Հայրապետի մը, որ գիտցաւ  
ու. Էջմիածնի ոգեկան կատարներում հասնիլ, եւ այդ բարձունքէն լուսաւո-

րել հոգեւոր-ազգային վերածնունդի ճանփան, առաջնորդելով իր ժողովուրդը այդ լույսով:

Մեր եկեղեցւոյ պատմութեան երկնականարի վրայ բարձրացող այդ աստղը՝ **Աշտարակեցի Ներսէս Ե Կաթողիկոսն է:**

Ինչպէս բազում մեծագործ եկեղեցական դէմքերու, նաեւ անոր հոգիին ծննդավայրը եղաւ ս. Էջմիածին, որուն նուիրեալ զաւակը եւ ապա Գառա-կալը դարձաւ, յիշատակութեան արժանի իրագործումներով, հայոց պատմու-թեան ամենէն քախտորոշ մէկ շրջանին:

Իր գործնէութեան առաջին օրերուն, ան հանդիսացաւ նախանձալոյզ ու ժաջամ բարեկարգիչը Մայր Աթոռի ներքին կեանքի, իբրեւ աջ բազուկը ծերունազարդ Դանիէլ եւ Եփրեմ Կաթողիկոսներու, ծաւալելով վարչական ու կրթամուէր արդիւնալի աշխատանք:

Ապա, իբրեւ թեմակալ առաջնորդ, աննախընթացօրէն րեղուն գործնէու-թիւն ունեցաւ վրահայոց մէջ, յատկապէս որպէս կրթական ու մշակութային հաստատութեանց հիմնադիր ու ոգեշնչող ղեկավար:

Իր կեանքի կոթողային գործերէն մին, իր հիմնած վարժարանը եղաւ Թիֆլիսի մէջ 1816-ին: Ներսիսեան վարժարանը, աւելի քան մէկ դար, հան-դիսացաւ արեւելահայութեան կրօնական, գիտական եւ հայրենասիրական կեդրոններէն մին, նախախնամական դեր կատարելով ի խնդիր հայ ժողո-վուրդի հոգեւոր լուսատրութեան եւ ազգային գիտակցութեան կազմաւորման:

Մեծ Աշտարակեցին իր կեանքի ամենափառաւոր պահը ապրեցաւ սա-կայն 1827-ի հոկտեմբերին, երբ սուրբ խաչը ձեռքիս՝ մարտի հրաւէր կար-դաց, կազմակերպեց ու գլուխը անցաւ հայ կամաւորներու գունդերուն, վասն Քրիստոսի եւ վասն հայրենեաց ազատութեան, պատգամելով՝ «Դիմադրեցէք թշնամուն եւ սորա արբանեակներին կամ ռուսաց զօրքերի հետ միասին եւ կամ թէ ուրիշ կերպ. թէ հարկ լինի մի խնայէք ձեր արեան վերջին կաթիլը»: Այսպէս է որ հայոց զօրքերը անմահացան՝ Էջմիածնի եւ Երեւանի գրաման հերոսամարտերուն մէջ: Եւ այսպէս է որ ռուս ժողովուրդի օգնութեամբ վերջ գտաւ պարսիկ խաներու դաժան տիրապետութիւնը Արեւելահայաստանի վրայ:

Քրիստոնեայ Ռուսաստանի հովանիին ներքեւ, կրօնական-ազգային կազմակերպութեան ու զարգացման լայն հորիզոն բացուեցաւ հայ եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդի առջեւ: Նախորդ դարուն սկիզբ առած հոգեւոր-կրթական զարթօնքը, այժմ նոր պայմաններու մէջ, նոր թափով իր վերջնական հունին մէջ մտաւ, ճշմարիտ վերածնունդի ճանապարհով:

Եւ կամօքն Աստուծոյ, իր ժողովուրդին նուիրում պայծառատես ու քաջ Հովիւր, փառքով բարձրացաւ Լուսաւորչի գահին վրայ, հոգեւոր արթնու-թեամբ եւ երկաթեայ ձեռքով շարունակելով իր շինարար աշխատանքը, եւ առանկ ամրապնդելով կարգն ու կանոնը եւ շէնութիւնը Մայր Աթոռին եւ հայ եկեղեցական կեանքին:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսէս Ե Աշտարակեցին, մեր եկեղեցւոյ եւ ժողովուրդի վերածնունդը կերտող դէմքերէն մէկն է, արժանի մեր եւ ա-



պագա սերունդներու յարգանքին, իբրեւ ժիր մատուակ լոյս հաւատքի, իբրեւ նոյնքան ժիր գործիչ գիտութեան եւ կրթութեան եւ իբրեւ «Պաշտպան հայրենեաց»:

Փառք եւ յանրժական լոյս իր յիշատակին:

Երանաշնորհ կաթողիկոսի ծննդեան երկուհարիւրամեակի լրումին, այսու Մեր կոնդակով կ'առաջադրենք, որպէսզի յառաջիկայ սեպտեմբեր ամսին, հայոց բոլոր եկեղեցիներու մէջ հոգեհանգստեան համդիսատր պաշտօններ մատուցուին եւ կենդանի խօսքով ոգնկոյչուին կեանքն ու գործը Աշտարակեցի մեծ Հայրապետին:

«Յիշեցէք զգործս հարց ձերոց, որ ինչ քաջութիւնս արարին ի դարս իւրաքանչիւր. ստացարոք փառս աւագութեան, եւ ժառանգեցէք զանում յաւիտենից» (Ա. Մակ. Բ. 51):

*Վաչագան*

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 13-ն փետրուարի  
1970 փրկչական ամի,  
եւ ի տումարիս հայոց ՌԻԺԸ,  
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի  
ՀՄՐ. 674





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՆԵՐՍԵՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

(1770—1857)

Այս տարի փետրվարի 13-ին լրացավ երջանկահիշատակ Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի ծննդյան երկուհարյուրամյակը։ Հիշարժան այս տարեդարձի առիթով Մայր Աթոռում գրված 1970 փետրվար 13 թվակիր ու համար 674 հայրապետական կոնդակով ազգիս Վեհափառ Հայրապետը հրահանգում էր սեպտեմբեր ամսում Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոններ կատարել և կենդանի խոսքով ու հրատարակություններով ոգեկոչել մեծագործ և հայրենասեր Հայրապետի անունն ու հիշատակը։ Սրբատառ և գեղեցկահայտ Իր կոնդակում Հայոց Հայրապետը բնութագրում էր ամբողջական ձևով մեծ Աշտարակեցու կյանքն ու գործունեությունը։

«Աստուծոյ ողորմութեամբ, ԺԺ դարը Հայաստանեայց եկեղեցւոյ և ժողովուրդի պատմութեան վրայ կը բացուի հոգեւոր գարթօնքի ու ազատութեան շեփորներով։

Հերոսական մարտումներու այդ դարաշրջանի սեմին, մեր առջև կը բարձրանայ պայծառ ու հզօր իմացականութիւնը Հայրապետի մը, որ գիտցաւ ա. Էջմիածնի ոգեկան կատարներուն հասնիլ, եւ այդ բարձունքէն լուսաւորել հոգեւոր-ազգային վերածնունդի

ճամբան, առաջնորդելով իր ժողովուրդը այդ լոյսով»։

Աշտարակեցին ԺԺ դարի առաջին կեսին մեր եկեղեցական, ազգային և մշակութային զարթոնքի ամենահիմնատիպ և բազմալատակ մեծություններից մեկն է, որպես հայ անձնավորություն, Մայր Աթոռի միաբան, լուսավորության և հառաջդիմության ջատագով մտավորական, թեմակալ առաջնորդ, հայրենասեր ու մեծագործ հոգեւորական։

Աշտարակեցին ավելի քան մի ամբողջ վեցամյակ, նվիրումով ու ջերմությամբ ծառայել է Մայր Աթոռ ա. Էջմիածնին, հայ ժողովրդին ու իր բազմաշարքար հայրենիքին։ Մի պահ Աշտարակեցին շողաց հայոց երկնակամարում ու անցավ։ Բայց նրա անունն ու գործը մնացին հայ ժողովրդի երախտագետ սրտում, մեր եկեղեցական-մշակութային տարեգրության մեջ։

Աշտարակեցին պատկանում է պատմության։ Նա դիմագրավել է ժամանակի անողորմ դատաստանին և իր կյանքով ու գործունեությամբ ամուր կերպով կանգնել է ԺԺ դարի մեր պատմության անմահ փառքերի լուսավոր փաղանգում և հավետ կենդանի մեր ժողովրդի սրտում։



Փառավոր ու ուսանելի է եղել Աշտարակեցու անցած գործունեության ուղին, մոնումենտալ ու միանշանակ իմ ամբողջ պարզության և խորության մեջ, միաժամանակ ի՛ր սրտեռանդն արդյունավորությամբ և հույսալիք իրագործումներով:

Ահա թե ինչու արդար է արձանագրել, որ ԺԺ դարի մեր եկեղեցական-ազգային տարեգրության պատկերասրահում նրա դիմանկարը կմնա միշտ պայծառ ու մերշնչող, և գալիք սերունդներն էլ երախտագետ գործվանով ու հիացումով կխոնարհեն իրենց գլուխները հայ եկեղեցու եռամեծ Հայրապետի և անձնդիր հայրենասերի խնկելի հիշատակի առջ:

Աշտարակեցին իր կյանքի ու գործունեության մեջ մարմնավորում էր հայ ժողովրդին, նրա երազներն ու իդեալները, նրա մտահոգություններն և ուրախությունները: Նա մարմնացում էր մի ամբողջ ժամանակաշրջանի մտայնության և հայրենական ապրումների:

Աշտարակեցին, ինչպես մեր պատմության այլ մեծություններ, դուրս էր եկել հայ ժողովրդի ծոցից: Ժողովուրդն էր ծնել, սնունդ էր սնել և անձնավորել նրա մեջ ինքնիդն, լիով ու ամբողջական, իր հոգու բոլոր գեղեցիկ մասունքներով,

Հայոց Հայրապետը իր հորելյանական կոնդակում նշում է. «Բնչպես բազում մեծագործ եկեղեցական դէմքերու, նաեւ ամոր հոգիին ծննդավայրը եղաւ ւ. Էջմիածին, ուրն ճուրիբալ զառակը և ապա զահակալը դարձաւ, յիշատակութեան արժանի իրագործումներով, հայոց պատմութեան ամենէն բախտորոշ մէկ շրջանին»:

Աշտարակեցու կյանքի ու գործունեության առաջին շրջանը երիտասարդական ու խանդավառ անցնում է Մայր Աթոռում, մինչև 1796—1814 թվականներ: Այդ ժամանակահատվածում Աշտարակեցին հանդիսանում է նախանձախնդիր և զինվորյալ, ուխտապահ միաբանը Մայր Աթոռի, իբրև աջ բազուկը ծերունագար Տ. Դանիել և Տ. Նիքիմե կաթողիկոսների:

1808 թվականի հունիսին, երբ Մայր Աթոռում կազմվում է առաջին Գերագույն հոգեվոր խորհուրդը կամ Սինոդը, յոթ ժողովական եպիսկոպոսներից մեկը Աշտարակեցին էր, որպես «երիտասարդ և ծիր միաբան» և որը «ավելի գործունեություն ցուցուց, պարզապես յուր անձնական և անխնայ աշխատասիրության հետևելով և անոր վրա կուգար ամփոփվիլ բոլոր գործունեությունը» մինչև 1814 թվականը, նշում է Օրմանյան սրբազանը:

1814 թվականին Աշտարակեցին 44 տարեկան հասակում իր հոգևոր, իմացական

ուժերի ծաղկման ու հասունության շրջանում, ընտրվում էր վրահայոց առաջնորդ:

Աշտարակեցու առաջնորդության տարիներին վրահայոց թեմը ապրում է իր հոգեվոր, մշակութային, հայրենասիրական զարթոնքի փառավոր շրջանը:

**Ս. Էջմիածին և հայրենիք. եկեղեցի և կրթություն. հայ ժողովրդի հոգևոր և իմացական լուսավորություն:** Ահա Աշտարակեցու գործունեության լուսավոր և ամուր զապանակները: Այս մտածումների լույսի տակ, իր առաջնորդության տարիներին, Թիֆլիսում, հայ եկեղեցու թեմը դառնում էր հաճախ հայ հավատքի, քրիստոնեական առաքինության և քարեպաշտության և հայրենասիրության և լուսավորության ամբիոն, նրա հայադրոշմ, կրոնաբույր քարոզների և ճառերի հզոր շեշտերի տակ:

Աշտարակեցու առաջնորդության տարիների գործունեության փառավոր մեծագործությունը հանդիսացավ, արդարորեն իր անունը կրող Թիֆլիսի **Ներսիսյան հայոց հոգեվոր դպրոցի** հիմնադրությունը, որն իր գործունեությունը շարունակեց մինչև 1925 թվականը և շուրջ մեկ դար վճռական և պատմական դեր կատարեց ընդհանրապես հայ մշակույթի և ի մասնավորի հայ մանկավարժական, գիտական, հասարակական մտքի զարգացման պատմության մեջ:

Աշտարակեցին իր հայրենասիրական փառավոր գործունեության համար արդարորեն կոչվել է պաշտպան հայրենյաց:

Նա եղել է շարունակողը հայրենասեր այն եկեղեցականների և աշխարհականների գործունեությանը, գործիչներ, որոնք Խաչել Օրբոց սկսած ճշմարիտ և իրապաշտ քաղաքականությամբ հայ ժողովրդի ազատությունն ու Հայաստանի ազատագրումը պարսկական և օսմանյան լծից, կապում էին անվերապահորեն ողու բարի ժողովրդի և Ռուսաստանի հետ:

Հայրենասիրությունը Աշտարակեցու հոգու ամենաարթագած հրաշքն է եղել դեռևս Էջմիածնում, ուսանողական, երիտասարդական տարիներին, երբ նա մտածում էր հայ ժողովրդի «ապարսխտության և անցյալի փառքերից զրկված լինելու» տխուր կացության վրա:

Վեհափառ Հայրապետը շատ ճշմարտորեն և տպավորիչ կերպով է բնութագրել Աշտարակեցու հայրենասիրական գործունեությունը իր սրբատառ կոնգլուվում.

**«Մեծ Աշտարակեցին իր կենսի ամենափառադր պահը ապրեցաւ սակայն 1827-ի հոկտեմբերին, երբ սուրբ խաչը ձեռքին՝ մարտի հրաւեր կարդաց, կազմակերպեց ու գլուխը անցաւ հայ կամաւորներու գունդերուն, վաճառ Բրիտանի և վաճառ հայրենեաց**

ազատութեան, պատգամելով՝ «Դիմադրեցէք թշնամուն եւ սորա արքանեակներին կամ ռուսաց զօրքերի ճետ սիւսին եւ կամ թէ ուրիշ կերպ. թէ հարկ լինի մի խնայէք ձեր արեան վերջին կաթիլը»։ Այսպէս է որ հաւոյ զօրքերը անմահացան՝ էջմիածնի եւ Երեւանի գրաւման հերոսամարտերուն մէջ։ Եւ այսպէս է որ ռուս ժողովուրդի օգնութեամբ վերջ գտաւ պարսիկ խաներու դաժան տիրապետութիւնը Արեւելահայաստանի վրայ»։

1843 թվականի ապրիլի 17-ին Աշտարակեցին ընտրվում էր Ամենայն Հայոց կաթողիկոս։

Աշտարակեցու ընտրությամբ հայ ժողովրդի սիրտն էր բացվում հայրապետական գահի վրա և Մայր Աթոռի համար բացվում էր եկեղեցական-մշակութային, կրթական և հայրենասիրական գործունեության խոստումնալից ճանապարհ։

Աշտարակեցին երիտասարդական ժողովրդի և իրեն հատուկ վճռակաճության և ձեռնբերության քննադատ էր լինում Մայր Աթոռի ներքին վանական-միաբանական ու տնտեսական կյանքի բարեկարգման աշխատանքներին։

Մայր Աթոռում Աշտարակեցու մեծագործությունների շարքում պետք է հիշել նաև իր անունը կրող լիճն ու անտառը, շաքարի գործարանը, որոնք Մայր Աթոռի համար

տնտեսական մեծ նշանակություն ունեցող ձեռնարկներ էին։

Աշտարակեցին որպէս իր ժողովրդին նվիրված պաշտաստես ու քաջ հովիւ, իր հայրապետության տարիներին, 1843—1857, Մայր Աթոռ ու էջմիածինը դնում է դարձյալ նրա հոգևոր առաքելության բարձրության և հայրենասիրական-ազգային դեկավարության ճանապարհի վրա։

1857 թվականի փետրվարի 13-ին Թիֆլիսում, 86 տարեկան հասակում, իր աչքերը փակում է մեծ Աշտարակեցին։


Սույն խմբագրականը ավարտում ենք Օրմանյան սրբազանի՝ Աշտարակեցու մասին տված հետևյալ բնութագրումով։

«Կրնանք առանց վարանման հայտարարել թե յուր ժամանակին առեւմտեւ ազգային դեմքը հանդիսացաւ, հայության համար պատրաստված իսկական օգուտներու շարժադիրը ճանշվեցաւ և ազգային կյանքին դեպի լայն հեղաշրջման գլխավոր ազդակը եղաւ։

Այն համբավը, զոր վայելեց յուր կենդանության տարիներուն մեջ, այն համակրական զգացումը, որով հայրապետական գահ բարձրացաւ, այն ընդհանուր հոշակը զոր մահվընէ ետք ալ վայելեց և կվայելէ, բավական են արդարացնել մեր տեսությունները...»։







## ՀԱՏԿԱԾՆԵՐ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՅՈՒ ՃԱՌԵՐԻՑ ՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Ապաքէն տեղի իջման Բանին Աստուծոյ և յատկական պարծանաց ամենայն ազգի Հայոց երկնահանդէս հրաշակերտ Աթոռ մեծ Քահանայապետութեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչի և զարդ հայրենեաց Հայաստանի՝ տիեզերահոյակ Տաճար փառաց Տեառն սր. ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ գոյով պատկանեալ անգամազանապէս ամենայն լրութեան հասարակութեան միաբանելոց ի մի յօդ հարազատութեան արեան՝ հօգոսաց ամբարձնելոց քաջագօտի դիմագրաւ վեհափառ նախնւոյն մեր Հայկայ, և ողորպիստ Վարդապետութեան հօրն հաւատող Պարթեւազնեան Ատոռաճ աշխարհ մահատանի՝ որք ընդ ոյրոսու ծագաց երկրի են տարածեալք, պարտուպատշաճ դաշնակցութեամբ՝ յիրաքանչիւր պատահմունս քարեաց և չարեաց վերաբերելոց նմին՝ ըստ օրինակի համաձայնութեան կարեկից անդամոց միաճնճութեան՝ ամենեցուն և մեզ պարտ է ձայնել, հոչակել, յականջս ամենեցուն ի սփիտ զայնցանէ մատակարարել. և ճոցին իւրաքանչիւրոց լսել, հոգով ազգասիրութեան և հայրենասիրութեան յաճմն իւր վերածել, առողջ ընտրութեամբ ի գնմին լիմի, և կեղանի կրիւք գտանի խնդակից և վշտակից ըստ Առաքելոյն: Ա. Կորն. ԺԲ 26:

(Համառօտութիւն անցից Բրիտտասկերտ Մայր Աթոռոյ Հայոց սրբոյ Էջմիածնի, Տփլիս, 1853, էջ 5):

\* \*

«Պատվարժան Հայոց ազգին, որ միշտ հավատարմ հպատակ է եղած Բրիտտասկերտ կայսրոջանն ոռուաց և բնակվում է Թիֆլիզում, Եղիզավետուպոլում, Ղարաքալում,

Նովխում, Ծամախում, Բաքու, Դերբենդ, թե քաղաքներում և թե գյուղերում, հոգևորականաց և աշխարհականաց՝ շնորհ և խաղաղություն Տշառն մերո և Փրկչի Հիսուսի Բրիտտասի:

Աստուծոց ինձ վրա դրված սրբազան պարտավորությամբս հայտարարում եմ ահա, որ ինչպես դուք էլ տեղյակ եք մեր ազգային պատմությունից, գիտենք թե ի՞նչ պատճառներով վերացան մեր ազգի գերազանցությունը, թագավորությունը, իշխանությունը, մենությունը, հարգանքները, հարբսությունը և կամ թե, վերջապէս, ը՛նչից հառաջացավ մեր սիրելի հայրենյաց վերջնական անկումը, և ո՛վքեր էին ընդհանուրիս այդ դժբախտությանց պատճառները: Հայտնի է ձեզ և այն, որ Հայոց ազգը քանի մի հարյուր տարի է ահա, որ գրկվել է հայրենական բոլոր ժառանգություններից և ցրված է աշխարհիս երեսը, որոնցից ոմանք հեծում են այսօր գերության մեջ, մյուսները պանդխտական կյանք են վարում և մինչև այսօր ազգս յուր կենաց պաշտպանությունը գտած է միմիայն ամենազթած և մարդասեր Աստուծո շնորհիւ, և Նա է, որ պարգեված է ազգիս այն գեղեցիկ հատկությունները, որոնցով և արժանանում ենք Աստուծո սիրով ու օտար ազգաց հարգանացը: Եվ ահա՝ մեր ազգի հավատարմությունը անասանելի է: Նորա սեփական քաղաք և չարյաց ճանաչողությունը անօրինակելի է: Ազգիս հավատարմությունը և համբերությունը, յուր կորովամտությամբ հանդերձ, ամենաելի է:

Հայտնի է ձեզ նաև Ռուսիո օգոստափառ պետության նպատակը: Նա յուր հզոր բազուկը տարածեց մեր հայրենյաց վրա ոչ

այնքան յուր սեփական օգտի համար, որ-  
քան մեր անդորրության և բարօրության  
համար ու Քրիստոսի սուրբ կրոնը և եկեղե-  
ցին պաշտպանելու համար: Այս ճշմարտո-  
ւթյունները ակնհայտ են ձեռք... Բազմաթիվ  
Քրիստոնեից գերեզարդությունը, ծերունաց և  
նոցա որդոց հոսանքը արյունը, Թիֆլիզի սուրբ  
եկեղեցուց և վանքերի հոր ճարակ դառնա-  
լիս,—այս բոլորի հառաջ թերեց Աստվածա-  
պառ Ռուսիո տերության ողորմությունը և  
կարեկցությունը, և նա, յուրյան հատուկ  
մարդասիրությամբ, առնելով մեզ յուր խա-  
ղաք հովանավորությանը ներքո, ապահով-  
ագրել է ցայսօր որևէ չարաբախտությու-  
նից:

Դուր տեղյակ եք նմանապես, որ Ռուսիո  
պետության դեսպանը, ըստ սովորության  
բարեկարգալ տերությանց, գնացած է այժմ  
արժանավայել ընծայելնով առ դուռն պար-  
սից: Ամբողջ աշխարհքը հանդիմանալով  
հույս է տաժում, որ Ռուսիո կայսերության  
այդպիսի օրհնակելի գիշմանց փոխարեն  
պարսից արքունիքն էլ յուր կողմից հարկ  
եղած միջոցները կգործ դնեն խաղաղության  
հարաստության համար և այս երկու պետու-  
թյանց փոխադարձ համաձայնության պատ-  
ճառով ամենուրեք և մշտապես կտիրապե-  
տեն բոլոր հպատակների ցանկացած անդոր-  
րությունը և կատարյալ ապահովությունը:  
Բայց հակառակ բարեմիտների սպասածին,  
պարսիկները, մտնելով Ռուսիո կայսրության  
սահմանները և խույս տալով ռուսական  
սահմանապահ զորքերից, ավազակաբար  
հարձակվում են գյուղերում առանց ամե-  
նայն նախագոյություն թնակվող հայոց  
վրա, նոցա գերի տանում և անողորմաբար  
տանջում:

Ռուսիո տերության ույժը այժմ էլ նույնն  
է, ինչ որ առաջ, երբ պարսիկները դարձյալ  
թշնամաբար էին վարվում Քրիստոսի հոտի  
և եկեղեցվո դեմ: Ռուսիան բարեհաճեց ըն-  
դունել Երկնից տված այդ ավանդները (ե-  
կեղեցին և հոտը) յուր առանձին հովանա-  
վորության ներքո և, խորտակելով նոր ձեռք  
բերած երկիրներին շրջապատող անհա-  
վանների գործությունը, ազատեց մեզ և մյուս  
հպատակաց այն ամեն տարաբախտություն-  
ներից և թշվառություններից, որոնք առաջ  
վրդովում էին մեր խաղաղությունը և նույն-  
իսկ մահ էին պատճառում մեր նախնաց:

Բայց պարսից ույժը այլևս այն չէ, երբ  
նոցա երբեմն արի և կրակի մատներով  
Թիֆլիզը, բոլոր ընկալաց գերի տարան:  
Այսօր, ընդհակառակը, չհամարձակվելով  
մերձենալ քաղաքներին և խույս տալով Ռու-  
սիո սահմանապահ ահեղ զորքերից, հու-  
ղովով ոտք են դնում ընդարձակ կայսրու-  
թյան սակավաբնակ տեղերը և մեծ քախտ

են համարում յուրյանց համար, որ գիշերվա  
խալաքի ժառանգը ավազակաբար հար-  
ձակվում են շինականների վրա, մատնում  
են նոցա արի կամ գերի տանում, ավար առ-  
նելով նոցա գույքը և անատմենքը:

Ռուսիո տերությունը տակավին այն ժա-  
մանակները, երբ դեռ ոչ մեկ երկրի և ոչ  
մեզ վրա տիրող չէր, չէր թողնում մեզ ա-  
ռանց պաշտպանություն և խորտակում էր  
մեր բարօրության թշնամաց,—մի՞թե հիմա,  
երբ Աստուծո և ամբողջ աշխարհի առաջ  
հանդիսանում է նա որպես պաշտպան և  
հովանի մեր ազգի և եկեղեցվոյն Քրիստո-  
սի, մի՞թե հիմա, կրկնում են, կրողն են մեզ  
առանց հովանավորության և պաշտպանու-  
թյան: Մի՞թե չի պատժիլ նա մեր թշնամաց  
և վրեժխնդիր չի լինիլ նոցա չար գործերին:  
Այս դեպքերում Աստուծո մատը կա ինչպես  
և ատավանային հայտնության մեջ ստված է  
թե՛ «Ես Փարսավոնի սիրտը և նրա ծռու-  
ների սիրտը խառնացուցի, որ այս իմ նշան-  
մերս ցույց տամ նրանց մեջ»: (Եղից. գլ.  
Ժ. 1.):

Այս հանգամանքները ձեր առաջ դարսե-  
լով, կարևոր են համարում հիշել և մեր հա-  
մագգիների դրությունը, որոնք զանազան  
տիրապետությանց ներքո են գտնվում, մա-  
նավանդ Օսմանյան և պարսից աշխարհում:  
Երևակայեցե՛ք թե, ո՞րպիսի համբերությամբ  
են տանում նոքա այն գրկանքները և թշվա-  
ռությունները, որ ամեն հիմա էլ թափվում  
են նոցա գլխին: Բայց և այնպես, հավա-  
տարմությունը դեպի յուրյանց տիրապետող-  
ները նոքա ավելի գերազանց են դասում,  
քան յուրյանց հանգստությունը, գուրքը և  
կյանքն իսկ: Բնությունից պարզված նոցա  
այս հատկությունը մշտական է և անապ-  
սան: Սորանով նոքա պատիվ և պաշտպա-  
նություն են գտած ամեն ազգերի մոտ. սո-  
րանով նոքա կանամ դարձնում են յուրյանց  
վրա տերությանց ողորմած ուշադրությունը:

Բայց և դուր ոչ պակաս ջերմառնեղու-  
թյամբ ոգևորված եք եղել միշտ այդ պար-  
տականությունները կատարելում: Դուր էլ  
քաղվից արժանացել եք գովառամտության և  
եղևտագիտության ձեր անմահ հովա-  
տարմության համար: Դուր արժանացել եք  
մանավանդ Ռուսիո կայսերության ողորմած  
ուշադրությանը, վասնոր և անվանած են  
ձեզ «ծառայ քարի և հատարարին» (Մատթ.  
գլ. 25. 23): Ձեր հավատարմությունը գովա-  
րանված է ամբողջ աշխարհում Ն. Կ. Մե-  
ծության ձեզ շնորհած ամենաողորմած հրո-  
վարտակով:

Ել որովհետև Քրիստոսի Ավետարանը  
մեզ համբերություն քարոզելով ասում է՝ «Որ  
համբերեացն իսպառ, նա կհցցէ» (Մատթ.  
գլ. 24, 13), վասնորո և էս, իբր արտացալ



հայր ձեր, հովիվ սուրբ եկեղեցվո և քարոզիչ ճշմարտության, պարտք եմ համարում կրկնել ձեզ Քրիստոսի նույն պատվերը: Հիշեցե՛ք Քրիստոսի Ավետարանում թագավորի թշնամյաց մասին սասած թե՛ «Ջրջնամիսն իմ գայնասիկ, որ ոչն կամիմ զիս զազառել ի վերա նոցա, ածե՛ք այս և սպանե՛ք առաջի իմ» (Լուկ. գլ. 19. 27): Հիշեցե՛ք ձեր հարց սեծանեծ սխրագործությունները և անմահելի առաքինությունները: Դուք նոցա որդիքն եք, նոցա արյունը ետ է գալի ձեր երակներում: Նման ձեր հարց և նախնյաց՝ հավատարմությունը առ Աստված, առ քրիստոնեությունն և առ բարեբարըն մեր—Աստվածապալս կայսրն Թուսիո,—գերազանց դասեցե՛ք քան զգույքն ձեր և նույնիսկ կյանքն: Դառնե՛ն անհավատարմությանն պտուղները: Անհատատու է դավաճանությանն օգուտը: Բայց օգուտները մաքուր հավատարմությանն առ քրիստոսաներ արքայն, առ եկեղեցին Աստուծո և առ քաղղո հայրենիքը—անա դորա օգուտները անկասկած արձագանք կգտնեն ապագա սերնդոց արտերում: Ամենքս մեզ վրա փորձած ենք թե որքան թանկագին է մեր անսասան հավատարմությունը առ մեր տերությունը և փոխարենը որքան առատաբալ ձեր վարձատրված:

Մի՛ վախի՛ք պարսից ձայնից և աղաղակներից: Նոցա բոլոր ույծը ճշի և սպառնալիքների մեջ է, և ոչ թե ճշմարիտ գործության և խելացիության: Եվ որովհետև նոցա ճիշն ու աղաղակը, որպեսբար թնդացնելով օդը, շուտով կորչում են, այնպես էլ ունայն են նոցա բոլոր գոռուս-գոչյունը և սպառնալիքները: Արիացե՛ք, մի վախի՛ք: Նոցա հանկարծակի հարձակումը անգեներ և խաղաղ շինացվոց վրա՝ չէ կարող սասանացնել Բուսիո Օգոստոսիան Կայսեր անհաղթելի զորաց: Հաստատ մնացե՛ք ձեր հավատարմությանն մեջ: Աշխատեցե՛ք խոհեմությամբ անմահացնել և փառավորել ձեր և ձեր նախնյաց հիշատակը ցկատարածն աշխարհի: «Լավ է անուն բարի քան զգանձ բազում» ասում է Սողոմոն իմաստունը (Առաւկաց գլ. ԼԲ. 1): Հուդա Մակաբայեցին ոգեվորում էր Իսրայելի ժողովուրդը ասելով՝ «մեռնե՛ք արիությամբ մեր եղբայր համար և արատ չթողունք մեր փառաց: Նույնը կրկնում են այսօր և ես իմ ամենասիրելի հայրենակիցներին, որոնք հավատարիմ հպատակ են ամենաբարեպաշտ կայսեր ամենայն Բուսիո:

Ահա՛ ժամանակ, երբ ամենքյանք վերածնելով ձեր մեջ ձեր նախնյաց սխրագործությունները, միաբանությամբ պիտի քաջալերենք միմյանց ասելով՝ «մեռնե՛ք քաջությամբ և առանց հայրենյացը դավաճանե-

լու և աղապիսով ժառանգենք մեր նախնյաց պանծալի անունն ու փառքը»: Հավատացե՛ք իմ խոսքիս՝ Աստուծո աջը պատրաստ է խորտակել ձեր թշնամյաց: Թող չվախեցնեն ձեզ պարսից րոպեական արշավանքները, ավազակությունները և այն մտտ յուրերը, որ տարածում են նոքա և կամ նոցանից խարված թեթևամիտները: Մի՛ տարախիսիք, մի՛ վախեցե՛ք և դողաք, վրան զի քաջ հայտնի են ձեզ պարսից հատկությունները և նոցա խորամանկությամբ հնարած յուրերի ստույթունը: Գոցեցե՛ք ձեր ականջները և ձեր միտքը աղապիսի կեղծ համբավների դեմ, բուցավառվեցե՛ք արիությանն ոգով: Դիմարդեցե՛ք մեր թշնամյաց բոլոր խորամանկությանցը և ավազակությանցը հետեվեցե՛ք ձեր սրտի մեջ դրոշմված արժանագով հավատարմության թելադրությամբ ու խոհեմությամբ տնօրինեցե՛ք ձեր անելիքը: Դիմադրեցե՛ք թշնամուն և սորա արբանյակներից կամ ռուսաց զորքերի հետ միասին և կամ թե մի ուրիշ կերպ, որ ավելի հարմար լինի՜ն ներկա ավազակորեն հարձակման միջոցին, իսկ թե հարկ լինի՜ մի խնայե՛ք ձեր այրան վերջին կաթիլը: Հավատացած եղե՛ք, որ Աստուծո հրաշալի փրկությունը կպահպանե ձեզ ամեն վտանգից որպես ներկայումս, այնպես և հազգե՛ն ազգ: Իսկ Աստվածային շնորհը և Բուսիո օգուտափառ ինքնակալի ողորմած ուշադրությունը պակասել կհիտունե թե ձեզ և թե բոլոր ձեր համագայաց: Արքեպիսկոպոս Հալոց Ներսես: Թիֆլիզ. 29 հուլիսի 1826 թ.:

• •

Ես պատասխանեցի պ. Վոլֆին թե դեռ 200 տարի առաջ հայը հովանավորություն սպասում էր միայն ռուսաց պետությունից, թե մեր նախնիքներն ու հայրերը, չարժանալով այդ հովանավորության, կտակեցին իրանց երեխաներին թե երբ կգա այդ հովանավորությունը, հայտնեն իրանց գերեզմաններին և այն ժամանակ կհանգստանա իրանց աճյունը. թե այժմ, ասում էի ես Վոլֆին, այժմ, երբ արդեն եկել է մեզ մտտ սպասվող հովանավորությունը և մենք բախտ ունինք նրանից օգուտվելու, էլ ի՞նչ կարիք կա ուրիշ պետության հովանավորությունը որոնելու: Ռուսաց կայսրը ինքը հոգ կտանե հալ ժողովրդի բարօրության մասին և նորին մեծության բարձրագույն հովանու տակ ես ինքս կարող եմ ամենուրեք, ուր որ հարկավոր է, հիմնել և քաց անել դպրոցներ, որոնց մեջ կավանդվին հայոց դավանությունն էլ, լեզուն էլ. մի խոսքով, ռուսաց կառավարությունն ինքը կանե մեզ հայերիս համար այն ամենը, ինչ կարող է ամրա-


պընդել հայ ժողովրդի քարեկեցությունը և քարոքությունը:

• •


Վոլֆը այն ժամանակվա մի հռչակավոր լորդի հանձնարարությամբ եկել էր համոզելու Եփրեմ կաթողիկոսին և ինձ որ Լոնդոն ուղարկվին մի նպիսկությոս, մի վարդապետ և երկու քահանա՝ այնտեղ դրպրոց բաց անելու և հայոց դավանությունն ու լեզուն ավանդելու համար հայ ընտանիքների երեխաներին, որոնք կարող էին կանչ-

վել զանազան կողմերից, միաժամանակ գրել թուղթ Ամերիկա այնտեղի հասարակության, հրավիրելով նրան հոծարական միաբերություն անել՝ պահպանելու համար այն դպրոցը, ուր հայ երիտասարդությունը պիտի ստանար կրթություն և լուսավորություն: Իսկ կաթողիկոսական կոնդակը Ամերիկա հասցնելը և դպրոցի օգտին փող հավաքելը անգլիացիները իրանց վրա էին վերցնում:

(Ներսես Աշտարակեցու նամակը իշխան Վոյոնցովին, 1850 թ. մարտի 11):







## ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստան աշխարհքը շատ վախտ էր նեղության, ավերման տակ ընկել, ամա էս ամենիցը անց կացավ: Սար ու ձոր դառել էր գողի, ավազակի բնակարան: Ամեն կողմից Պարսիկք է՛նպես ոտը բարձրացրին հանկարծ, որ էլ դեմ կենալու ճար չկար:

\* \*

Ո՛ր չգիտի, որ էս հաղադին, ինչ ժամանակ Հասան-խանը արևմտից, Աբաս-Միրզեն արևելքից՝ ավազակի պես հանկարծ էկան, մեր սահմանը (սևուր) կոխեցին, մեր կողմը ամենևին խաբար չունեին: Ընչանք Ռուսք իրանց գորքը կհավաքեին, Ղզաբաշը կարող էր սաղ Վրաստան ոտի տակ տալ, եթե Հայք չէին ամեն տեղ նրա ճամփեն կտրել: Միայն **Ներսես** ու **Գրիգոր** եպիսկոպոսաց, **Մատաթովի** ու **Բենքուդովի** արածը քավական է, որ աշխարք իմանա, թե ի՛նչ հոգի ունեն էն ժամանակը մեր ազգը: Առաջինը՝ խաչը ձեռին՝ Հայոց քարոզում, գորք էր հավաքում, որ գնան, արին վեր ածեն իրանց ազգի համար: երկրորդը՝ Երմայովի խնդրովը եպիսկոպոսության շրթերը փոխած, չերբեզի շոր հագած, յարաղ, ասպար կապած, որ Թիֆլիզու Ղազախ, Բոռչալվի միջովը չէր անց կենում, հենց իմանում էր իսպիլը՝ թե իրանց փրկիչն էր գալիս:

\* \*

Երևան թեկն տվեց, երբ Ռուսաց գորքը իր մեջը մտան: Էջմիածնի խնկի, մոմի հոտը ու

զանգակների ձենը երկինքը հասավ: Քաջահալոթ հսկայն, կոմսն Երևանի, Տոքիթա հրեշտակ Ներսես արքեպիսկոպոսի ձեռիցը բռնած մտավ Վաղարշապատ, որ Եփրեմ կաթողիկոսի սուրբ աչքին լիս տա ու առողջություն: Էն ժամանակվան խաղերը որ հանել ասում էին, հավիտյան հավիտենից կարող են աշխարքին վկայություն տալ՝ թե Թուրք ու Հայ հենց իմացան թե Աստված վեր էկավ իրանց համար:

\* \*

Սրբազան Ներսեսի խաչի՞ն դուրբան գնամ,  
Հոգևոր Եփրեմի տիրոջն դուլ դառնամ,  
Սուրբ Գեղարդյն մեռողի գորքն մալում էլան.  
Թշնամին քոռացավ. Հայքն ուրախացան.

Հայ ազգի աղոթքը երկինքը հասան:  
Անաստուված՝ Հայից ձեռք քաշի՛,  
կորի՛:  
Անհրավ՝ Հայերի արիմն մի՛ խմի. միտք արա՛ և այլն:

\* \*

Կարելի է՝ աշխարհք աշխարհքով դիպչի, ազգեր զան ու էլ եղ ոչնչանան, քայց քանի որ Հայի շունչն ու լեզուն կա, ե՛րբ նրանց մտքիցը կերթա էն ավետալից սհաթը, որ իշխանն Վարչավի, գեներալն **Գրասովակի** մեր ամման Ներսեսին հետընենոր՝ խաչ ա-

վերտարան ձեռնին՝ մտան բերդը, որ Հայոց աշխարհի ազատության տունը կատարեն:

\*\*\*

Էս միջոցին էր՝ որ Ներսես սրբազանը Սահակ առի ձեռնիցը բռնած՝ ընկել էր բերդերի, բաղամների գլուխն ու հենց գիտեր՝ թե երկնքիցն ա Երևանու դաշտին մտիլ տալիս. նոր ըլի դրախտը նրա աչքի առաջին բաց էլել. նոր ըլի ջրհեղեղը դադարել, նոր ըլի որդին միածին վեր էկել, որ իր արդար, սիրելի Հայոց ազգին փրկություն բերի: Անց կացած ժամանակները երազի պես էին նրա աչքի առաջին կանգնել: Չէր իմանում՝ թե Երևան ա տեսածը, թե Թիֆլիզ: Էն պոմսխներումը, էն ձորեղումն ու բաղերումը՝ որ սև լճաբաշի երեսի էր մրա աչքը տալորեն, Ռուս էր տեսնում ցրված, նստած:

Դ՛ի չէր տեսածը երազ համարի, յա հրաշք: Էս մտածմանց մեջը խրված՝ էն թանձր ունքերի տակիցը իր հոգեկից աչքը Հանգվի վրա էր քցել ու մնացել վերացած, գավազանի վրա թիկզը տված, որ մեկ քաղցր ձեն ետևիցը որ «հալ սուրբ ջան» չառաց ու ձեռն՝ առաջ դռնին, հետո երեսին չկազդեն. քաջաջան հովվապետը մնաց ուշագնաց: «Հայր սուրբ ջան՝ սրբազան տեր՝ ախ, էս ի՞նչ օր ա», մեկ ձեն էլ մյուս կողմիցն էկավ ու մյուս ձեռը բերան ընկավ: «**Մմբաթով ջան, Երուսայեմսկի ջան**՝ որդիք, թաղեցե՛ք ինձ այսուհետև ձեր ձեռովը, թե որ մեկ քանի օր էլ Աստված ինձ կյանք պետք է տա, թող էն դուր համար տա, որ էս էրված արտիս տուրազը կատարեն, մեր խեղճ, ցրվյալ ազգը՝ էլ եղ իրանց աշխարհի բերեն: Էս մեկ բանն էլ թող էս կարոտ աչքս տեսնի, հետո, ախ՛ հետո Հայաստանի սուրբ հողի տակը մտնիմ: Խնդրեցե՛ք, խնդացե՛ք, խորհացե՛ք, խնդրեցե՛ք՝ ո՛րդիք ջան, որ ձեր ծերունի հոր էս մեկ խնդիրն էլ Աստված լսի, էլ ուրիշ բան չեմ ուզում: Հայաստան, Հայաստան՝ տո՛ւր ինձ քո սիրտը, տո՛ւր ինձ գերեզման, էլ որ նոր ազգեր թե զան ու երթան, ախ՛ չի՛ մոռանա քո սև դառն օրվան նկարներուն, տանջանքն, կա՛ց ու զգաստացի՛ր, քո խեղճ որդիքը սիրով պահպանիր, էլ քո գավալը գեղի մի՛ քցիր, սուրբ հողդ իմ երեսս՝ ընտիր Հայաստան, աթոռ Աստուծո՛ւ տուն Արշակունյան:

(Խաչատուր Աբովյան, Վերք Հայաստանի, Երևան, 1959 թ., էջ 136, 137, 198, 199, 200, 202—203):

\*\*\*

«Ներսեսի հուշակն օրեցօր մեծանում էր և համբավ էր ստանում նաև օտար տերությանց աչքում: Այդպե՛ս ահա 1811 թվի

վերջերին նա պանակե խաչ ստացավ Ռուսիո կայսրից. իսկ երբ արոտային կալվածների վերաբերությամբ հրովարտակներ առնելու համար 1812 թվին նա գնաց Թալիթգ Աքբաս-Միրզայի մոտ, հանդիսավոր ընդունելություն ստացավ և քանի մի ամսվանից հետո հաջողությամբ վերադարձավ Էջմիածին: Ներսեսի խաղացած դերն աչքի էր զարկում ամենքին: Օրինակ, անգղիացի կրոնավոր Հենրի Մարտինը, որ 1812 թվի սեպտեմբերին հյուր էր եղել Էջմիածնում, գրում է այդ մասին՝ «Մենաստանս այս կամ լավ ևս ասել՝ ընդհանուր ազգ Հայոց են ընդ իշխանությամբ Ներսեսի՝ միով յարբեպիսկոպոսաց անտի, քանզի պատրիարքն էսիրեն է անուանակիր ենք, և ի քաղում եղանակս տարոյ յանկողնի հիսանդութան, տեսանի և այլն»:

\*\*\*

Սինդական կառավարությունը ձեռքն առնելու օրից, դեռ Դանիելի ժամանակ, Ներսեսն աշխատում էր վերականգնել Էջմիածնի վանքում Սինեոն կաթողիկոսի շինած ժառանգակիրաց դպրոցը: Այս մասին Աքբաս-Միրզայի հաճությամբ էլ ամենով, նա սկսեց շրջակա գյուղերից երեխայք ժողովել ուսուցանելու համար, քայք քարուհանկվող ռուս-պարսկական պատերազմը և երկրի անապահով դրությունը, մեծամեծ արգելքներ հառաչ բերելով, հետաձգել տվին Ներսեսի ցանկության իրագործումն մինչև 1813 թվականը, երբ, վերջապես, փոքր-ինչ ազատ ջունք բաշխվի, կարողացավ նա կառուցանել յուր մտադրյալ դպրոցի շինությունը:

\*\*\*

Ներսեսը, ընդհանրապես, պնդում էր, թե որովհետև «Էջմիածին է տեղին հաստատեալ՝ հիմնելա և սրբել յերկնուստ քստ տեախան Աթոյն Գրիգորի Լուսաորչի և է Աթոռ Որոս», վասնորո կվայելեն, որ ազգի մեջ լույսը այստեղից տարածվի և ոչ թե արտաքուստ գա:

\*\*\*

Ներսեսը շինեց Էջմիածնում 50 ժառանգակիրաց դպրոց: Ներսեսը ինքն էլ շուտով համոզվեց, որ Էջմիածնի դպրոցը միայնակ չէ կարող բավականություն տալ ընդհանուր Հայոց ազգին. հետևաբար կարևոր էր ու թեմերում էլ ուսումնարաններ բացվել:

\*\*\*

Իրաց այդ դրության մեջ հալ հոգևորականությունը տգետ էր, ըմբոստ, անպատ-



կառ, ոչ յուր կարգը և ոչ պատիվը մանա-  
չող: Եկեղեցիքը թալանված, ազգային եկա-  
մուտները հափշտակված:

Ազնվականք և իշխանականք—անուշ, գոռոզք յուրյանց ցեղական ծագմամբ, բայց

լի, ապա օգնության կհասնեն Ռուսաստա-  
նի, Տաճկաստանի ու Հնդկաստանի հայք.  
ռուսաց տերությունը ևս չի զլանալ մի ձշա-  
նավոր գումար տալու հոգուտ ժողովրդական  
յուսավորության ձեռնարկած գործին, և այդ-



Թիֆլիսի հայոց Ներսիսյան հոգևոր դպրոցը

զագրեկի վարք ու բարքի տեր, կեղեքիչք և  
հարստահարիչք ուսմիկների ու տկարների:  
Ժողովուրդն ընկղմած խավարի մեջ, բա-  
րոյապես ընկած, օտարամոլության հակ-  
ված, խղճալի և ցավալի դրության մեջ:

Այսպիսի դրությամբ տեսավ Ներսեսը  
յուրյան հանձնված Վրաստանի թեմը, որ  
այն ժամանակն էլ արդեն բավական ըն-  
դարձակ էր և Գանձակից մինչև Սև ծովն  
էր տարածված:

..

Մնում էր հուսալ հասարակության հա-  
մակրության վրա, և այդ էլ փորձեց: Ներսե-  
սի սուրբի մեջ կազմած նախագծով՝ ուսում-  
նարանի շինությունը կառուցանելու համար  
հարկավոր էր առնվազն երեսուն հազար  
ռուբլի: Վրաստանի թեմում, մտածում էր  
նա, մոտ 12 հազար հայ ծովա կա. եթե դո-  
ցա կեսը, որպես ունևոր, միանվագ մի-մի  
ռուբլի վճարե, կգումարվի վեց հազար ռուբ-

պիսով ուսումնարանը կկառուցվի: Ահա՛ այս  
մտքերը արհին անդադար կրկնում է յուր  
բազմաթիվ նամակագրությանց մեջ 1814 և  
1815 թվականներում:

..

Եվ այդպես, ուսման արժեքը գնահատող  
Ներսեսը անձամբ ևս կամեցավ օրինակ  
ցույց տալ՝ սովորելով ռուսերեն գիրն և լե-  
զուն, որոց մեջ շարունակում էր նա կատա-  
րելագործվիլ նույնիսկ յուր կաթողիկոսու-  
թյան օրերում: Հայտնի է, որ ապա փոխար-  
քա իշխ. Վորոնցովի տանը ծերունի Հայրա-  
պետը ժամերով խոսակցում էր ուս տիկ-  
նանց հետ առանց թարգմանի:

..

Աշտարակեցի Ներսեսի՝ մտքումը հղացած  
ուսումնարանի համար կարևոր էր մի հոյա-  
կապ և մեծածախա շինություն, որի մեջ երա-  
զում էր նա ժողովել մոտ 800 ուսանող:

Հարկավոր էր նմանապես ապահովացնել, այդ ուսումնարանը հաստատու եկամուտներով: Սակայն այդ բոլորի համար պետք եղած դրամը գումարելը գուցե այնքան դժվարություն չէր ներկայացնում Ներսեսի համար, որքան մտառամբություն էր պատճառում նորան ընտիր ու համբավավոր ուսուցիչներ գտնելու խնդիրը: Նա լավ գիտեր որ մի ուսումնարան հռչակ կարող է վայելել ոչ այնքան շինության ճոխությամբ, որքան քանիքում վարժապետների անունով: Իսկ այն ժամանակներում Հայոց աշխարհում համբավավոր ուսուցիչների սով էր:

Ներսեսը, ընդհակառակն, յուր ապագա դպրոցի համար որոնում էր ուսուցիչներ բուն հայ հոգևոր, մայրենի եկեղեցվոյն հարազատ և հավատարմ ու առաքինի քարոյց և վարուց տեր: Նա ուսուցչի այս հատկությունները քարծր էր դասում, քան արհեստական գիտությունները: Եվ անհայտափսի պահանջներով արհիմ ղիմեց յուր քարեկամաց օգնության՝ ի Պոլիս, Ջմյունիս, Մուղղալիս, Հնդկաստան և այլն:

Երբ ուսումնարանն արդեն բացվել էր և 1826 թվին հանդիսավոր հրապարակական հարգաբանություն էր կատարվում ներկայությամբ օտարազգի և մեր ազգի պատվավոր հասարակության, մինը հյուրերից՝ Ներսեսի վաղեմի քարեկամ վրացագգի նշանավոր իշխան գեներալ Օթար Ամիլախվարը, ոգևորված աշակերտաց ցույց տված հառաջադիմությունից, մոտեցավ պեզադո Արմիոյն և զգացված արտով ասաց՝ «Դու իմ հայրենիքում մեծ լապտեր վառեցիր, լսածս ու տեսածս պարտավորություն են դնում վրաս խնդրել՝ ընդունել ինձանից Սողանյոյս գյուղում գտնվող բարեկից այգին ի նշտական վայելումն քո ուսումնարանի»: Քանի մի օրվանից հետո վրացագգի վեհաժողով իշխանի Թիֆլիզից ոչ հեռու գտնվող Սողանյոյսի ընդարձակ այգին, Կուր գետի յուր սեփական թևով և մի պատվական աղբյուրով, կանոնավորապես հաստատվեց և անցավ ուսումնարանի վարչության ձեռքը:

Ներսեսի ցանկությունն էր յուր մտածած ուսումնարանին կից ունենալ և մի տպարան ու նման Կենտրոնի Մխիթարյանց՝ ճոխացնել մեր գրականությունը նորանոր տպագրություններով: Արդետով թե՛ ուսուցչական խումբը և թե՛ հասաջադեմ աշակերտները

միջոց կունենային յուրանց գիտնական աշխատությունները հրապարակ հանել ու անուն վատարկել:

Ներսեսի այս մտադրությանց հետ ի մոտո ծանոթ էր և համակարծիք՝ Վանից Թիֆլիզ վերաբնակված համբավավոր Գևորգ աղա Արծրունին, որ արևիկ մտերիմ բարեկամներից մեկն էր: Դեռ 1816 թվին, երբ Ներսեսը նոր ձեռնարկված էր յուր մտադրյալ ուսումնարանի շինությանը, Արծրունին առևտրական գործերով գնաց արտասահման: Պտուղով Եվրոպայի զանազան քաղաքները, նա իմացավ որ Ամստերդամում Հայոց եկեղեցվո շինությունների մեջ կողպված-պահված է դեռ անցյալ դարերում քանդող Ոսկանի և Վաճառեղեցվո հայ տպարանը յուր բոլոր տպարաններով:

Եվ անհ, Գեորգ Արծրունին գնեց Հայոց այդ քաղաքայրյան հին տպարանը և թերեց Թիֆլիզ Ներսեսին ընձա:

Բավական մնալով ուսումնարանի և տպարանի հենց սկզբում ցույց տված հառաջադիմությունից և տեսնելով վարժապետաց ջանքը, ուսանողաց աշխատասիրությունը և հասարակության ոգևորությունն ու համակրությունը, Ներսեսի մեջ միտք հղացավ շտապի՝ դարձնել յուր հիմնարկությունը մի տեսակ Վեճնոսիկյան ս. Վազարու Վանք և բարի նախաձեռն միցել Մխիթարյանց հետ գրականական ասպարիզում: Այս դիտավորությունով Արհիմ կամեցավ որ յուր Ուսումնարանի ձեռքով հրատարակվի մի գիտնական եռամսյա թերթ՝ «Տարեգրություն Հայոց գրագիտական» անունով, այն զանազանությամբ Մխիթարյանց 1800—1802 թվականների տպած նույն անուն «Տարեգրություններից», որ ամենևին չպիտի խոսեր քաղաքական և առօրյա անցքերի մասին, այլ գուտ գիտնական բովանդակությամբ ունենար:

(Ալեքսանդր Գ. Նրիցեան, Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի ի Թիֆլիզ, Թիֆլիզ, 1898, էջ 9, 24, 27, 27, 31, 33 37 37, 39, 61 118, 118, 119, 131):

Հրատարակելով այս ոգևորիչ ազգասիրական շրջաբերականը, վրեժնորությամբ



այրվող Ներսեսը, պատերազմի պաշտոնական հրովարտակից հինգ շաբաթ առաջ, արդեն յուր կողմից բացարձակ պատերազմ հայտնեց պարսից և մեկ ձեռքին խաչ, մյուս ձեռքին դրոշակ՝ հանդես դուրս եկավ ազգես և կրոնի թշնամյալ դեմ: Այսօրվա՜նից՝ վարդապետական համեստ վեղարի տակ Աշտարակեցին հանդիսացավ որպես թաջ գինվոր և հմուտ զորապետ, ու այդպես մնաց մա մինչև պատերազմի վերջը, միշտ ղեկավար և աջակից լինելով, ռուսաց զորքերին և սարսափ ձգելով պարսից բանակի վրա:

Կոստ Դիքիչը անձամբ հանձնելով Ներսեսին այդ հրովարտակը, գրեց կայսեր՝ «Հայոց արքեպիսկոպոս Ներսեսը ընդունեց Բաթրազայում հրովարտակը ամենախորհմ շնորհակալությամբ: Հրովարտակը կկարդացվի եկեղեցիներում և կհրատարակվի հայերեն լեզվով: Նա (Ներսեսը) երաշխավոր է լինում հայոց ազգի հավատարմության և ջերմեռանդության մասին և հույս ունե, որ եթե հաջողությամբ մտնենք Երևանի խանությունը, այնտեղի հայերի մոտ դեռ բավականաչափ պաշար կգտնենք, որի մասին ես էլ հավաստացած եմ»:

Ներսեսը ստանալով հրովարտակը, անմիջապես տպագրել տվեց յուր տպարանում առանձին տեսարկով, որ կրում էր վերնագիր՝ «Հռչակ ողորմության հիմնական» և կայսեր ամենայն Ռուսաց Նիկողայոսի Առաջնդ առ ազգս Հայոց որ ի Վրաստան» և հազարավոր օրինակներ ձրի բաժանեց հայոց: Տեսրակի մեջ բազմի հրովարտակը՝ ռուսերեն լեզվով և հայերեն թարգմանությամբ, կան տպված մաև Ներսեսի ճառը, որ պիտի ասեր ինքը հրովարտակի ընթերցանության հանդիսին, և մի շրջաբերական առ «պատուարժան առաջ երիցանց և ժամօրհնող քահանայից Հայոց ի Թիֆլիզ և ի Հայուսպար»։ որի մեջ պատվիրում էր նույն՝ «առնտարանել ամենայն ժողովրդեան Հայոց» կայսեր այս ողորմությունը և գալ ժողովիսի նույն փետրվարի 22-ին երեկոյան Վանքի եկեղեցին, որ պիտի կատարվեր հրովարտակի հանդիսավոր ընթերցանությունը: Նշանակած օրը հանդեսը շատ փառավոր էր և Ներսեսը դարձավ յուր բազմաթիվ հոտին «Յձմացէ՛ք, ցճմացէ՛ք» բացականչությամբ սկսված սրտառույ ճառով:

Մինչ շարունակվում էր կոփվը, Ներսեսը և Հովհաննիս քյոյր միաբանությունը զգեստավորված, համախմբվել էին տաճարում

ուս. Իջման տեղի առաջ ծնկաչոք աղերսում էին Աստուծոց հաղթություն ռուսական զորացը: Ներսեսը քարձրացրած ուներ ձեռքին ս. Գեղարդը և աղի արտասուքով աղոթում էր: Մի ականատես ռուս հեղինակ գրում է՝ «Այդ արդարև մի սրտատույ տեսարան էր... վաճառում մնացած ծանր հիվանդ զինվորներն անգամ սողալով մերս էին մտել եկեղեցին և լռեյայն, քայց ջերմաջերմ, աղոթում էին»:

Երբ պատերազմը վերջացավ, կենդանի մնացած զինվորները ուժասպառ և ալլալված, խուրթ-խուրթ և անկարգ դիմավորեց այի Հշմիածին: Վանքի պարսպի դռները բացվեցան, հնչեցին զանգակները և միաբանությունը խաչ ու խաչվառով դիմավորեց յուր ազատիչներին: «Այս մի բուռն ռուս եղբայրները, ատենաբանեց զգացված սրտով Ներսեսը, ճղեցին-անցան երեսուն հազար կատաղի զորաց միջից: Այս սակավաթիվ զուգըր անմահ փառաց արժանացավ և գեներալ Կրասովսկու անունը հավիտենական անցնելի կմա Հշմիածնի տարեգրությանց մեջ»:

(Աղեքսանդր Դ. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիզ, 1894 թ., էջ 237—243, 243, 271, 294):

#### ՆԵՐՍԵՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հազիվ թե Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսին մահվան լուրը տարածվեցավ, հաջորդին անունն ալ միանգամայն սկսավ կրկնվիլ ամենուր բերանե, հնդկական թեմերեն մինչև եվրոպական վիճակները, որ ուրեք որ հայ ժողովուրդ կգտնվեր, և այդ միաձայն հայտարարությունը Ներսես Աշտարակեցիի անունը կկրկներ: Այնչափ մեծ եղած էր Ներսեսի գործունեության և արդյունավորության ազդած հմայքը, որ Կարբեցիին Աթոռ քարձրանալը իբրև անհրաժեշտություն նկատված էր, և թեպետ ընդդիմության ցույցեր չեղան, սակայն բոլոր Տաճկահայ վիճակներ անոր անունը երբեք չհիշատակեցին սուրբ պաշտամանց մեջ, և թերևս ընդդիմություն ալ երևան եկած ըլլալ, եթե ռուսական պետության աղեցնությունը միտքերը չհնչեր: Ներսես մեծ ազգասեր մը հայտնված էր Մար Աթոռ հարքստահարությանց կացութենն օրհնավորված և անխուճ աշխատանքով և օգտակար հաստատություններով մեծ հառաջադիմական մը աննչցված էր դաստիարակության և կրթության և ուսման և գիտությանց համար ցուցած ջանքովը և նշանակելի արդյունքը:

վը. մեծ քարեկարգիչ մը եղած էր զեղծումներու և անկարգություններու դեմ անաչառ պայքարովը, և ամեն կողմ կարգ ու կանոնի համար գործածած ճիգերով: Այդ առավելությամբ վրա մենք կուգենք ավելցնել ինչ որ թերևս շատերուն մտադրութենեն վրիպած, քայց մեր տեսությամբ յուր արծանավորությամբ պատկն է եղած: Ներսես Պապեդիչն հայածնամ, Կարբեցին անարգված, պետական տեսությամբ հեռացված, և իբր քաղաքական հեռարարիտ անկյունը ձեռնված, երբեք ինքզինքը չստորնացուց և ավելորդ գանգատներով տկարամիտ ողբերու, գծյալներու ձևերու, վշտացյալ անգործության և պատշաճից գանգատության ցույցեր չըրավ, այլ զինքն ամեն հակառակություններե քարծր պահեց, յուր արծանավատությունը պաշտպանեց, յուր գործունեությունը ընդարձակեց, և հեռարարիտ անշուք և յրջալ պիճակը նախանձելի դրություն վերածեց, յուր անձն ալ միանգամայն պատկառելի բնույթով: Մեր համոզմամբ շատ ավելի մեծ է ձախող պատահարներու հանդեպ յուր սխառիվը պահելը, քան հաջող պարագաներու մեջ արդյունավոր լլլալը: Ներսես այդ մեծությունն ալ ունեցավ, և անա թե ինչո՞ր ընդհանուր ազգը զայն կուգեր կաթողիկոսական գահին վրա տեսնալ: Էջմիածնա միաբանություն մեջ ալ նույն զգացումը սկսած էր տիրանալ: Կարբեցիին ճշմունքներուն ներքև լույսն աստիճաններ, և կացություններ շողորթոթելով իրենց հաջողություն փնտրողներ, բոլորովին փոխված էին երբ այլևս Կարբեցին չկար, և Ներսեսին անցյալը, վեհ հոգին և արդյունավոր կյանքը իր ազդեցությունը կունենար, միտքերը կզրավեր և սիրտերը կշարժեր:

• •

...Ներսեսը յուր կյանքին գանգազան հանգրվաններուն մեջ, Դանիելի օգնական, Դանիել-Դանիելյան խնդրույն ժիր գործիչ՝ մինչև Դանիելի Աթոռ քարծրանալը, Դանիելի կաթողիկոսությանն առնեն աշխատող և հոգածու, Երիեմի կաթողիկոսանալուն գլխավոր ձեռնուռ, և անոր պաշտոնավորությանն օգնական, քայց և միանգամայն ղեկավարությամբ հանդիպող, Տփղիսի առաջնորդ, զեղծումներու դեմ աներկյուղ մաքառող, ուս և պարսիկ պատերազմներուն զինվորական գործակից Հայերը պատերազմին մասնակցության ոգևորող, Ռուսիո պետական շահերուն հետ ազգային մասնավոր շահերը անտես չընող, և ճիշտ աղ վերջի: տեսակետով Կովկասի ասպարեզեն հեռացված, և հեռավոր հեռարարիտ անկյունը նկատված:

(Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատմ., մասն երրորդ, Երուսաղեմ, 1927 թ., էջ 3765—3767, 3771—3772):

#### ՆԵՐՍԵՍԻ ԱՐԺԱՆԻՐԸ

Ներսես Աշտարակեցիի անունը հրապարակի վրա տեսանք առաջին անգամ յուր վարդապետին Դանիել Սուրբառեցիի հետ Զմյուռնիա գալուն առթիվ 1796-ին, և այն թվականն հետո մինչև 1857, 61 տարի շարունակ գործունյա ասպարեզին վրա մնաց նա անընդհատ շարունակությամբ և անխնայ ծրույթամբ, զի Տճ տարեկան հառաջացյալ և ծանրացյալ տարիներին մեջ ալ կանոնավոր աշխատության վրա էր, և մինչև վաճառական հարկերից օրը պաշտոնական գործերով կզբաղեր: Ներսեսի գործունեությունը երկար տևողությամբ հետ աղագանությանց առավելությունն ալ ունեցավ յուր մեջ, զի գրեթե չմնաց միջավայր մը որուն մեջ գործած չլլալ, եկեղեցականն մինչև զինվորականը, ուսումնականն մինչև քաղաքագիտականը, խաղաղականն մինչև խազմականը, պալատականն մինչև ռազմականը, քայց ոչ մեկին մեջ հետևյալ երևցավ, և ամեն տեղ դիրքին պահանջած գործիչը եղավ, և միշտ հնարավոր հաջողության և պատվավոր հաջողակությամբ ձեռնարկներուն մեջն էլավ: Այս քսելով ընալ հավանությունն չունիք կարծելու թե որևէ թերություն ունեցած չէ, կամ թե երբեք մեղադրանք եղած չէ. զի գիտենք թե որչափ մեկ մը գործունեությանց մեջ կրնա դարձակվի, և արդյունավորությամբ կպատվի, այնչափ ավելի մախացողներու և վնասվողներու յուսմանց կենթարկվի: Ներսես ալ ունեցավ յուր մախանձոտները, և առավելորդ ունեցավ իրմե վնասվողները, քանի որ բուն պարսար մղեց աղիկամի գործողություն, զեղծում բնողներու, ապօրինի վարվողներու, հանրությունը խաբողներու, և օրենքի անաստողներու դեմ, որոնց ամենքն ալ հարկավ իրենց ձգտումներուն և իրենց շահերուն թշնամի պիտի նկատեն իրենց դեմ արգելք հանող աճեր: Բայց ստույգ ամենն ալ ուրիշ բան չկրցանք քել, քայց եթե ընավորություն խժծեմ, կերպերը մեղադրել, չափազանցություններ վերագրել, ձեռնարկները քննադատել, քայց չկրցան ոչ անհրաժեշտ մը հաստատել, ոչ շահադիտական հոգի ենթադրել, և ոչ հանրության քարին անձնականին զոհած քել: Նույնպես անտեղությանց և զեղծմանց ընդհանուր տիրապետության դեմ պայքարի մտած ըլլալով՝ չէր կրնար մեղմ միջոցներով գործել, և բուն միջոցներու պետք ունեց, որունց պետք է խոստովանիլ թե ձգտումներն ալ շատ





հարմարություն ունեին, և պետքն ու բնույթը ձեռք-ձեռքի տալով կազմեցին Աշտարակեցին, տեսակին մեջ առանձնահատուկ անհատ մը, գործերու էություն տեսակետն գերազանց և գնահատելի, իսկ պարագայից կողմն թերևս չափազանց և քննադատելի, սակայն ամեն առթի մեջ յուր ուղիղ մտադրության համաձայն, և յուր բարձր նպատակին օգտակար: Այնպես որ կրնանք առանց վարանման հայտարարել, թե յուր ժամանակին ամենամեծ ազգային դեմքը հանդիսացավ, հայության համար պատրաստված իսկական օգուտներու շարժառիթոն մանջլեցավ, և ազգային կյանքին դեպի լայն հեղաշրջման գլխավոր ազդակն եղավ: Այս տեսակ անձնավորություններ, երբոր իսկական արդյունքներով և իրական արժանիքներով կենդանացան, անպետք խժրեցանք կրլա անոնց մասին մամր պարագաներու և անհշմանկ հանգամանքներու դիտողությանց մտնել: Ներսեսի արտաքին երեվոյրին մասին մեզի հասած կենդանագիրներ և նկարագիրներ կենդանացն զայն կառնվածով փոքր ու չոր, Մար Աթոռո հայրապետական զանին շրջափակին մեջ ծածկելու չափ, ջղուտ ու ջղայնուտ և դուրագրգիռ, անկքելի և բուռն, բայց միշտ յուր անձին և յուր կրից ու զգացմանց տեր, որուն մեծ հավատիքը տեսնվեցավ Բեսարաբիո արքայական վիճակին մեջ: Այն համբավը, գոր վայելեց յուր կենդանության տարիներուն մեջ, այն համակրական զգացումը, որով հայրապետական զան բարձրացավ, այն ընդհանուր հռչակը գոր մահվանն էտն ալ վայելեց և կվայելն, բավական են արդարացնել մեր տեսությունները գորս անկաշկանդ բացատրել խիղճի պարտավորությունն սեպեցինք:

(Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգապատում, մասն III, Նրուսաղեմ, 1927, էջ 3955):

• •

Էջմիածնում կրթական բարեկարգության եռանդուտ կողմնակից էր Ներսես Աշտարակեցին, բայց ես էլ, 1813-ին Թիֆլիս տեղափոխվելով առաջնորդի պաշտոնով, սկսեց այդտեղ ամեն ջանք գործ դնել իր ցանկացած դպրոցը հիմնելու համար: 1824-ին էր որ բացվեց Ներսիսյան դպրոցը: Եվ այսպիսով, կարճ միջոցում ստեղծվում էին երկու դպրոցական բարեկարգ հաստատություններ, բայց երկուսն էլ մայր հայրենիքի և պարսկական տիրապետության ահմամներից դուրս, գաղութներում:

• •

Նրկար պատմություն Է թե ինչեր արավ հայ ազգարնակությունը ռուսաց գործի հաղ-

թական աջողությունների համար, ինչ և ռուսը և որքան անձնագոհություն ցույց տրվեց նա այդ ասպարեզում: 1826—1827 թթ. ռուս-պարսկական պատերազմների տարեգրությունները լիքն են ժողովրդական շարժման հուզիչ մամրամասնություններով: Հայ



Էջմիածնի Ներսիսյան լիճը

ազգը լավ զգում էր որ եկել-հասել է վճռական րոպեն, երբ, վերջապես, պիտի շուտ գա իր պատմական բախտը, երբ նրա կյանքի մեջ պիտի սկսվի նոր դարաշրջան: Այդ վճռական հեղաշրջման համար հայ գյուղացին, դարերի անխոս ստորուկը, չէր խնայում իր կյանքն ու գույրը:

Այդ ժամանակ ոգին Ներսես Աշտարակեցին էր, Թիֆլիսի առաջնորդը: Դժվար է ցույց տալ մեր պատմության մեջ ավելի կրակոտ պրոպագանդիստ, ավելի մեծ և ռուսը և կամքի անխորտակելի ույծ: Միայն, նրա այն գրագրությունները, որոնք վերաբերվում են 1826—1827 թվականներին, այսօր էլ վկա են թե ինչ անագիծ գործունեություն էր կյանքն այդ իսկապես խոշոր մարդուն՝ հայ ժողովրդի իդեալները իրականացնելու համար: Պետք էր ունենալ մեծ ինքնավստահություն, մեծ հավատ դեպի գործը,



կանխատեսություն՝ քաղաքելու և գործելու համար այնպես, ինչպես Ներսեսը գործում էր այդ վերին աստիճանի կարևոր պատմական րոպեին. պետք էր բախտից և իշխանությունից երես առած մարդ լինել անվերապահ, համարձակ կերպով ազգերն ու ժողովուրդները հուսադրելու, հուսահատեցնելու, շարժել տալու համար: Պատմությունը այս մեծ գործունեության շատ և շատ փաստերն է պահել իր մեջ և մենք այստեղ այդ փաստերը չպիտի կրկնենք: Կրավակաճանք մի երկու բնորոշ փաստերով, որ հանում ենք Ներսեսի անտիպ թղթերից:

Դեռ 1827-ի սկիզբն է, դեռ ոռոսաց զորքը Արարատյան երկրում մոր է երևացել և վճռական գործողություններ էլ չէ սկսել: Որպեսզի հայ ազգաբնակչությունը հավատով և վստահությամբ վերաբերվի ոռոսական շարժման, որպեսզի ամեն տեսակ պաշար հայթայթե ոռոս բանակին, Ներսեսը 1827-ի ապրիլի 13-ին Էջմիածնից ուղղում է մի շրջաբերական-կոչ պատվելի հասարակության հայոց բնակելոց համեմայն սահման Երևանու և Նախիջևանու ի քաղաքս և ի գյուղս»:

Այդտեղ նա գրում էր.

«...Եւ ես որպէս հոգևորական և վկայ հաւատարմիմ ձեզ յԱստուծակոյս կողմանէ հատարամացուցանեմ զամենայն գնայկազեան երամս հօտի սրբոյ Լուսաւորչին մերոյ և մեծ վկային Քրիստոսի Քրիզոբորի մեծի Պարթեկին, զի երկիր Երևանու և Նախիջևանու յայսմենտէ այնպէս է յատկացեալ պետութեան ոռոսաց, որպէս Թիֆլիզ, Ելիզաւթապոլ, Աստրախան և այլ ամենայն յայնաժառայ սահմանաց նորին զաւտք և նահանգք և զօրք նորա չունին վերադառնալ ըստ առաջնոյ, այլ կան և կայոց են յափտեան ի հովանաւորութիւն հայրենեաց Հայաստանի և ի փոփանն նեղեալ և վշտացեալ ժառանգաւորաց նորին որդոց Արամայ»:


Ներսեսը ռեալ քաղաքականության մարդ էր, մի գործիչ, որ իր երկար կյանքի ընթացքում անցել էր, ինչպես ասվում է, «կրակի և ջրի միջով» և որի սրտին, ըստ երեւոյթիւնի, խորթ պիտի լինեին սանտիմենտալ գեղումները: Սակայն երբ Արարատյան երկրի վրա ծագեց մոր արշալույսը, երբ դարձրելով այդտեղ հյութաբան եղած ժողովրդի ակնկալությունները իրականացնելու վրա էին, երբ ոռոսական թնդանոթները սկսեցին ձեռնել թաթարական բռնապետու-

թյան կողերը, Ներսեսի պես երկաթե մարդն էլ չդիմացավ և ենթարկվեց ժողովրդական ընդհանուր տրամադրության, հուզվեց մինչև սրտի խորքը: «Գտնվելով 1827-ի պատերազմի մեջ պարսիկների դեմ ես, երբ մեր զորքերն անցնում էին Աշտարակ գյուղով, որ իմ հայրենիքն է, հրավիրեցի հայտնի գեներալ Կրասովսկուն մի քիչ հեռուէլ ինձ և տարա մրան իմ հոր գերեզմանին մոտ և պատմելով այդտեղ գեներալին այն պատվիրանը, որ արել էր ինձ հանգուցալը, ես ձայնեցի դեպի գերեզմանը. «Հայր, սիրելի իմ հայր, կատարվել է քո մարգարեությունը, քո ակնկալությունը արդարացավ—եկել է մեզ մոտ ոռոսաց հովանավորությունը. ակնաջ դի՛ր, ահա նրա հաղթական զորքը փայլում գեներալով, փողերի և ծածղաների աղմուկի տակ անցնում է մեր բնակարաններով, մոտենում է թշնամուն և խորտակում է նրա անասն՝ հպարտությունը նրա դուռերի մոտ: Այկանջ դի՛ր, հայր, լսիր քո որդիների բարօրությունը, լսիր, և թող հանգստանա քո անյունքը: Արտասուքները չթողին որ շարունակեմ խոսքս և առաքինի ու զգայուն գեներալ Կրասովսկին, հուզված մինչև հոգու խորքը, հագիվ կարողացավ ինձ էլ, իրան էլ հեռացնել իր համար այնքան անակնկալ այդ տեսարանից»:

Եվ երբ այսպես էր Ներսեսը իր սեփական խոսքերով արած նկարագրության մեջ, մենք պետք է ընդունենք որ Խաչատուր Աբովյանն էլ շատ հարազատ գույներով է նկարագրել այս մեծ պատմական դեպքը, որ տեղի ունեցավ 1827-ի հոկտեմբերի 1-ին: Այդ օրն ընկավ Երևանը, որ իր բարձրացման օրից թաթարական բռնակալության թանձրացումն էր ու ամուր պատվարը, որ իբրև բերդ մատած էր հայ երկրի սրտում՝ այդ սիրտը իր ճիրաններով պատառոտելու համար:

Դեպքը շատ մեծ նշանակություն ուներ և ոռոսաց գեներալ համար: Դա մի խոշոր հաղթություն էր, որի համար գեներալ Պասկևիչը մեծամեծ պարգևների է արժանանում և նրա անունը Արևելքի ժողովրդի մեջ պատմական մեծ գորավարների փառքին հաղորդակից էր դառնում: Արևելքի մեջ մի մեծ ցնցում էր տեղի ունենում, որ պիտի փոխեր ազգերի ճակատագիրը: Բայց անհունապես մեծ էր Երևանի անվան նշանակությունը հայության համար:

(Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 94, 97—100):



Ա. ՀԱՏԻՑՅԱՆ

## ՆԵՐՍԵՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

(1770 փետրվար 18—1857 փետրվար 18)

Այս տարվա փետրվարի 13-ին լրացավ Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի ծննդյան 200-ամյակը: Փետրվարի 13-ին գրված հայրապետական կոնդակը հրահանգում էր սեպտեմբեր ամսին «հայոց բոլոր եկեղեցիներում մեջ հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոններ մատուցվին և կենդանի խոսքով ոգեկոչվին կյանքն ու գործը Աշտարակեցի մեծ Հայրապետին»:

Աշտարակեցին ԺԹ դարի առաջին կեսի հայ եկեղեցու ինքնատիպ ու նշանավոր հայրապետներից մեկն է հանդիսացել, որի 60-ամյա գործունեությունը չափազանց ընդարձակ հոյակապներ է ընդգրկել, որպես Մայր Աթոռի միաբան, վարդապետ ու եպիսկոպոս, Սինդի անդամ, հայրապետական նկիրակ, թեմակալ առաջնորդ, կրթանվեր մշակ, «պաշտպան Հայրենեաց» և գափալկալ Լուսավորչի Աթոռին:

Աշտարակեցին իր եկեղեցական, հայրենասիրական, ժողովրդավեր, լուսամիտ և արդյունաշատ գործունեությամբ, իր առաքինազարդ ու անբասիր կենցաղով, համագրային զլատկական պարծանաց ամենայն ազգի Հայոց՝ երկնահանդես հրաշակերտ Աթոռ մեծ քահանայապետութեան և զարդ հայրենեաց Հայաստանի՝ տիեզերահռչակ Տաճար փառաց Տեառն արքյ կա-

թողիկե Էջմիածնի»<sup>1</sup> հանդեպ իր ունեցած սիրով և պաշտամունքով, մեր դասական եռամեծ վարդապետների տեղականով ու կերպարով, լուսավոր ու անմոռաց հիշատակ է թողել մեր եկեղեցու և մեր ժողովրդի պատմության մեջ. «Երանի՜ մեռելոցն, որք ի Տէր ննջեցին, զի գործք իրեանց չոգան գնետ նոցա» (Յայտնությ. ԺԿ 13):

Աշտարակեցին եղալ մեր այն քացատիկ և երջանիկ հայրապետներից մեկը, որին վիճակվեց տեսնել Հայաստանի և հայ ժողովրդի ազատագրումը օտար բռնակալությունների լծից, շնորհիվ ուուս մեծ ժողովրդի օգնության:

«Ներսեսի գործունեությունը,—գրում է Օրմանյան արքազանը,—երկար տևողությամբ հետ աջազանությանց առավելությունն ալ ունեցալ լոր մեջ, զի գրեթե չըմնաց միջավայր մը որուն մեջ գործած չլուա, եկեղեցականեն մինչև զինվորականը, ուսումնականեն մինչև քաղաքագիտականը, խաղաղականեն մինչև խազմականը, պալատականեն մինչև ռամկականը, բայց ոչ մեկին մեջ հետևյալ երեցալ, և ամեն տեղ դիրքին պահանջած գործիչը եղալ, և միշտ

<sup>1</sup> Համատեսությամբ անցից Քրիստոսակերտ Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, ի Տփլիսիս, 1853, էջ 5:



հնարավոր հաջողությամբ և պատվավոր հաջողականությամբ ձեռնարկներում մեջեմ ելավ<sup>2</sup>։

#### ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշտարակեցին ծնվել է 1770 թվականի փետրվարի 13-ին Արագածոտն գավառի Աշտարակ գյուղում, հայ քահանայի ընտանիքում։ Աշտարակեցու հայրը՝ տ. Հարություն քահանան, «ջրաղացպանութենեմ եկած, աղքատ դասակարգի կապտակներ»<sup>3</sup>։

Աշտարակեցու մեծ պապը կամ գերդաստանի «տոհմապետը եղել է ոմն Ներսես, երևի իշխան ի Օիրակառան, յազգե Կասարականաց»<sup>4</sup>։

Աշտարակեցու ավագանի անունը եղել է Թորոս։ Վարդապետ ձեռնադրվելուց հետո վերանվանվել է Ներսես։

Աշտարակեցու մոր՝ Սուսանբարի հայրն էլ եղել է բյուրականցի Բաբաջանյանց տ. Լազարոս քահանան։

Աշտարակեցին իր նախնական կրթությունը ստանում է իր եղբոր՝ Կարապետի հետ իր կնքահայր տ. Գալուստ արքեպիսկոպոսի մոտ։ Ապա որպես «ս. Էջմիածնի Իջմուտեղին» նվիրված ուխտի զավակ<sup>5</sup>, 8 տարեկան հասակում ընդունվում է Մայր Աթոռի Սինեոն Երևանցու օրոք բացված ժառանգավորաց վարժարանը և աշակերտում ժամանակի նշանավոր վարդապետ՝ խամսեցի Գրիգոր վարդապետին, որը հետագայում եղավ Կ. Պոլսի հայոց պատրիարք (1801—1802)։

Մայր Աթոռում ուսումնառության տարիներին Աշտարակեցին որպես ուշիմ աշակերտ, վայելում է Դանիել Սուրմառեցի եպիսկոպոսի հովանավորությունն ու պաշտպանությունը։ 1796 թվականին Աշտարակեցին ընկերանում է Դանիելին մինչև Զմյուռնիա, նրա նվիրականության շրջանին, որպես սարկավագ։

Աշտարակեցին ֆիզիկապես եղել է «վտիս, նիհար, կարճահասակ, բայց ուսման մեջ հառաջադեմ, աշխույժ և կրակոտ, սրամիտ և հմարագետ, զարմանալի հիշողության տեր, աշխատասեր, ընթերցասեր...»<sup>6</sup>։

«Ներսես հասակով և կազմով մանր մարդ մը եղած է, թեպետ հոգվով և սիրտով մե-

ծամեծներու ձգտող, և գործունեությամբ՝ չափ ու կուպար չգիտցող»<sup>7</sup>։

Մայր Աթոռի ժառանգավորաց վարժարանում ուսումնածարավ Աշտարակեցին հետևում է եկեղեցական արարողությունների, ս. Գրոց մեկնության, քերականական, ճարտասանական, աստվածաբանական և տրամաբանական գիտությունների, հայ եկեղեցու պատմության և մատենագրության մեջ։

Աշտարակեցին շուրջ 12 տարի սովորում է Մայր Աթոռի ժառանգավորաց վարժարանում և 1791 թվականին, 21 տարեկան հասակում, սարկավագ է ձեռնադրվում իր կնքահայր տ. Գալուստ արքեպիսկոպոսից։ 1796 թվականին, սեպտեմբերին, վարդապետ է ձեռնադրվում Դանիելից Զմյուռնիայում և նշանակվում Հելլադայի, Մոլդավիայի և Վալաքիայի նվիրակ, մինչև 1799 թվականը։

Սարկավագ ձեռնադրվելուց հետո Աշտարակեցու առաջ բացվում է վանական-վարչական, կրթական և հայրենասիրական գործունեության լայն առապարեզ թե՛ Մայր Աթոռում և թե՛ թեմերում։

1799 թվականին Աշտարակեցին Կ. Պոլսից վերադառնում է Մայր Աթոռ և Դուխաս Ա կաթողիկոսի մահից հետո (1780—1799) ակտիվորեն աշխատում է Դանիել Սուրմառեցու իր բարերարի և Կ. Պոլսի հայոց պատրիարքի՝ կաթողիկոսության հաջորդության համար, որպես «դանիելյան կուսակցության գլխավոր ղեկավար»։ Աշտարակեցին եղել է աջ բազուկը Դանիել կաթողիկոսի և նրանից եպիսկոպոս է ձեռնադրվել 1808 թվականին և իսկույն ստացել է արքության պատիվ, «որպես գրագիր կամ ատենադպիր ու գլուխ՝ հայրապետական գործունեության»<sup>8</sup>։

1808 թվականի հունիսին, երբ Մայր Աթոռում կազմվում է առաջին Սինոդը Դանիել կաթողիկոսի օրոք, 7 ժողովական եպիսկոպոսներից մեկը Աշտարակեցին էր, որը «ավելի գործունեություն ցուցուց, պարզապես յուր անձնական կարողության և անխնայ աշխատասիրության հետևելով», և մեծապես օգտակար է հանդիսանում Մայր Աթոռին՝ ապահովելով նաև Եփրեմ Զորագեղցու ընտրությունը և անձամբ այցելելով արքայորդի Արքա-Միրզային ստանում է պետական հատատուումը «չանուն Եփրեմի» և

<sup>2</sup> Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգապատում, մասն Գ, 1927, էջ 8956։

<sup>3</sup> Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգապատում, մասն Բ, էջ 2298։

<sup>4</sup> Ալեքսանդր Դ. Երիցյան, Պատմություն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 2։

<sup>5</sup> Ալեքսանդր Դ. Երիցյան, նույնը, էջ 3։

<sup>6</sup> Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգապատում, մասն Բ, էջ 8299։

<sup>7</sup> Ալեքսանդր Դ. Երիցյան, նույնը, էջ 5։

<sup>8</sup> Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգապատում, Գ հատոր, էջ 8355։

<sup>9</sup> Նույնը, էջ 8359։

կաթողիկոսական հաջորդության խնդիրը «լրացյալ գործողության կարգ աճցոց»<sup>10</sup> և ընդմիջւո փակում է ճանապարհը Դավիթ Ենեգետցու կողմնակիցների, որոնք բոլոր միջոցներով աշխատում էին տիրանալ դարձյալ Մայր Աթոռին: Պատմության արեւելի են անցնում Դավիթ-Դանիելյան վեների տխուր էջերը:

Դանիել Սուրմառեցուն հաջորդում է Եփրեմ Ա Չորագեղցին (1809—1830), Աշտարակեցու բարեկամն ու գաղափարակիցը:

Աշտարակեցին Եփրեմ կաթողիկոսի օրով էլ հանդիսանում է Մայր Աթոռի ծրագրան և արդյունաշատ միաբաններից մեկը, խորհրդաւորում և աջ բազուկը նաև նորոգողի կաթողիկոսի: Եփրեմի օրով Մայր Աթոռում «Ներսէսի վրա կուգար ամփոփվիլ բոլոր գործունէությունը և Ներսէս ալ փախչող չէր այդ բեռեն, մանավանդ թե խժարական զայն յոր վրա հրավիրող և առնողն էր» որպէս «երիտասարդ և ժիրածիր» միաբան Մայր Աթոռի<sup>11</sup>:

Աշտարակեցին աշխատում էր Մայր Աթոռի Սինդոի հեղինակությունը բարձրացնել. «Չեցելով որ Ներսէսը Սինդոի ամենակրտսէր անդամն էր, նա իսկույն յոր ձեռքը ձգեց գործերի բոլոր ղեկավարությունը: Նորա առաջին ջանքն եղաւ ստորադրել Սինդոին՝ Ռուսաստանի և Վրաստանի թեմերը, բայց նույնը Տանկաստանի վերաբերությամբ չհաջողեցաւ յուրյան»<sup>12</sup>:

Աշտարակեցին հաճում Եփրեմ կաթողիկոսի որպէս դիվանապետ պաշտոնական գրադարության մէջ էր Մայր Աթոռի և նրա թեմերի վերաբերյալ եկեղեցական, վարչական, կազմակերպչական, կալվածական, կրթական բազում հարցերով, Ռուսաց, Պարսից, Գերմանիայի, Ֆրանսիայի արքունիքների հետ: 1812 թվականին Մայր Աթոռ այցելած անգլիացի հոգևորական Հենրի Մարտինը վկայում է. «Այս մենաստանը (ս. էջմիածինը) կամ ավելի լավ է ասել՝ հայոց ամբողջ ազգը Ներսէսի իշխանության ներքո են... իսկ Եփրեմ պատրիարքը (կաթողիկոսը) տարվա բազում ամիսներում հիւնդիության անկողնում է գտնվում»<sup>13</sup>:

<sup>10</sup> Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգապատում, Բ. հատոր, էջ 3366:

<sup>11</sup> Նույնը, էջ 3412:

<sup>12</sup> Ալեքսանդր Դ. Նիքիցյան, Պատմություն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 7:

<sup>13</sup> Մեթ. Մելքոնյան, Պատմություն կաթողիկոսաց էջմիածին... Մոսկուա, 1876, էջ 306: Ինչպես նաև՝ Ալեքսանդր Դ. Նիքիցյան, Պատմություն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 9:

Աշտարակեցին սիրալիր հարաբերություն էր պահում մանավանդ Վրաց Հերակլ թագավորի հաջորդ Ալեքսանդր արքայորդու հետ:

Աշտարակեցու այս ետանդուն և բոլորանվեր գործունէությունը գրգռում է նրան մրցակից Հովհաննէս Կարբեցու և նրա կողմնակիցների նախանձն ու չարամտությունը: Նախանձողներն վնասկան խցերում բամբասում էին Աշտարակեցուն թե՛ նա վնասքում ամեն ինչ է...

Աշտարակեցին առաջը առնելու համար նման չարամտությունների և մանավանդ բամբասանքների, որոնք հասել էին նաև կաթողիկոսի ակամօր, և նրան տառապեցրել, «չափալորում է» իր ետանդուն գործունէությունը և վշտացած 1814 թվականին հրաժարվում է Սինդոի անդամակցությունից, հեռանում է Մայր Աթոռից «իրեն ազատ գործունէության ապարեզ ստեղծելու համար»<sup>14</sup>:

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻՆ ԱՌԱՋՆՈՐԿՎՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ

1814 թվականի մարտին, Աշտարակեցին 44 տարեկան հասակում, իր հոգևոր ու իմացական ուժերի ծաղկման և հատունդության շրջանում, նշանակվում է վրահայոց թեմի առաջնորդ:

Աշտարակեցու առաջնորդ նշանակումը Թիֆլիսում բնորոշվում է խանդավառորեն, պետական և ժողովրդական շրջանակներում:

Կայսրը իրեն ուղարկված Եփրեմ կաթողիկոսի պաշտոնական գրության և պետական այլ վկայությունների հիման վրա հաստատում էր Աշտարակեցու բնտրությունը: Աշտարակեցին Թիֆլիսում առաջնորդական իր պաշտոնը ստանձնելիս հավատարմության հանդիսավոր երդում էր տալիս «ուսական պետության: Վրաստանի հայոց առաջնորդի կայսրական հաստատումի, շատ կարևոր մի: հանգամանք էր, որը ոչ միայն բարձրացնում էր Առաջնորդի հեղինակությունը, այլ նաև «բարձրագույն կամօք հաստատած» Աշտարակեցին կարող էր փոխվել միայն կայսրի բարեհաճությամբ. (Ալ. Նիքիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք, Թիֆլիս, 1844, Ա մաս, էջ 79):

Այդ օրերին Թիֆլիսի թեմը «վերին աստիճանի անմխիթար դրության մեջ էր»<sup>15</sup>:

<sup>14</sup> Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգապատում, հատոր Գ, էջ 3415:

<sup>15</sup> Ա. Դ. Նիքիցյան, Պատմություն 75-ամեայ... էջ 29:





Երևան և Աշտարակի

Ռուսական տիրապետության հաստատումից 13 տարի հետո էլ, պատերազմները «ծամանակ չէին տված տերությանը քաղաքակրթություն մտցնելու մասին լրջորեն հոգալու»<sup>16</sup>:

19-րդ դարի առաջին քառորդին Թիֆլիսի ազգաբնակչության տվյալ մասը կազմում էին հայերը. «Ի քաղաքն այս Տփլիս թեպետ և զանուն ունի Վրաստան, այլ ամենայն հանգամանօք յստկացեալ լինի տիրապէս քաղաք հայրց»<sup>17</sup>: Միայն Թիֆլիսում այդ օրերին կային 18 հայկական եկեղեցիներ:

Այդ օրերին Թիֆլիսում հայերը բանակապես ավելի ստվար էին, քան Երևանի գավառում<sup>18</sup>: Թիֆլիսում հայությունը կատարում էր երևելի դեր քաղաքի տնտեսական-սոստորական-մշակութային-կրթական և արհեստավորական կյանքում: Վրահայոց թեմում, ըստ Ա. Երիցյանի վիճակագրական տվյալների գործում էին 140 հայկական եկեղեցիներ, 740 հոգևորականներով:

Հակառակ տնտեսական-կրթական բարգավաճ և բարօր այս կյանքին, Թիֆլիսում ոչ հայերը և ոչ էլ վրացիք ոչ մի դպրոց չունեին: Նույնիսկ հոգևորականներից շատերը գրել-կարդալ չէին իմանում:

«Իրաց այդ դրության մեջ հայ հոգևորականությունը տգետ էր, ըմբոստ, անպատկառ, ոչ յուր կարգը և ոչ պատիվը ճանաչող. եկեղեցիք թալանված, ազգային եկամուտները հափշտակված... ազնվականք և իշխանագույնք անուսր... զագրելի վարք ու բարքի տեր, կեղեքիչք և հարստահարիչք ոստիկների և տկարների: Ժողովուրդն ընկրդմած խավարի մեջ, քարոյապես ընկած, օտարամոլության հակված, խղճալի և ցավալի դրության մեջ»<sup>19</sup>:

Այսպիսի դրության մեջ է գտնում Աշտարակեցին իրեն հանձնված Վրաստանի թեմը:

Աշտարակեցին այդպես քաջ և բանիբուն, ճշմարիտ հովիվ, իրեն հատուկ վճռակառությանը, համարձակությամբ և ձեռներեցությանը ձեռնամուխ է լինում իր խնամքին հանձնված թեմի հոգևոր, կրթական, մշակութային, ազգային կյանքի վերականգնման և կանոնավորության աշխատանքներին:

Աշտարակեցին իր առաջնորդական տարիներին Թիֆլիսում ծավալում է եկեղեցաշեն, կրթական-մանկավարժական, ազգա-

յին-հայրենասիրական քեղուն և շնորհակալ աշխատանք:

Աշտարակեցին, ճշում է Օրմանյանը, իր առաջնորդության առաջին տարիներին իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում է այդ մեծ թեմի հոգևոր-եկեղեցական կազմակերպության վրա. «Տփլիս հասնելով և վիճակային կառավարության գլուխ անցնելով, միտքը դրավ զայն կարգ ու սարքի ենթարկել և գլխավորապես երկու կեսերու մտադրություն դարձուց, եկեղեցականներում կենցաղային և մատակարարությանը հսկողության»<sup>20</sup>:

Աշտարակեցու մտածումն էր բարվոքել թեմի հոգևոր կյանքն ու ժողովրդի կենցաղը, արմատախիլ անել հոգևորականության մեջ բույն դրած կենցաղային, արատավոր տուվորությունները, դադարեցնել տգետ և բարոյական մաքուր նկարագիր չունեցող քահանաների ձեռնադրությունը, հիմնել դպրոց, պատրաստել արժանավոր հովիվներ և զարգացած, կրթված ուսուցիչներ:

Աշտարակեցին չի հուսահատվում և խանդավառ ոգով ձեռնարկում է իր առաջնորդական գործունեության: Աշտարակեցին իր գործունեությունն սկսում է հայի եկեղեցական բարեկարգություններից: Նա ամեն տեղ կարգ ու կանոն է մտցնում, ուր իրենից առաջ տեղ ու տնօրենություն էին անում անուս, քոճակալ, մի քանի իշխաններ և մեծահարստներ, «միանգամայն ստրկացնելով ոչ միայն քաղաքի քահանայներին, այլև արքեպիսկոպոսներին, առաջնորդներին»<sup>21</sup>:

Աշտարակեցին այս հարցում դիպչելով նրանց նյութական և բարոյական շահերին, հանդիպում է լուրջ դիմադրությունների: Այ. Դ. Երիցյանը հայտնաբերում էր իր նկրթել «Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում» իր արժեքավոր աշխատության մեջ (էջ 74—137), Աշտարակեցու պայքարին իշխանների և տգետ քահանաների դեմ:

Աշտարակեցու թեմում կատարած եկեղեցական, վանական-վարչական բարեկարգության համաձայն էր նաև Եփրեմ կաթողիկոսը, որը գրում էր Աշտարակեցուն, թե՛ արդարությունը, իրավունքը, օրենքը, կայսերական բարեհաճությունը քո կողմն են և դու քո ընձածն հանձնարով «խրախ կարող ես խորտակել մինչ իսպառ զգործութիւն ի նաւնիր հակառակութեան նոցա և ոչ որ կարի

<sup>16</sup> Երիցյան, նույնը, էջ 30:

<sup>17</sup> Պ. Հ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան, Երևան, 1967, էջ 159:

<sup>18</sup> Նույն տեղ, Ա. Նեգրիի վկայությունը, էջ 159:

<sup>19</sup> Ա. Դ. Երիցյան, Պատմություն 75-ամեայ..., էջ 31:

<sup>20</sup> Մաղ. արքեպ. Օրմանյան, Ազգապատում, Գ հատոր, էջ 3424:

<sup>21</sup> Ա. Դ. Երիցյան, «Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք», Թիֆլիզ, մասն Ա, 1894, էջ 76:



ընդդէմ կալ քեզ յաղագս բարեկարգելոյ զվիճակս»:

Աշտարակեցիին հաճում օրենքի և կանոնավորության յորջ ընդհարում է ունենում մանավանդ իշխան Դարչի հեճորտյանցի և նրա հովանավորած տգէտ ավագ քահանաների հետ և վերջ դնում նրանց կամայականությանը և ժառանգական, անիրավ իրավունքներին և բազում ղովարություններով կարողանում է արմատախիլ անել Թիֆլիսի ազգային-եկեղեցական կամքում աղայական և քահանայական կամայականությունները և թեմը դնում իր կազմակերպչական բարձրության և կանոնավորության վրա:

Աշտարակեցիին 1838 թվականին նախարար Բլուտովին գրած մամուլում վկայում էր, որ ինքը Թիֆլիսի առաջնորդությունը ընդունելով գիտեր, որ հանդիպելու էր «յոյժ դժուարության», բայց հույսը որած «անկասկածելի հովանաորութեանց ամենաբարեպաշտ հօգոր տերութեանս Ռուսաց», սիրով հանձն է առել «ամենայն նեղություն և անձկություն անձնական», որպեսզի կարենա իր առաջնորդության տարիներին օգտակար լինել իր ժողովրդին, «չիմում հայրենի ազգին», որ հավատարիմ մնա իր հայրենի ավանդություններին, «ի ներքոյ պաշտպանությանը յուսպի հովանաորութեանց Տէրութեան անվտանգ յամենայն հակառակորդաց, արձան օրինական ապագայից վիճակաւորաց հայոց»<sup>22</sup>:

Կովկասի փոխարքան, Ռոիշչևը որք անձնապես ծանոթ էր Աշտարակեցու գործունեությանը, պաշտպանում էր նրա կարգ ու կանոն հաստատելու ջանքերն ու վճռականությունը:

Դեռևս 1786 թվականին Հովսեփ արքեպ. Արդդյանցը կազմել էր Ռուսաստանի հայոց համար «կոնսիստորիա»-ի կանոնադրությունը և իր շրջաբերականում հրահանգում էր, որ ամբողջ ռուսական իշխանության մեջ «կառավարություն եկեղեցեաց մերոց կակի ի արբանագունից Հայրապետութեան մերոց որք մասին ի սուրբ Աթոռն մեր լեզվիածին»:

Թեև 1809 թվականին Թիֆլիսի հայոց թեմի համար էլ ստեղծվել էր «կոնսիստորիա», և «այլ հոգևորական դատարան», որպեսզի Ռուսաստանում հայ եկեղեցիները ղեկավարվեն զբոս օրինի իրեանց, բայց այդ կանոնադրությունը չկարողացավ իր դերը կատարել Թիֆլիսի հայոց եկեղեցական

կյանքում մեծահարուստների և շահամոլ մի քանի ավագ քահանաների կամայականությանը և անձնական շահերի պատճառով: Աշտարակեցիին իր առաջնորդության տարիներին Թիֆլիսի թեմի առաջնորդի իշխանության է ենթարկում մաս Հաղպատի և Սանահին վանքերի անկախ արքեպիսկոպոսությունները, կազմակերպելով իր թեմը, որը «այն ժամանակ էլ արդեն բավական ընդարձակ էր և Գանձակից մինչև Սև ծովն էր տարածվում»<sup>23</sup>:

ԱՇՏԱՐԱԿԵՑԻՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀԱՅՈՑ  
ՀՈԳԵՎՈՐ ԴԴՐՈՅԸ

Ներսես Աշտարակեցու սրտի սրբազան հրաշյուքներից մեկն է եղել սերը դեպի ուսումն ու կրթությունը, հառաջդիմությունն ու գիտությունը:

Աշտարակեցիին արդարեմ համարվում է ժԹ դարի տաաական թվականներից հայ կրթական և մշակութային հաստատությունների հիմնադիրն ու ոգեշնչող ղեկավարն ու կազմակերպիչը:

Կրթական գործը որպես ժողովրդի լուսավորության և հառաջդիմության միջոց, վաղուց գրավել էր Աշտարակեցու ուշադրությունը: Դեռևս 1807 թվականին երբ Աշտարակեցին Նոր Նախիջևանում առաջնորդական փոխանորդ էր, նա մտածում էր այդ հայաբնակ քաղաքում մի ազգային ուսումնարան կառուցանել: Այդ ուղղությամբ նա կատարում է նաև նախապատրաստական աշխատանքներ, և անձամբ ինքն է կազմում ապագա ուսումնարանի ծրագիրը, «Գաղափար կանոնագրին ուսումնարանի, շարագրելով ի Ներսես վարդապետը, 1807 մինի ի 5 դեկտեմբերի, ի Նոր Նախիջևան»<sup>24</sup>:

Սակայն Աշտարակեցին Նոր Նախիջևանում ժամանակ չի ունենում ուսումնարան բանալու և 1808 թվականին վերադառնում է Մայր Աթոռ:

Եփրեմի օրով Աշտարակեցին Մայր Աթոռում, 1809 թվականին, բացում է մի նոր «ժառանգավորաց վարժարան», հայկաբան 50 աշակերտներ «ի բոլոր բնակյաց Արարատայ Հայոց»: Լուսամիտ Աշտարակեցին ծրագրել էր, ինչպես ինքն է վկայում, Մայր Աթոռում բանալ «համալսարան» 200 ուսանողների համար և «չորս լեզուի վարժապետաց կարող լիցուք կանխա յառաջացուցանել ի փառս Աստուծոյ և ի պատիւ ս. Լուս-

<sup>23</sup> Ա. Գ. Երիցյան, Պատմություն 75-ամալ..., էջ 31:

<sup>24</sup> Ա. Գ. Երիցյան, Պատմություն 75-ամալ..., էջ 11—24:

<sup>22</sup> Ա. Գ. Երիցյան, Պատմություն 75-ամալ..., էջ 32:

ատորչին լուսափայլ անուանն և ի պարծանս Մայր Աթոռոյն և ազգի մորա»<sup>25</sup>:

1838 թվականին Աշտարակեցին Բլուրով նախարարին գրած իր նամակում վկայում էր. «Քառանայա հասակից տեսնելով և յսելով մեր ազգի մեջ գիտնական մարդկանց և զգալով ուսումնարանների չգոյության պատճառով իմ ազգի դժբախտությունը, իմ միտքն ու մտածումները տազանայեցնում էին ինձ՝ մտածելու ուսումնարաններ քանակուկարևոր հարցի հնարավորությունների մասին»<sup>26</sup>:

Աշտարակեցին աշխատում էր Մայր Աթոռում վերականգնել Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրով բացված դպրոցները: 1813 թվականին Մայր Աթոռի դպրոցը քավականին բարեկարգ վիճակում էր, Աշտարակեցու խնամքի ներքո:

Մայր Աթոռի ժառանգավորաց վարժարանում այդ օրերին դասավանդում էին «եկեղեցական ընթերցմունք», երաժշտություն, քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն, ս. Գրքոց մեկնություն, աստվածաբանություն:

Սիմեոն Երևանցին իր դպրոցը շինել էր Մայր տաճարի հյուսիսայնի կողմում, մոմատանը մտնել: Աշտարակեցին 1809 թվականին իր ուսումնարանը տեղավորում է Տըր-դաստի դարբասի վերևում եղած ընդարձակ սրահում և ապա 1813 թվականին կառուցում է վարժարանի նոր շենքը՝ Մայր տաճարի արևմտյան կողմում՝ քաղկացած երեք սենյակներից, մեկը որպես ննջարան, իսկ երկուսը՝ որպես դասարաններ: Դժբախտաբար Մայր Աթոռի այս նոր դպրոցը անուշադրության է մատնվում, երբ Աշտարակեցին որպես առաջնորդ մեկնում է Թիֆլիս: Մյուս կողմից Աշտարակեցին համոզվում է նաև, որ ս. Էջմիածնի դպրոցը միայնակ չի կարող քավականություն ստալ ընդհանուր ազգի կրթական գործին, որով և թեմերում էլ անհրաժեշտ է քանակ ուսումնարաններ:

«Առաջին մարդը, որ լրջորեն զբաղվեց վրահայոց լուսավորության և սպազգայնացման առաջն առնելու խնդրով, էր Ներսես Աշտարակեցին, մեր նոր պատմության պատկանելի անուններից մեկը»<sup>27</sup>:

Վրահայոց առաջնորդության տարիներին Աշտարակեցու թեմական գործունեության փառավոր ու կրթողային մեծագործությունն է հանդիսանում Ներսիսյան դպրոցի բացումը:

1814 թվականի վերջերին Աշտարակեցին Թիֆլիսում հրավիրում է մասնավոր մի ժողով, որին ներկա են լինում բազում իշխաններ, սեմահարուստներ, առևտրականներ, հոգևորականներ, և նրանց քաջատրույն է վրահայոց հոգևոր կյանքն ու կենցաղը բարելավելու, եկեղեցին պաշտասցնելու, «ազգի թանձրացալ տգիտությունը» փարստելու և ժողովրդին լուսավորելու, հոգևորականությանը իր դերին և կոչման քարձրության վրա դնելու համար մի ուսումնարանի բացման անհրաժեշտությունը:

1815 թվականի հունիսի 16-ին Աշտարակեցին Մոսկվա՝ Հովհ. Լազարյանին գրած իր նամակում նշում էր, որ դպրոցն է «աղբիւրն համազգային քարեաց», և եթե Թիֆլիսի հայությունը շարունակի մնալ առանց ուսումնարանի, ապա ուրեմն «ի քաղում դարս աշակես գրկեալ գտանի ողորմելի ազգ մեր ի փառաց»:

Այդ օրերին «թե՛ վրացիք և թե՛ հայք ոչ մի դպրոց չունեին... հոգևորականները գրեկարդալ չգիտեին... անքարեկարգությունը տիրում էր ամեն տեղ, և բոլորի սկզբնապատճառը այն խորը տգիտությունն էր, որի մեջ ընկղմված էր ամբողջ Վրաստանի հայ և վրացի ազգաբնակչությունը»<sup>28</sup>:

Վրահայոց կրթական-մշակութային աննյութարար լինակի մասին վկայում է նաև Մեսրոպ Թադևոսյանը. «Ներսեսից առաջ, հայերը առհասարակ խտում էին վրացերեն, և չկար մեկը որը գիտնար Ազգի լեզուն. իսկ նրա (Աշտարակեցու) այնտեղ գալուց հետո և Ազգի մեջ ուսումը ծաղկեցնելուց հետո, վրացիներն անգամ սովորեցին հայերեն խոսել»<sup>29</sup>:

Դպրոցի բացման հիմնական դժվարություններից մասշինը նյութականի հարցն էր: Աշտարակեցին կարիքն ուներ շուրջ 30000 ուրլու՝ դպրոցի կառուցման համար: Նա հաշվում էր, որ եթե Վրաստանի թեմում ապրող ունևոր 6000 հայերից վճարի յուրաքանչյուրը միանվազ մի-մի ուրլի, կաղախա ուրեմն 6000 ուրլի, իսկ ինքը մնացած գումարը կհոգա հանգանակությանը՝ դիմելով Ռուսաստանի, Հնդկաստանի և Կ. Պոլսի հայության: Աշտարակեցին նշում էր նաև, որ Ռուսաց արքունիքը ևս մի մեծ գումար կտրամադրի հոգուտ ժողովրդական լուսավորության, և այսպես գլուխ կգա մեծ գործը:

Աշտարակեցին իսկույն խտրեց անցնում է գործի և 1816 թվականին ժամանակավոր-

<sup>25</sup> Նույնը, էջ 9, 25, 26:


<sup>26</sup> Ա. Դ. Երիցյանց, Պատմություն 75-ամեայ..., էջ 24-25:

<sup>27</sup> Պ. Հ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան, 1967, Երևան, էջ 162:

<sup>28</sup> Ա. Դ. Երիցյանց, Պատմություն 75-ամեայ..., էջ 29-30:

<sup>29</sup> Մ. Թադևոսյան, Ճանապարհորդություն ի Հայս, էջ 311:





Ներսես Ե Աշտարակեցի

բապեա մի դպրոց է բացում Թիֆլիսում, Վանքի եկեղեցու հյուսիսային կողմում, «Քոշկ» կոչված խցերում, և ուր հավաքում է շուրջ 20 աշակերտներ և քահանայացուներ, բոլորն էլ քահանաների զավակներին: Ուսուցիչ է կարգում վաղարշապատցի ուսումնասեր և հայրենասեր Հովհանն ավագ քահանա Ոսկերչյանին:

1817 թվականին Աշտարակեցին որպես ուսուցիչ հրավիրում է ժամանակի ծանոթ հայկաբան և գիտնական դարադարձի Պողոս վարդապետին:

Աշտարակեցու բացած «Քոշկ»-դպրոցի առաջին աշակերտներն են յինում Խաչատուր Աբովյանը, Ստեփանոս Նազարյանը, Առաքել Արարատյանը և ուրիշներ:

Ստեփանոս Նազարյանը հետևյալն է վկայում այդ դպրոցի ուսման որվածքի մասին. «Նորա խցի մեջ աշխատում էինք օր ու ցերեկ գլուխ ջարդելով 2-ամյանի քերականության, Ազոնցի ճարտասանության և Թեսալոնիկի վրա»<sup>30</sup>:

1818 թվականին Աշտարակեցին մտածում էր դպրոցի նոր շենքի կառուցման մասին. 'Նա Մոսկվա' Հովհ. Լազարյանին գրած նամակում նշում էր, որ թեև բացել է դպրոցը, բայց մեծ դպրոցի շինությունը «տակաին ի միտս իմ գտանի հիմնեալ»: Բայց միաժամանակ հույս էր հայտնում, որ «Տեսուն գործակցությամբ» շուտով իրեն կհաջողվի «առնել գրիմանոր տնօրենություն»:

Ըստ Աշտարակեցու ծրագրի, նոր դպրոցը պետք է ունենար շուրջ 800 աշակերտություն: Նա մտածում էր կառուցել շենքը, այն նյութապես ապահովել հաստատ եկամուտներով, իջևանատների և խանութների կառուցումներով և ունենալ մեծ ուսուցչական դասախոսական կարող անձնակազմ, մասնագիտական կրթության:

1822 թվականի փետրվարի 7-ին, ս. Ղևոնդյանց տոնի օրը, Աշտարակեցին հանդիսավոր իրադրության մեջ և խանդավառ մթնոլորտում Ցամուրկայի, այժմյան Վոլխովային հրապարակում, հայ և այլազգի ակադեմիկոսի անձանց ներկայությամբ կատարում է, ապագայում 1861 թվականին Մատթեոս Ա. կաթողիկոսի կողմակցով արդարորեն իր աճունը կրող՝ Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի հիմնադրելիք ի ներկայության պետական բարձրատիպ անձնակազմությունների՝ 8 գեներալների և Վրաստանի կառավարչապետ և իր բարեկամ գեներալ Երմոլովի: Ժեների կառուցման արժեքը կազմում էր 40000 ռուբլի:

1824 թվականի սեպտեմբերի 1-ին արդեն պատրաստ էին նորակառույց դպրոցի եր-

կու հարկերը: Վանքի դպրոցը անմիջապես փոխադրվում է այնտեղ:

1824 թվականի դեկտեմբերի 1-ին Աշտարակեցին մեծ հանդիսությամբ կատարում է Ներսիսյան դպրոցի հանդիսավոր բացումը:

Նորաբաց դպրոցի առաջին տեսուչ է նշանակվում Լազարյան ճեմարանից հրավիրված ժամանակի նշանավոր գրականագետ Հարությունը քնն. Ալամդարյանը, որը մեծ նվիրումով և արդյունավորությամբ աշխատում է մինչև 1830 թվականը:

Ալամդարյանի տեսչության օրով, 1828 թվականին, Ներսիսյան դպրոցը տալիս է իր առաջին շրջանավարտները, որոնց թրվում էին Խաչատուր Աբովյանը, Ստեփանոս Նազարյանը, Հովհ. Հովհաննյանը, Հովհ. Թորոսագանյանը և ուրիշներ:

Ներսիսյան դպրոցում էլ, ինչպես Մոսկվայի Լազարյան ճեմարանում, հիմնական հարցերից մեկն էր ազնիվ, մասնագետ և կարող ուսուցիչների պակասը: Աշտարակեցու համար էլ գլխավոր հոգսը մնում էր ուսուցիչներ գտնելը:

Դեռևս 1800-ական թվականներից հիմնական հարցն էր ուսուցիչներ ունենալու հայ դպրոցների համար. «Որտեղի՞ց վերցնենք հայ ուսուցիչներ», գրում է Խաչատուր Լազարյանը Աշտարակեցուն՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանի բացման առթիվ, երբ «պատրաստ է դպրոցի շենքը, կան և երևի խաներ, դրամ՝ տնօրեններին պահելու, սնունդանելու, հագցնելու, գրեմական պիտույքների, գրքերի ու ուսուցիչների աշխատավարձի, քաջ որտեղի՞ց վերցնենք հայ ուսուցիչներ»: Այդ առթիվ շատերը մտածում էին, որ Մայր Աթոռ կարող է պատրաստել լավագույն ուսուցիչներ, դպրոցների համար:

Դպրոցական շենքից և դասախոսական կազմից ոչ պակաս կարևոր էր մեծ դասարանների խնդիրը: Աշտարակեցու գործնական միտքը լուծում էր մեծ դասարանի խնդիրը: Հայ ժողովրդի «մտավոր գարգացման համար երկու մեծ գործոններ կալին, դպրոց և տպարան»<sup>31</sup>, գրում է Լեոն:

Աշտարակեցին էլ իր կրթական-դաստիարակչական, յուսավորողական գործը սկսում է դպրոցից և տպարանից:

Մոսկվայում Լազարյանները 1814 թվականին իրենց հիմնած ճեմարանի կողքին հաստատում էին մեծ տպարան:

Աշտարակեցու «ցանկությունն էր յուր մտածած ուսումնարանին կից ունենալ մի տպարան... Շոխացնել մեր գրականությունը նորանոր տպագրություններով... տպարան մի արդյունավոր ճեմարանություն կլինե՞ր և

<sup>30</sup> «Հիսիսափայլ», 1858 թ., № 2:

<sup>31</sup> Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 91:



ուսումնարանի նյութական և ապահովագրող շահավետ աղբյուր կարող էր համարվել»<sup>32</sup>։

Վանեցի Գևորգ աղա Արծրունին՝ Աշտարակեցու բարեկամներից մեկը, 1826 թվականին Ամստերդամում գնում է Ուկլան վրդերեանցու «բազմադյուն հին տպարանը» և այն քեղելով Թիֆլիս նվիրում է Աշտարակեցուն։ Ներսիսյան դպրոցի կողքին 1826 թվականից սկսած գործում է նաև տպարանը՝ «Տպարան ուսումնարանի Հայոց ընծանցելոյ լազնուական Գեորգայ Երեմեան Արծրունույ» անունով։

Տպարանում իսկույն հրատարակվում են Ներսիսյան դպրոցի ուսանողության համար դասագրքեր, որոնք աղքատ ուսանողներին բաշխվում են ձրի։ Մինչև 1829 թվականը տպարանից հրատարակվում են 30 անուն գրքեր, 18000 տպաքանակով<sup>33</sup>։

Աշտարակեցու կազմած ծրագրով և կարգադրությամբ Ներսիսյան դպրոցը ունենում է նաև իր գիտական եռամսյա թերթը՝ «Տարեգրություն Հայոց գրագիտական» անունով, որին իրենց աշխատակցությունը պետք է բերեին Ներսիսյանի դասախոսներն ու հաշտադեմ ուսանողներն իրենց գիտական, պատմա-բանասիրական և հայագիտական աշխատանքներով։

Ահա ուսումնա-դաստիարակչական գործունեության մի ամբողջական և կոտ ծրագիր։

Մինչև 1827 թվականի դեկտեմբերը ամենալավ ինչ ընթերցում էր բարեհաջող։ 1828 թվականի ռուս-պարսկական պատերազմից հետո ամեն ինչ շուտ է գալիս։ Աշտարակեցին աքսորվում է, Ալամդարյանը՝ հայաձուլվում, Ներսիսյան դպրոցը մատնվում է անուշադրության և դատապարտվում անգործության։ Տպարանը փակվում է, մինչև 1843 թվականը, երբ Աշտարակեցին ընտրվում է կաթողիկոս։

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻՆ «ՊԱՇՏՊԱՆ  
ՀԱՅՐԵՆԵԱՅ»

Ս. Էջմիածնում, Մայր տաճարի զանգակատան հարավային մասում, կաթողիկոսների դամբարանների շարքում, գտնվում է Աշտարակեցու շիրմաքարը՝ հետևյալ մակագրությամբ.

Պաշտպան Հայրենեաց  
կաթողիկոս Ամենայն Հայոց  
Ներսէս Ե Աշտարակեցի

ծննալ ի 18 փետրուարի 1761\*

վախճանալ ի 18 փետրուարի  
1857

Աշտարակեցին «Պաշտպան Հայրենեաց»։ Այս ճշմարիտ բնութագիրը արտահայտությունն է հայ ժողովրդի երախտագիտական զգացմունքների և խոստանում է իր մեջ ամբողջական ձևով Աշտարակեցու հայրենասիրական ողջ գործունեությունը։

Աշտարակեցին եղել է շարունակողը հայրենասեր այն եկեղեցականների և աշխարհականների գործունեության, որոնք Խալայե Օրոց սկսած ճշմարիտ և իրապաշտ քաղաքականությամբ հայ ժողովրդի ազատությունն ու Հայաստանի ազատագրումը պարսկական և օսմանյան լծից կապում էին անվերապահորեն Ռուսաստանի հետ։

Հայրենասիրությունը Աշտարակեցու հոգու ամենախորը հրայրքն է եղել դեռևս Էջմիածնում, ուսանողական, երիտասարդական տարիներից։

Աշտարակեցին միշտ մտածել է «ի փառաց զրկեալ ողորմելի» մեր հայրենիքի և ազգի «ապարխատության» մասին և ծրագրել է հայ ժողովրդի ազատությունն ու ազատագրումը իր «բազմամեալ փորձառութեամբ» և «հարուստ լուսով անկասկածելի հովանառութեանց ամենաքարեպաշտ հրգոր Տէրութեան Ռուսաց», ինչպես ինքը վկայում է նախարար Բլոդովին գրած իր նամակում։

1850 թվականի մարտի 11-ին կոմս Վորոնցովին գրած իր նամակում Աշտարակեցին վկայում է նաև, որ 1825 թվականին Էջմիածին է այցելում Հնդկաստանից եկած անգլիացի միսիոներ Ժոզեֆ Վոլֆը, որը Եփրեմ կաթողիկոսին և իրեն առաջարկում է ընդունել անգլիական հովանավորությունը։ Աշտարակեցին համուն կաթողիկոսի և Մայր Խորհրդի Վոլֆին տվել է հետևյալ կրտուրի և ճշգրիտ պատասխանը.

«Ինչ 200 տարի առաջ հայը հովանավորություն սպասում էր միայն Ռուսաց պետությունից, թե մեր նախնիքներն ու հայրերը, չարժանավաճյալ այդ հովանավորության, կտակեցին իրենց երախտներին թե երբ կգա այդ հովանավորությունը, հայտնեն իրենց գերեզմաններին և այն ժամանակ կհամարաւանա իրանց աճյունը։ Եվ այժմ, երբ արդեն եկել է մեզ մոտ ապամոռ հովանավորությունը և մենք բախտ ունենք նրանից օգուրվելու, էլ ի՞նչ կարիք կա ուրիշ պետության հովանավորությունը որոնելու։ Ռուսաց կայսրը ինքը հոգ կտանի հայ ժողովրդի բարօ-

<sup>32</sup> Ա. Գ. Երիցյան, Պատմություն 75-ամեա... էջ 118։

<sup>33</sup> Նույնը, էջ 127։

\* Հստ վերջին ուսումնասիրությունների, Աշտարակեցին ծնվել է 1770 թ.։

րության մասին և Նորին Մեծության բարձրագույն հովանու տակ եւ ինքս կարող եմ ամենուրեք, ուր որ հարկավոր է, հիմնել և բաց անել դպրոցներ, որոնց մեջ կալանդվեն հայոց դավանությունն էլ, լեզուն էլ, մի խոսքով, Ռուսաց կառավարությունն ինքը կանի մեզ հայերիս համար այն ամենը, ինչ կարող է ամրապնդել հայ ժողովրդի բարեկեցությունը և բարօրությունը»<sup>24</sup>:

1826 թվականի հուլիսին արքայորդի Արքա-Միրզայի առաջնորդությամբ պարսիկները նենգաբար հարձակվում են ռուսական ամրամասների վրա, երբ դեռայան Մեչևիկովի գլխավորությամբ ռուսական պատվիրակությունը խաղաղասիրական ոգով բանակցություններ էր վարում Թեհրանում: 1827 թվականին սկսվում է ռուս-պարսկական պատերազմը, որտեղ Աշտարակեցուն վիճակվել էր կատարել հայդեմասիրական փառավոր, անմոռաց, հերոսական գործունեություն:

Թիֆլիսում կառավարչապետ Նրմուլովի գլխավորությամբ կազմվում է զինվորական խորհուրդ, որի կազմում էր նաև Աշտարակեցին, «իբր միակ մարդը որ կրնար տեղական տարրը շարժման մեջ դնել»<sup>25</sup>:

Աշտարակեցին այս առթիվ 1826 թվականի հուլիսի 29-ին գրում էր իր ղեկավար շրջաբերականը, հայոց պատմության հերոսական դրվագների ոգեկոչմով, նկարագրում և շեշտում էր ստեղծված վտանգավոր և օրհասական կացությունը, բարձրացնում էր պարսկական բռնակալության դեմ ռուսական պաշտպանության կարևորությունը և երախտագիտություն ու հավատարմություն հայտնելով ռուսներին, հորդորում էր բոլորին զենք բարձրացնել հասարակաց թշնամու դեմ, մակարայեցիների և Վարդանանց հերոսական ոգով. «Մեղցուր բաջուրեանք ի վերայ եղբարք մերոց, և ոչ խառնեցուր զանուն վատութեան ընդ արութիւնս բաջութեան»: Աշտարակեցու շրջաբերականը ավարտվում էր հետևյալ պատմական կոչով. «Դիմադրեցեք թշնամուն և սորա արքան յակներին, կամ ռուսաց զորքերի հետ միասին և կամ թե մի ուրիշ կերպ, որ ավելի հարմար կլինի ներկա ավազակորեն հարձակմանց միջոցին, իսկ եթե հարկ լինի մի խնայեք ձեր արքան վերջին կաթիլը»<sup>26</sup>:

Այնուհետև Աշտարակեցին խոսքից անցնում է գործի, կազմակերպում է հայկական կամավորական գունդ, որը մինչև ռուսական

բանակի ժամանումը հերոսաբար դիմադրում է պարսկական հարձակումներին: 1827 թվականի մարտին Պասկևիչը նշանակվում է պարսկական արշավանքի գլխավոր հրամանատարը:

Սկսվում է խուլ պայքար ցարական չինովնիկ և մեծամիտ և փառասեր Պասկևիչի և Աշտարակեցու միջև. Պասկևիչի և այլ հայախներ ռուս զորավարների և հայ իշխանների միջև:

1827 թվականի մարտին արդեն պատաստ էր Աշտարակեցու կազմած հաջադուհը, Երևանի վրա գնալու համար: Մարտի 30-ին Թիֆլիսում կատարվում է հանդիսավոր գորհաժամոց: Աշտարակեցին ձիու վրա նստած, «արտաշատ ճառով ոգևորեց յուր զինվորներին, օրհնեց և հրամայեց աճցնել յուր առաջ բանի մի անգամ ռազմավար ձեւով: Տեսարանը սքանչելի էր: Այեկարդ եպիսկոպոսիս «ապրի՛ք, քաջեր, շնորհակալ եմ» ձայն տալուն՝ երաժշտությամբ անցնող գունդը պատասխանում էր «կեցցեք»-ներով և «տուա»-ներով և հայ զինվորաց աշուղական խառնվում էր բազմաթիվ հանդիսատես ժողովրդի հրճվածաց ձայնը»<sup>27</sup>: Աշտարակեցին իր հայրենասիրական գործունեության համար արժանանում է կայսրի մասնավոր երախտագիտության: Այս առթիվ կայսերական հրովարտակը մեծ հանդիսությամբ կարդացվում է Վանքի եկեղեցում, ուր և խանդավառ ճառով հանդես է գալիս Աշտարակեցին:

1827 թվականի մայիսի 15-ին, երկրորդ ծաղկազարդի օրը, Վանքի մայր եկեղեցում տեղի է ունենում գորբերի ու «Հալոց զինվորության ինքնակամ-կամավորական-զինի» երդման հանդիսավոր արարողությունը, բաժնում ռուս զորավարների ներկայությամբ և Աշտարակեցու նախագահությամբ, ինչպես նաև դրոշակների օրհնությունը:

1827 թվականի ձմեռը Աշտարակեցին անթիվ նամակներով ավետում էր ողջ հայության Հայաստանի ազատագրության յուրը. «Հասալ ժամը,—գրում էր նա,—երբ աչքով պիտի տեսնենք Աբարաուսյան աշխարհի և հայոց ազգի ազատությունը: Հասալ ժամը, երբ Մայր Աթոռը պիտի վերականգնե յուր վաղեմի անկախությունը: Ոտքի կանգնեք, հայոց քաջեր, թոթափեցեք պարսից յուժնը, ուրախացեք անգարող Մասիսին, մի աճաճա սրբույնով ներկեցեք հայրենի հողերը և ապա արդեք ազատ... ժամ է արդեն, օճ անոր, հիմա՛ կամ երբեք»:

Աշտարակեցու ծրագրով հալագնդի կազ-

<sup>24</sup> Գրքն Հայրապետական Դիվանի, 1845 թ., № 12. Գում' Ան, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 96—97:

<sup>25</sup> Օրմանյան, Ազգապատում, էջ 3492:

<sup>26</sup> Ա. Դ. Երիցյան, Պատմություն 75-ամեայ..., էջ 237—343:

<sup>27</sup> Ա. Դ. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսություն և կովկասաբայ, էջ 271—272:





Պիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցի 75-ամյակի առթիվ հրատարակված գրքի շապիկը

մոլորությունը ուներ քաղաքական և ռազմական մեծ նշանակություն, որպես զինակից և դաշնակից ռուսական բանակին, Երևանի գրավումից հետո «հաղթության օգտակետում մասնակցելու իրավունք ունենալու»<sup>35</sup> համար, մի բան, որը երբեք հաճելի չէր Պասկևիչին:

1828 թվականի գարնանը ռուսական բանակն ու հայազունըր անցնում էին հարձակման:

Ապրիլի 13-ին գրավվում է Էջմիածինը: Միաբանությունը խաշով ու խաչվառով դիմավորում է ազատարար բանակին: Մայր տանձրույն տեղի է ունենում գոհարանական մաղթանք, ուր հանդես է գալիս Աշտարակեցին իր ոգեշունչ ճառով՝ նշելով «օրվա հաղթանակի պատմական նշանակությունը»:

Աշտարակի և Սարդարապատի հաղթական կոիվներից հետո, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին, նույն ամսի 23-ին, պաշարվում է Երևանը, որն իր դռները բացում է հաղթական ռուս և հայ զորքի առաջ հոկտեմբերի 1-ին: Հոկտեմբերի 2-ին, կիրակի, «Երևանի պարսիկ առաջ Պասկևիչի և բոլոր ռուսական բանակի ներկայությամբ Աշտարակեցին մեծ հանդեսով գոհարանական մաղթանք է կատարում... մինչ թոճառնոթները ավետում են Էջմիածնի և Երևանի հայկական նահանգների կազմությունը ռուսական հովանավորության և տիրապետության ներքո և կայսրի անվան և տիտղոսների վրա ավելանում էր նաև Հայաստան անունը»:

Նոյեմբերի 26-ին Էջմիածնում Սինոդի փոխարեն հաստատվում էր ժամանակավոր կառավարություն՝ Աշտարակեցու գլխավորությամբ:

Էջմիածնի և Երևանի համար կազմվում էր ժամանակավոր երկրամասային վարչություն՝ Աշտարակեցու բարեկամ զորավար Կրասովսկու նախագահությամբ, որին որպես խորհրդական մասնակցում էր նաև Ներսես Աշտարակեցին:

1828 թվականի հունվարի 26-ին Աշտարակեցին Ռուսաց կառավարության մատուցած իր ծառայությունների համար կայսրի կողմից պարգևատրվում էր Սկեբսանդու Նևսկու առաջին կարգի շքանշանով:

1828 թվականի փետրվարի 10-ին Թուրք-մենչայի դաշնագրության ստորագրությամբ ռուս-պարսկական պատերազմը ավարտվում էր: Աշտարակեցու նախաձեռնությամբ և ջանքերով շուրջ 40.000 պարսկահայ գաղթականներ հաստատվում են Հայաստանում: Հայ ժողովուրդը և Աշտարակեցին իրենց սրբազան պարտքը կատարել էին դեպի

Ռուսաստանը: Այժմ հատուցման ժամը հասել էր: Պասկևիչը, սակայն, մեկզարար դավում էր հայ ժողովրդի և Աշտարակեցու դեմ: Նրան պետք էր Հայաստանը առանց հայության և Աշտարակեցու: Պասկևիչը «նախարարաց առաջ նկարագրում էր Ներսեսին որպես մի չարամիտ անձն, որ գաղտնի դիտավորություններ ունի, հալերից զորք է հավաքում 25 տարի ծառայելու պայմանով, որպեսզի խառնակություն գցի ժողովրդի մեջ» (Ա. Երիցյան, էջ 375):

Պատերազմից անմիջապես հետո Պասկևիչը ծրագրում է և հաջողացնում Կրասովսկու և Աշտարակեցու հետացումը հայաբնակ վայրերից: 1828 թվականի փետրվարի 21-ին Կրասովսկին հեռացվում է իր պաշտոնից: Մարտի 5-ին Պասկևիչը Աշտարակեցուն ազատում է Երևանի ժամանակավոր վարչությունից՝ նրան ամբաստանելով որպես Կովկասում ռուսական շահերի թշնամի: Պասկևիչի թելադրությամբ և կայսրի «կամօքն» Աշտարակեցին նշանակվում է Քեսարաբիլի թեմի առաջնորդ, ուր նա հասնում էր 1828 թվականի հոկտեմբերի 16-ին:

#### ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻՆ ԱՅՈՒՐԱԿԱՆ

Մինչև այժմ դեռ հանգամանորեն չի լուսաբանվել Աշտարակեցու հետացումը հայաբնակ վայրերից և նրա 15-ամյա «պատվավոր» արքայությունը Քիչևն.

«Առեղծվածի պես բան մը մնացած է Ներսեսի Տփղիսե վտարվիլը կառավարության կողմից, քաղաքավարի, քայց և բրոնադատիչ ձևով»<sup>36</sup>:

Պասկևիչի անձնական հակառակորդությունը Աշտարակեցու դեմ չի կարող վնասական գործոն հանդիսանալ այս հարցում:

Օրմանյան սրբազանը նշում է, որ Աշտարակեցու «առաքարեզևե հեռու պահվելուն բուն հեղինակը Պասկևիչի հետ նախարարությունն ալ եղած է»<sup>37</sup>: «Պասկևիչ Նիկողայոսի (կայսրի) անունով, կամ Նիկողայոսը Պասկևիչի ձեռքով որոշ ակնկալություններ ներշնչած են Ներսեսին, պարսիկներեն առնված հայկական գավառները ինքնավար ձևի մը վերածելու ռուսական հովանավորության ներքև» (Օրմանյան, նույն տեղ, էջ 377), որից հետո հրաժարվել են: Իրեն գաղտնիքի լուծման բանալի վկայվում է նաև, որ Աշտարակեցին մինչև իր կյանքի վերջը «ձախ ծոցի գրպանում պահում էր մի թուղթ, որից չէր բաժանվում գիշեր և ցերեկ» և սովորություն ուներ կրկնելու հառաջանքով, որ «Պասկևիչը ահա այստեղ է

<sup>35</sup> Օրմանյան, նույնը, էջ 3499:

<sup>36</sup> Օրմանյան, նույնը, էջ 3587:

<sup>37</sup> Օրմանյան, նույնը, էջ 3550:



կաշկանդված»<sup>41</sup>։ Ոչ Աշտարակեցու կենդանության և ոչ էլ մահվանից հետո, ոչ ոք չի իմացել այդ թղթի իսկական բովանդակությունը։ Մահվան օրը Աշտարակեցու ծոցում չի հայտնաբերվել այդ թղթը։

Ինչ էլ լինի Աշտարակեցու հետաքննության հանգույցը կամ մեղքը, մի բան պարզ է, որ հայրենասեր մեն Աշտարակեցին զոհ էր գնում ռուսական բյուրոկրատական հայահալած քաղաքականությանը, որովհետև, ինչպես նկատում է Օրմանյանը, «Պասկևիչը շատ առջև գացած է հայոց նպաստավոր խոստումներու մեջ... և Ներսեսի և Պասկևիչի միջև համաձայնություն մը անցած էր, ոսկից Պասկևիչ կխուսափեր և Ներսեսը յուր սահմանին մեջ չէր ուզեր, մինչև իսկ տեսակցութենե ալ խույս կուտար»<sup>42</sup>։

Ներսես Աշտարակեցու հետաքննող բարոյապետ ազդու է նաև Եփրեմ կաթողիկոսի վրա։ 80-ամյա կաթողիկոսը մի քանի անգամ պաշտոնապես դիմում է կայսրին՝ խնդրելով նրա վերադարձը Մայր Աթոռ, որպես ապագա կաթողիկոսի, որպեսզի ինքը օծի նրան և աչքերը փակի խաղաղությամբ։ Եփրեմի դիմումները անհետևանք են մնում, մինչև Աշտարակեցու և նրա նամակագրության վրա սահմանում է «արթուն և գաղտնի հսկողություն»։

Աշտարակեցին էլ իր հերթին արդար բողոքագիրներ էր ուղարկում կայսրին և իրեն ծանոթ ռուս բարձրաստիճան պետական և եկեղեցական անձնավորություններին։ Աշտարակեցուն պատասխանվում էր, որ «արդարությամբ կշարունակեի իրեն հանդեպ կայսերական բարեհաճությունը, որին նա արժանացել էր քանիցս անգամ», բայց ավելորդ համարելով սրա քննությունը կամ բացատրությունը, հանձնարարվում էր ռուս-թուրքական պատերազմի ժամանակ նորանոր արդյունքներով պայծառացնել Բեսարաբիայի թեմը։

Հետևյալ Բիշևնում, առաջնորդարանի իր առանձնության մեջ, Աշտարակեցին չի հուսափառություն և զբաղվում է նաև Թիֆլիսի իր առաջնորդական գործերով, որովհետև հայրապետական հրամանով չէր ազատվել առաջնորդի իր պարտականություններից, զբաղվում էր նաև Մայր Աթոռի գործերով, և Սինդոն էլ իր հերթին մամրամասն և ընդարձակ տեղեկություններ էր հաղորդում Աշտարակեցուն որպես «ծայրագույն կառավարչի հոգևորական գործոց»։

Աշտարակեցին զբաղվում էր նաև իր նոր թեմի կազմակերպչական գործերով, որի ի-

րավասությունը տարածվում էր Ռուսաստանի ողջ հայ եկեղեցիների, Պետերբուրգի և Մոսկվայի վրա էլ։

«Իբր աշտարակյան Բեսարաբիո անկյունը նետված, Աշտարակեցին երբեք ինքզինքը չստորնացուց և ավելորդ զանգատներով տկարամիտ ողբերու, գծմունքում ձևերու, վշտացյալ անգործության և պատշաճից զանցառության ցույցեր չըրալ, այլ զինքն ամեն հակառակությունե բարձր պահեց, յուր արժանապատվությունը պաշտպանեց, յուր գործունեությունը ընդարձակեց և Բեսարաբիո անշուք և լքալ վիճակը նախանձելի դրության վերածեց, յուր անձն ալ միանգամայն պատկառելի ընձայելով։ Մեր համոզմամբ շատ ավելի մեծ է ձախող պատահարներու հանդեպ յուր պատիվը պահել, քան հաջող պարագաներու մեջ արդյունավոր լույսը։ Ներսեսը այդ մեծությունն ալ ունեցալ. ամա թե ինչու ընդհանուր ազգը զայն կուզեր կաթողիկոսական գահին վրա տեսնել»<sup>43</sup>։

#### ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1842 թվականի ապրիլի 13-ին և էջփածում գումարված ազգային-եկեղեցական ժողովը ապրիլի 17-ին կաթողիկոս էր ընտրում Աշտարակեցուն։

Հովհաննես Կարբեցու մահից անմիջապես հետո «հաջորդին անունն ալ միանգամայն սկսավ կրկնվիլ ամենում բերնեն, հնդկական թեմերեն մինչև եվրոպական վիճակները, ուր ուրեք որ հայ ժողովուրդ կը գտնվեր, և այդ միանգամայն հայտարարությունը Ներսես Աշտարակեցիի անունը կկրկներ» որպես «Պասկևիչն հալածված, Կարբեցին անարգված, պետական տեսությամբ հետաքննված և իբր աշտարակյան Բեսարաբիո անկյունը նետված»<sup>44</sup>։

Ադրաթե, երախտագետ հայ ժողովուրդը չի մոռանում երբեք իր անիրավված արտաբանական, արժանավոր Զավակին, և նրան ընտրում է կաթողիկոս։

Աշտարակեցու ընտրությամբ հայ ժողովուրդի սիրուն էր բազմում Լուսավորչի գահի վրա։ «Այնչափ մեծ եղած էր Ներսեսի գործունեության և արդյունավորության ազդած հմայքը, որ Ներսեսի անցյալը, վեհ հոգին և արդյունավոր կյանքը իր ազդեցությունը կշունեար, միտքերը կզրավեր և սիրտերը կշարժեր»<sup>45</sup>, գրում է Օրմանյան սրբաօսը։ Ի վերջո Աշտարակեցու բարոյական մեծու-

<sup>41</sup> Օրմանյան, նույնը, էջ 3766։

<sup>42</sup> Օրմանյան, նույնը, էջ 3765—3766։

<sup>43</sup> Նույն տեղ։

<sup>44</sup> Եփրեմ, Ամենայն Հայոց կաթողիկոսություն և կովկասաբայ, էջ 356։

<sup>45</sup> Օրմանյան, նույնը, 3588։

թյան, վեճաճնություն, բարձր անճնավորություն, առաքիճություն, արժանիքների և մեծ արդյունավորության առաջ լուրմ էին բոլոր կրքերը:

Աշտարակեցիներ կա չէր Մայր Աթոռում 1843 թվականի ապրիլին գումարված ռևուտական ժողովին: Նա Բեսարաբիայում էր:

Կայսրը անմիջապես վավերացնում էր ազգային-եկեղեցական ժողովի արժանավոր այս ընտրությունը, ցանկություն էր հայտնում անձամբ տեսնել և ողջունել նրան Պետերբուրգում և իր ձեռքով հանձնել կաթողիկոսական ընտրության հաստատման հրովարտակը:

Կայսերական հրավերը մայիսին հաղորդվում էր Աշտարակեցուն, «ինչ որ կցուցանե թե գործին կարևորություն տրված էր և Ներսեսի անձն ալ հատուկ ուշադրություն կհրավիրեր»<sup>46</sup>:

Բեսարաբիայի հայ համայնքը մեծ սիրով և երախտագիտությամբ ճանապարհում է իր մեծ առաջնորդին: Աշտարակեցին մատուցում է հրաժեշտի վերջին պատարագը և իր շքամբով մեկնում է Պետերբուրգ, ուր, ապակյա, դժբախտաբար, հիվանդանում է և շուրջ վեց ամիս մնում է Լազարյանների հարկի տակ, պալատական բժիշկների հատուկ հսկողության ներքո՝ վայելելով նաև կայսրի մասնավոր հոգաճությունն ու խնամքը:

1843 թվականի նոյեմբերի 18-ին տեղի է ունենում կայսերական ունկնդրությունը, որից շատ գոհ է մնում կայսրը: Նա տպավորվում է մեծապես Աշտարակեցու քաղաքական մեծությունից և խոհականությունից: Ունկնդրությունից հետո կայսրը ներքին գործոց նախարար Պետրովսկուն հայտնելով իր մասնավոր գոհունակությունը, ասում է.

**«Ես աչսոր շատ հաճեի ունկնդրություն ունեցա, շնորհակալ եմ քեզանից ընտրությանը համար: Եստ ափսոս, որ հառաջագույն թողած ենք եղել այս արժանավոր և վաստակավոր անձին»:**

Օրմանյան սրբազանը Աշտարակեցու հանդեպ կայսերական այս բարձր և ճիշտ գնահատանքը համարում է միաժամանակ «ամուլողակի մեղադրանք Պատկիսի բռնած ուղղությամբ»<sup>47</sup>:

Կայսերական ունկնդրության ժամանակ Աշտարակեցին «հարկավ հիշած է յուր անձին անճատապես և հայոց ազգին ընդհանրապես Ռուսիո համար կատարած աշխատությունները, հանձն ատած գոհողությունները և վկայված հավատարմությունը»<sup>48</sup>:

Կայսերական ունկնդրությունից հետո էլ Աշտարակեցին հինգ ամիս մնում է Պետերբուրգում, քաղաքակարական այլ այցելություններ է կատարում և մասնավոր գրադվում է երկու կարևոր հարցերով, որոնք «պաշտոնական կամ կես պաշտոնական բանակցությանց նյութ եղած ըլլան», այն է, «Ներսեսի վերադարձած քաղաքական կյանքի մը սկզբնավորությանց ծրագիրը և հայոց եկեղեցվո դավանությանն ուսական կամ օրորոքս դավանությանն հետ հաճաճանությունը, թեպետ մեր ձեռքը հասած լավագույն հիշատակներ որոշ և հատակ տեղեկություններ չեն տար»<sup>49</sup>:

Այս երկու կարևոր հարցերի ամուլությանը Աշտարակեցին հանդիպումներ էր ունենում պետական և եկեղեցական պատասխանատու անձնավորությանց հետ, ինչպիսիք էին՝ ներքին գործոց նախարար Պետրովսկին, օտար դավանությանց տեսուչ Սկրեբից, Սինոդի անդամ Սիմաշկա արքեպիսկոպոսը, կայսերական սենեկապետ Մուրավիևը, պալատական նախարար Վոլկոնսկին և ուրիշներ:

Աշտարակեցին մասնավոր մի գրությանը վարդապետական և պատմական փաստերով Սինոդին է ներկայացնում հայ եկեղեցու դավանությունը, ինչպես նաև Ներսես Օնորհալու և Գրիգոր Տղայի՝ Հունաց Կիո Էմմանուել կայսրին 1165—1180 թվականներին եկեղեցական միությանն առթիվ գրած թղթերի ուսուերել թարգմանությունները, որոնք հրատարակվում են 1847 թվականին: «Ներսեսի հզոր պաշտպանությունը իսպառ դադարեցուած է Ռուսաց կողմեն հայերը քաղկեդոնիկ դարձնելու միտքն ու ջանքերը»<sup>50</sup>:

1844 թվականի մայիսի կեսերին Աշտարակեցին 11 ամիս Պետերբուրգում մնալուց հետո մեկնում է Մոսկվա, ուր հանդիպումներ է ունենում եկեղեցական, կրթական, թեմական հարցերի շուրջ նշանավոր ազգայինների հետ, հետաքրքրվում է եկեղեցու և ժողովրդի կյանքով, այցելում է Լազարյան ճեմարան, ուր կարևոր փոփոխություններ է մտցնում դասախոսական կազմի մեջ, կատարում է Գաղաքայան ձերանոց-անկեղեցիի բացումը և տեսակցություններ է ունենում իր երբեմնի բարեկամ և Կովկասի կառավարապետ Երմովի և միտրոպոլիտ Ֆիլարետի հետ:

Աշտարակեցին իր վերադարձին ճանապարհի վրա ութ ամիս մնում է Քիշնևում, կազդորվելու և լրիվ առողջանալու համար, և 1845 թվականի ապրիլին այցելելով իր

<sup>46</sup> Կոյնը, էջ 3773:

<sup>47</sup> Օրժանյան, նույնը, էջ 3775:

<sup>48</sup> Կոյնը, էջ 3776:

<sup>49</sup> Կոյնը, էջ 3778:

<sup>50</sup> Կոյնը, էջ 3782:





անապարհի վրա գտնվող հայաբնակ վայրերը՝ Գրիմ, Եվպատորիա, Սինֆերոպոլ, Թեոդոսիա, Նոր Նախիջևան, Մոզդուկ, Մտավորայո, Վլադիկավկաս, դեկտեմբերի 17-ին հայտնական մտաք է գործում Թիֆլիս։ Կառավարչապետ Վորոնցովը ոչինչ չէր խնայել մեծաշուք դարձնելու համար իր վարչայի բարեկամ Աշտարակեցու ժամանումը Թիֆլիս։ Քաղաքը դղրում է համաժողովրդական, խանդավառ ցույցերով, որին մասնակցում են «պաշտոնեություն և ժողովուրդ, հայ և վրացի, ռուս և տաճիկ»։ Աշտարակեցին առաջնորդվում է Վանքի եկեղեցին և ապա կառավարչապետի ապարանքը։ Աշտարակեցին վեց ամիս մնում է Թիֆլիսում։ Այդ քաղաքը եղել էր Աշտարակեցու թեմական, կրթական և հայրենասիրական գործունեության գլխավոր և մեծագույն կենտրոնը, մոտ՝ նրա արտին։ Կարքեցին իր կաթողիկոսության տարիներին (1832—1843) «խաչակցեալ ընդ առտանայի», ինչպես վկայում է Աշտարակեցին, իզուր աշխատել էր Թիֆլիսում ջնջել, մուսացնել տալ Աշտարակեցու մեծ գործն ու անմոռաց անունը։ Թեմական, կազմակերպչական, կրթական-տնտեսական այլ գործեր ևս առիպում էին Աշտարակեցուն մնալ Թիֆլիսում։ Հինգ ամիս մնում է նա պատեղ, «սակայն, ամենեկին սիրտը չունեցալ գոնն մի անգամ այցելել յուր փափայաճ ուսումնարանը՝ Ներսիսյան վարժարանը. այնքան մեծ էր Վեֆի քրտի ցավը»<sup>51</sup>։

Կարքեցին է՛ր իր առաջնորդության, և՛ իր կաթողիկոսության տարիներին փորձել էր քանդել Ներսիսյան վարժարանը, «ծախել տրա բոլոր անշարժ կայքը»<sup>52</sup>, «իբր գի չըկարենարվ Ներսեսի անձը մեջտեղեն վերցրնել, կուզեր ջնջել անոր անունը անմահացնող հիշատակը»<sup>53</sup>։

Աշտարակեցին 1846 թվականի մայիսի 5-ին մեկնում է Թիֆլիսից և 8-ին հասնում Մայր Աթոռ։

1846 թվականի հունիսի 9-ին Կաթողիկե ս. Լւչիաիճնի համազգային մեծ տոնի օրը արտակարգ ու փառաֆել հանդիսավորությամբ կատարվում է Մայր տաճարում Աշտարակեցու կաթողիկոսական օծման և գահակալության հանդիսությունը, ընտրությունը 3 տարի և 2 ամիս հետո։ Ձեռնադրության հանդիսությունը ներկա են եղել 14 եպիսկոպոս, 50 վարդապետ, 61 քահանա, 50 արկավազ և ուրախակիք։ Նույն օրը շուրջ 2000 հոգու ճաշ է տրվում։ Վեհարա-

նում, վանական սեղանատանը, Ղազարապատում սեղաններ են դրվում և ամբողջ օրն ու գիշերը տեղի են ունենում լուսավառություն, հանդիսություններ։

Հոկտեմբերի 27-ին, Գյուտ խաչի տոնին, Աշտարակեցին կատարում է մյուսոթորհներ և եպիսկոպոսական ձեռնադրություններ։

Անցնում են օծման և գահակալության խանդավառ օրերը և Աշտարակեցին «եղիտասարդական ժրոխյամբ», իր հատուկ վճռականությամբ և ձեռներեցությամբ միջամուխ է լինում Մայր Աթոռի ներքին ու տնտեսական կյանքի բարեկարգման աշխատանքներին։ Կարքեցու օրով խանգարվել էր վանական-միաբանական կյանքը, վանքը՝ աղքատացել, եկեղեցին՝ կոդուպվել։

Կարքեցու օրով Մայր Աթոռում մեծ չափերի էին հասել նաև ապօրինություններն ու կաշտակերությունները՝ հակոդության բացակայության պատճառով։ Տնտեսապես քայքայվել էր Մայր Աթոռը և քարոլայվա՞թությամբ ու տկարացած։ Սինոդը դարձել էր անվանական և Կարքեցու կամակատարը։

Աշտարակեցու առաջին գործն է լինում վերականգնել կարգ ու կանոնը Մայր Աթոռում, հատուտել վանական կառավարչություն, վերակազմել Սինոդը կարող և նոր անդամներով։

1846 թվականի դեկտեմբերին նորից այցելում է Թիֆլիս՝ վերակազմելու քայքայված առաջնորդական թեմ և Ներսիսյան վարժարանը դնելու իր կոչման և ուսումնադաստիարակչական աշխատանքների բարձրության վրա։ Աշտարակեցին կազմում է նախ «վերազննության ժողով», դպրոցի համար, և հանցավոր գտնելով առաջնորդ, տեսուչ, ուսուցիչներին, բոլորին հետացնում է աշխատանքից և կազմում հոգաբարձություն՝ կարող անձերից։ Աշտարակեցու կաթողիկոսության տարիներին և մահավանդ 1849—1857 թվականներին Ներսիսյան վարժարանը բոլորում է իր գոյության և գործունեության ամենափայլուն շրջաններից մեկը, Կարապետ վրդ. Շահնագարյանի և ապա Պետրոս Շահնազյանի տեսչության օրով։ Ներսիսյան դպրոցը իր կրթական-դաստիարակչական փառավոր ստաբեությունը կատարում է արևելահայերի մոավոր, հասարակական կյանքի զարգացման մեջ մինչև 1925 թվականը։

1899 թվականի նոյեմբերի 21-ին համազգային մեծ հանդիսությամբ նշվում է Ներսիսյան դպրոցի հիմնադրության 75-ամյա հոբելյանը։

Աշտարակեցին Թիֆլիսի համար նոր առաջնորդ չի նշանակում, «առաջնորդի տե-

<sup>51</sup> Ալ. Գ. Երիցյան, Պատմություն 75-ամյա... Էջ 436։

<sup>52</sup> Նունը, էջ 324։

<sup>53</sup> Օրմանյան, Գ. հատոր, էջ 3790։



ըը ինքը բռնելով մինչև յուր կենաց վախճանը<sup>54</sup>:

Աշտարակեցին իր կաթողիկոսության տարիներին առավելապես զբաղվում է Մայր Աթոռի տնտեսական ապահովության և ներքին բարեկարգության հարցերով:

Թեև մեծ նվիրատվություններով և ժողովրդական նվերներով տնտեսապես ապահովել էր Մայր Աթոռը, բայց միաբանությանը կոչ էր անում, որ «կարելի չէ հույսներս դնենք ժողովրդի նվերների վրա, այլ սովորեցնեք տնտեսություն, վաճառի կալվածքները լավ դրության հասցրեք, անկորուստ առաքեք արդյունքն, ոչ թե անգործ նստելով աչք տնկեցեք ժողովրդի ձեռքին»:

Աշտարակեցին հատուկ ուշադրություն էր դարձնում միաբանության անդին, որ «հասցը և կերակուրը լավ և մաքուր պատրաստվեն, և հաճախ ստուգելու համար ճաշի ուրակը, վեհարանը էր բերել տալիս միաբանության և աշակերտների առաջ դրված ճաշերը:

Աշտարակեցին վաճառի մատաններում և շտեմարաններում էլք ու մուտք, տոմար, չափ ու կշիռ է սահմանում, հավնոց է հաստատում, փոխանակ գյուղացիներից «ձու և հավ մուրալու»: Նորաշեն Ներսիսյան լճում ձկներ է աճեցնում վաճառական կարիքների համար, բազմացնում է վաճառի ճախիրը և ս. Գայանե վաճառի մոտ կառուցում է կանոնավոր գոմանոց, «որ իր տնակին մեջ կատարյալ հաստատություն մը կրնա սեպվի», շաքարի գործարան է բացում և շերամ հասցնելու նախապատրաստական աշխատանքներ է կատարում: «Ծաքարի և շերամի գործարանները և շատ մը կարգադրություններ իր կյանքին հետ վերջացան, քանի որ պակսեցավ հսկողության արթուն աչքը և անխուսճ ձեռքը»<sup>55</sup>:

Աշտարակեցին նույնիսկ մտածում է՝ մի մասնավոր դրամատուն բացել «ողորմելի ժողովրդին թեթև տոկոսով փոխառություն տալու» համար:

Աշտարակեցին իր անմիջական հսկողության ներքև խիստ վերահսկողություն է հաստատում Մայր Աթոռի ելևմուտքի վրա: Հերիք չէր միայն կազմակերպումն ու շատացումը նյութական միջոցների, այլ նաև անհրաժեշտ էր բոլոր գեղծումների և չարաշահությամբ ճանապարհների փակումը: Աշտարակեցին «թեպետ մեծամեծ ձեռնարկներով զբաղված և մեծագույն դրամներ գործածած, ինքզինքը մաքուր և գերծ կզգար ամեն գեղծումն, և այս էր որ զինքը կբաջա-

լերեր աներկյուղ կերպով գեղծարարներու դեմ վարվելու»<sup>56</sup>:

Մայր Աթոռում Աշտարակեցու մեծագործությունների շարքում պետք է հիշել նաև իր անունը կրող լիճն և անտառը, որոնք տնտեսական մեծ նշանակություն ունեցող ձեռնարկներ էին:

Իր հայրապետության օրով Աշտարակեցին պաշտոնական դիմումներով աշխատում է նաև վերաբնության եմթարկել նորահաստատ Պոլոժենիայի 32, 71, 89 և 91 հողավածները՝ դրանք անհամապատասխան գտնելով հայ եկեղեցու կարգ ու կանոնին և վաճառական-միաբանական ոգուն: Աշտարակեցին կազմում է նույնիսկ հայ եկեղեցու կանոնների լույսի տակ «իս ձեռք մի կանոնադրություն» հայ եկեղեցու համար, և կատարության չներկայացրած մտածում է եմթարկել «հմուտ եկեղեցականներն և աշխարհականներն կազմված հանձնաժողովի մը» քննության:

Աշտարակեցու մահը, սակայն, Թիֆլիսում անկատար է թողնում բազում այլ ձեռնարկների կատարումը:

1857 թվականի փետրվարի 15-ին, չորեքշաբթի, 87 տարեկան հասակում, Թիֆլիսում, կես գիշերին, իր գրասեղանի առաջ, գրիչը ձեռքին, կաթողիկոսական իրավունքների մասին ներքին գործոց նախարարին պաշտոնական մի նամակ գրելիս, մահանում է մեծ Աշտարակեցին: Նրա մարմինը մեծ հանդիսությամբ փոխադրվում է Մայր Աթոռ:

Փետրվարի 27-ին ս. Էջմիածնի Մայր տաճարում կատարվում է մեծահուն և հայրենասեր Հայրապետի վերջին օծումը:

Աշտարակեցին թաղվում է Մայր տաճարի զանգակատան հարավային կողմում, Դանիել կաթողիկոսի շիրմի մոտ: 1907 թվականին Աշտարակեցու շիրմի կողքին է թաղվում «հայրենեաց վշտին նուազող» մեծ Խրիսյանը:

Աշտարակեցու կյանքին և գործունեությանը նվիրված սույն ակնարկը փակում ենք Օրմանյան արքայազնի գնահատությամբ:

«Ներքես մեծ ազգային մը հայտնված էր, իր ժամանակին ամենամեծ ազգային դեմքը, մեծ շինարար մը հանդիսացած էր եկեղեցու հանձնարող, ամխոց աշխատանքով. մեծ հառաջդիմական մը ճանված էր դաստիարակության, կրթության և ուսման և գիտության համար ցուցուցած ջանքով և նշանակալի արդյունքով. մեծ բարեկարգիչ մը եղած էր գեղծումներու և անկարգություններու դեմ անաչառ պայքարում և ամեն

<sup>54</sup> Իրեցյան, Պատմություն 75-ամեակ..., էջ 438:

<sup>55</sup> Օրմանյան, նույնը, էջ 3850:

<sup>56</sup> Նույնը, էջ 3852:

կողմ կարգ ու կանոնի համար գործածած  
նիզերով...»<sup>57</sup>:

Վեհափառ Հայրապետը Աշտարակեցու  
ծննդյան 200-ամյակի առթիվ գրած իր գե-  
ղեցիկ և բովանդակալից կոմիակում գրում  
էր.

<sup>57</sup> Նույնը, էջ 3765:

«Հերոսական մաքառումներու այդ դարա-  
շրջանի սեմին, մեր առջև կրարձրանա պալ-  
մառ ու հզոր իմացականությունը Հայրապե-  
տի մը, որ գիտցավ ս. Էջմիածնի ոգեկան  
կառարներուն հասնել և այդ բարձունքեն  
յուսավորել հոգևոր-ազգային վերածննդի  
ճամփան, առաջնորդելով իր ժողովուրդը  
այդ լույսով»:







## ԷԶԵՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԴԴՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Թիֆլիսի հայկական ուսումնարանի հիմնադիր Ներսես Աշտարակեցին 1814 թվականին Նշանակվեց Վրաստանի և Իմերեթիայի հայկական թեմի առաջնորդ: Պատմագիրների տվյալներով Ներսես Աշտարակեցին իր դարաշրջանի կրթված, առաջավոր գործիչներից մեկն էր և մեծ հայրենասեր: Նա երազում էր հայրենիքն ազատագրել պարսկական տիրապետությունից: 1807 թ. Դոնի-Նախիջևանում եղած ժամանակ, Ներսես Աշտարակեցին պատրաստվում էր այցնել հիմնել դպրոց, բայց այդ նրան չհաջողվեց: Կալով Թիֆլիս, նա ձգտում էր իրականացնել իր վաղուցվա երազանքը, այսինքն՝ բացել դպրոց հայ երեխաների համար:

1816 թ. Թիֆլիսի վանքի Ավագ եկեղեցու խուցերում հիմնեց մի փոքրիկ դպրոց: Ներսես Աշտարակեցին ուսուցիչ Նշանակեց Հովհաննես քահանային, իսկ ինքը հետևում էր ուսման ընթացքին և՛ զբաղվում ուսումնարանի նյութական ապահովության հարցերով:

Ինչպես հայտնի է, 19-րդ դարի սկզբներին Անդրկովկասում տիրում էր խառնաձև և անգրագիտություն: Վրաստանում ոչ մի հայկական դպրոց չկար: Հայ եկեղեցին կարիք ուներ գրագետ քահանաների, իսկ հայ վաճառականությունը՝ գրագետ, ուղղակի վաճառականների: Այդ իսկ պատճառով հայ վաճառականությունը շահագրավված էր հայերեն աշխարհիկ դպրոցներ ունենալու և աշխատում էր բացել այդպիսիները: Ահա այդպիսի ուսումնական հաստատության հիմնադրմանը էր ձևանմուխ եղել Ներսես Աշտարակեցին: Հայ վաճառականությունը օգնեց նրան առատ հանգանակություններով, ինչպես դրամով, այնպես էլ անշարժ կալվածքներով:

Ուսումնարանի կառուցման համար առաջին օժանդակությունը (500 ուրլի) Ներսես Աշտարակեցին

ստացավ գեներալ Սարգիս Լորիս-Մելիքյանից:

Որոշ ժամանակ անց, նա ստացավ Հովհաննես Ազարյանի կողմից կտակված 3000 ուրլին՝ Թիֆլիսում ուսումնարանի շենք կառուցելու համար: Հովհաննես Ազարյանի ծառանգ Հովակիմ Ազարյանն այդ նույն նպատակի համար հատկացրեց 5000 ուրլի, սակայն այդ մոծումները քաղկական չէին: Աշտարակեցին հավաքեց Թիֆլիսի հայ հասարակության ազդեցիկ ներկայացուցիչներին և բացատրելով ուսումնարան հիմնելու անհրաժեշտությունը, առաջարկեց հանգանակություն կատարել:

Ապագա ուսումնարանը նյութական ապահովելու համար Ներսես Աշտարակեցին ձևաճանաչեց եղալ իջեկանատների և խանութների կառուցման, որոնցից ստացված կապալավարձով պետք է պահվեր ուսումնարանը: Երբ իշխանատներն ու խանութները սկսեցին եկամուտ տալ, Ներսեսը ձևաճանաչեց եղալ զրպոցի շենքի կառուցման աշխատանքներին:

\* \*

Շենքի կառուցման արժեքը կազմեց 40 հազար ուրլի, որ այն ժամանակի համար խոշոր գումար էր: Իր գեղեցկությամբ հայկական ուսումնարանի շենքը Թիֆլիսի լավագույն շենքերից մեկն էր: Պրոֆ. Չիստիանի իր «Թիֆլիսի 19-րդ դարում» գրքում գրելով է Թիֆլիսի ֆրանսիական հյուպատոս Գամբերում և Թիֆլիսի ֆրանսիական հյուպատոս Գամբայի հետևյալ արտահայտությունը՝ Վրաստանի մայրաքաղաքի այն ժամանակի կառուցումների մասին. «Գեներալները, տեղական իշխանները և հարուստ հայերը մքրում էին իրենց կալուցումների նրբագեղությամբ, բայց դրանց մեջ հատկապես աչքի էր ընկնում հայ եպիսկոպոս Ներսես Աշտարակեցին, որը կառուցել էր նոր քաղաքում հսկայական իշե-

վանատուն, կարծես կանխատեսելով այդ քաղաքի առևտրի զարգացումը:

Ներսես Աշտարակեցի Ռիմնաձ այս ուսումնարանը, Թիֆլիսի հայերի կողմից ոչ պաշտոնական կերպով էր անվանվում Ռիմնադրոյի անունով՝ Ներսիսյան դպրոց: Միայն 1881 թվականին Մաքսեոս կաթողիկոսը, հապանություն տալով ուսումնարանի նոր կառուցողությանը, պաշտոնապես հաստատեց Ռիմնադրոյի անունը և սկսեց կոչել Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոց:

\* \*

Ապահովելով դպրոցի նյութական հիմքը, Աշտարակեցին հոգ տարավ նրա կանոնադրության, ուսումնական ծրագրերի և դասատուների մասին: Որպես առաջին տեսուչ և հաջոց լեզվի ուսուցիչ, Ներսես Աշտարակեցին Լազարյան ճեմարանից հրավիրեց գրականագետ Հարություն Ալամդարյանին, որը աշխատեց մինչև 1830 թվականը, մինչև Պասկևիչի կողմից Էջմիածին արտաքվելը:

Ներսիսյան դպրոցը բաղկացած էր չորս դասարաններից և նախապատրաստական բաժնից: Ներսես Աշտարակեցին Ալամդարյանին հանձնարարեց մասնավորապես հրահանգ վճակել դպրոցի համար: Սակայն արիվկային նյութերում մեք չհայտնաբերեցինք ոչ այդ հրահանգը, ոչ էլ նրա պատճենը: Ըստ Ստ. Մալխասյանի, այդ հրահանգում ավանդ էր, որ ուսուցիչը պարտավոր է իր վարքագծով և բարոյական հասկություններով օրինակ ծառայել աշակերտների համար, նա պարտավոր է հավասարապես սիրել ինչպես հարուստների, այնպես էլ աղքատների երեխաներին, քարեխճորեն վերաբերվել պարսպունդներին, պահել մաքուր, ամեն օր այնտեղ ճշել անցած նյութը և աշակերտների պատասխանների գնահատականները: Ուսուցիչը իրավունք չունի աշակերտներին ինքնազույս տուն թողնել ճաշից հետո, կամ տուն օրերին իր տանը պարսպել նրանց հետ:

\* \*

Սկզբնական շրջանում ուսուցող չունի դասագրքեր: Ուսուցիչները ավանդվող ուսարկային վերաբերող նյութը գրանցում էին տետրերում և ներկայացնում Ներսես Աշտարակեցուն՝ հաստատման, ապա տալիս աշակերտներին՝ արտագրելու: Ներսես Աշտարակեցին բնորոշվում առավել արժեքավոր նյութեր, դրանք ուղարկում էր տպագրության: Այսպիսով ստեղծվում էին տպագիր դասագրքեր: Սկզբում հայերեն լեզվով կային միայն այբբենարան և կրոնի դասագիրք: Այդ երկու տարական անցնում էին հայերեն լեզվով, իսկ մյուս տարականը՝ ռուսերեն դասագրքերով:

\* \*

Ջրկվելով Ալամդարյանից, դպրոցը որոշ ժամանակ անկում ապրեց: Դրան հպատեց նաև Պասկևիչի և Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից տար-

վող հալածանքները Ներսեսի և Ալամդարյանի կողմնակիցների նկատմամբ:

Դպրոցը 1828 թվականին տվեց առաջին շրջանավարտները: Ծրցանավարտները քննությունից հետո ստանում էին վկայականներ և պարգևներ: Առաջին շրջանավարտներից էին՝ մեծ լուսավորիչ Խաչատուր Արովյանը, խոշոր հրապարակախոս-քննադատ Սևոփանոս Նազարյանը, առաջին հայկական իգական միջնակարգ դպրոցի (Թիֆլիսի Հովնանյան-Մարիյան դպրոցի) հիմնադիր Հովհաննես Հովնանյանը, Հովհաննես Օրբեղապետյանը, Պետրոս Մաղաթյանը, Վարդանովը և ուրիշներ, որոնք հետագայում գրավեցին հասարակական-մանկավարժական գործունեությամբ:

\* \*

Ներսիսյան դպրոցի պատմության, նրա գործունեությունը լավագույն տարեկներից պետք է նշել 1849-ից մինչև 1857 տարիները՝ համեմատաբար բավական փոքր, բայց թվանդանությամբ շատ խոր, հարուստ և հետաքրքիր մի շրջան, որ մեր րանսներների կողմից, ի պատիվ այդ տարիներից դպրոցի տեսուչ Պետրոս Շանջանցի, կոչվել է դար Շանջանցի:

\* \*

Շանջանցը այստեղ ծաղկում է կազմակերպական, վերափոխման մինչև այդ չլուծ մի մեծ աշխատանք, դրսևորում իրեն որպես դպրոցական գործին բաժնակողմանի պատրաստ մի տեսուչ, հաստատ համոզմունքների տեղ, գաղափարական մի մարդ, մի անխոց վերանորոգիչ, մի քաղաքական տիպար, առաջադիմության մեծ նախաձեռնիչ, օրինակելի ուսուցիչ, դաստիարակ, որից ավելորդ էին թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները:

\* \*

Նախաձեռնարկական հայկական դպրոցներից և ոչ մեկը չի կատարել այնպիսի վճռական ու կարևոր դեր հայ առաջադիմ հասարակական մտքի զարգացման ու ձևավորման գործում, ինչպես Ներսիսյան դպրոցը: Չկա հայկական կյանքի և ոչ մի քննադատ՝ գիտության, գրականության, արվեստի, լրագրության, հեղափոխական գործունեության, որտեղ Ներսիսյան դպրոցի սաները բացառիկ արժեքի ներդրում կատարած չլինեց: Այդ բացառություն է նրանով, որ Ներսիսյան դպրոցում խիստակ ու գործել է ուսուցիչների մի շատ կարող աշխատ:

Այսան դպրոցի առաջին տնայից՝ Հարություն Ալամդարյանից, մինչև վերջին սերնդի մոնիսկաները՝ Մանուկ Աբեղյանը, Ստեփանոս Մալխասյանը, Սևոփան Լիսիցյանը, Մամբրե Մատենականը՝ յուրաքանչյուրը եղել է գիտության մի լուսատու, որ հայ ուսուցչության համակարգը բնագավառում է դարձրել իր գործունեության ապարհը, որպեսզի ծառայի մոդուլերի լուսավորման մեծ գործին:



Այդ փայլուն սերնդի ներկայացուցիչներից էր նաև բնագետ-դարձիկհետ Սամվել Բալադյանը:

\* \*

1895 թվականին նա ընտրվում է Ներսիսյան դպրոցի տեսուչ, մնալով այդ պաշտոնում մինչև 1903 թվականը:

Իր տեսչության շրջանում, հենվելով ուսուցչական առաջադեմ կազմի վրա, Ս. Բալադյանը կարողանում է կատարել հիմնական քարեփոխումներ դպրոցական գործի ընդհանուր դրվածքի, դասավանդման մեթոդների և մանավանդ բնագիտության և կենսաբանական առարկաների դասավանդման ուղղությամբ: Այդ քարեփոխումների հետևանքով Ներսիսյան դպրոցը դառնում է առաջադեմ մտքի ձևավորման կարևոր դպրոց ու կենտրոն: Սամվել Բալադյանի տեսչության օրոք Ներսիսյան դպրոցի աշակերտների թիվը 350-ից հասնում է մինչև 1200-ի: Նա վերջանում է դպրոցի հոգաբարձուների քմահաճույքով յուրաքանչյուր տարի ուսուցչական կազմի փոխելու գոյություն ունեցող սխտեսը և դպրոցի ուսուցչական կազմը դարձնում է մնալուն, լուրջ փոփոխման է ենթարկում դասավանդման գոյություն ունեցող ծրագրերը: Ծառ մեծ տեղ է հատկացնում հատկապես բնագիտական առարկաների դասավանդմանը, ինչպես նաև գիտությունների պրոպագանդան միջոցառումների (էքսկուրսիաներ, գրույցների երեկոներ, խմբակների կազմակերպում և այլն):

\* \*

Ներսիսյան դպրոցի գործունեության վերջին քառորդ դարը ամենահարուստն է և բեղմնավորն իր նշանակությամբ: Մասնավաճող, որ այդ քառորդ դար առաջը չի սկսում անպայման 1901 թվականով և վերջանում 1925-ով: Դարիս սկզբում տեղի ունեցող երևույթներն ունեն իրենց նախապատմությունը: Նյույն կողմից Ներսիսյան դպրոցի դերն ու նշանակությունը չվերջացավ 1924 թվականով, այլ իր բովանդակային արտահայտություններն ունեցավ հաջորդ տասնամյակներում և շարունակվում է դեռ մինչև ի՞նչ օրս էլ:

Հետևապես քառորդ այդ դարը՝ մյուսի իր ընդգրկմամբ փաստորեն դառնում է ամսվազմ մի հիսնամյակ:

\* \*

Առաջին և ամենաուշագրավ երևույթը ես համարում եմ Ներսիսյան դպրոցի վճռական դերը Թիֆլիսի հայ մշակույթի և հասարակական կյանքի կազմակերպման հարցում:

Անցյալում հայ ժողովրդի նման տարագիր է եղել և հայ մշակույթը, աշխարհի ո՞ր անկյունում ասես նա ծիլեր չի արձակել: Սակայն կտրված մայր հողից ու սևող միջավայրից, նրա արժանները եղել են թույլ ու անզոր, շուտով չորացել են՝ մի այլ վայրում մորից արժատներ գցելու համար:

Հայ ժողովրդի ազգային գարթոնքի շրջանում,

ամցալ դարի երկրորդ կեսից, հայ մշակույթի զորեղ ու տևական կենտրոն է դառնում Պոլիսը, իսկ դարի վերջին քառորդում նաև Թիֆլիսը:

\* \*

Թիֆլիսն այդ շրջանում դեռ որևէ չափով Պոլսի հետ համեմատվել չէր կարող: Միայն քառորդ դար անց Թիֆլիսը սկսում է դառնալ մշակութային կենտրոն, իսկ հետագայում ունենում է այնպիսի բուռն զարգացում, որ դարիս սկզբին առաջնության պատկը արդեն լրիվ իրեն է անցնում, և այդ գործում վճռական ու քաջատիկ դեր է խաղացել Ներսիսյան դպրոցը:

\* \*

...Ներսիսյան դպրոցն էր այն հոգևոր կորիզը, որի շուրջը պիտի համախմբվեր Թիֆլիս փոխադրվող հայ մտավորականությունը:

Ներսիսյան դպրոցն արդեն դառն էր հայ առաջավոր մտավորականությանը դեպի իրեն ձգող մի հզոր մագնիս և միաժամանակ հայ մտավորական մոր սև-բուռն կողով տևական դարբնոց և դրանով արդեն նաև հայ մշակույթի մի մոր, զորեղ կենտրոնի ստեղծման վճռական ազգակ:

Եթե Ներսիսյան դպրոցի գոյության առաջին հիսնամյակը եղավ յուրատեսակ նախնական կուսակման մի շրջան, ապա երկրորդ հիսնամյակը՝ բեղմնավոր ու բուռն գործունեության այն շրջանն էր, որ ուժեղ զարկ տվեց հայ մշակույթի մոր վերելքին և նրա առաջադեմ ուղղության ձևավորման գործին:

Այդ առավել ակնառու կերպով հրապարակ է գալիս հատկապես անցյալ դարի հիմնական թվականներին և ներկա դարիս առաջին տասնամյակներում:

Չկա հասարակական ու մշակութային կյանքի մի բնագավառ, որ այդ շրջանում դեկավար կամ շատ ազդեցիկ դեր խաղացած չլինի Ներսիսյան դպրոցի ուսուցիչները կամ ամենը:

Թերթեցեք նախահեղափոխական շրջանի հայ պարբերականները՝ «Մշակն» ու «Փորձը», «Նոր-Դարն» ու «Մուրճը», «Նոր-հուսանքն» ու «Դործը», «Հանքերը», «Արաքսը», բոլոր այլ պարբերականները և կոստան, որ նրանց աշխատակիցների մեջ առաջնակարգ տեղ են գրավում, իսկ հաճախ նաև դեկավար ուղղություն են տալիս Ներսիսյան դպրոցի ուսուցիչներն ու ամենը: Ներսիսյան դպրոցի ամենը՝ ակտիվորեն մասնակցում են նաև բոլշևիկյան ու սոցիալ-դեմոկրատական հայ պարբերականներում՝ «Պայքարում», «Կայծում», «Պրոլետարիատի կոլում», էլ չեմ խոսում այնքան սիրված «Հասկեր» մանկական ամսագրի մասին, որի հիմնադիրը Ներսիսյանի Ստեփան Լիսիցյանն էր, իսկ տպագրվող հետի-հակների ճնշող մեծամասնությունը, սկսած Հովհ. Թումանյանից, Ղազարու Արապանից մինչև Հակոբ Աղաբաբն ու Սիմակը՝ Ներսիսյանցիներ էին: ՀՀԱՄ կերտման մանկավարժական գործի դրվածքը, մամուլ-ների հոգու խորքը թափանցելու ուժը, նրանց մեջ

գեղազուտական ճաշակ մշակելու գործը մինչև հիմա դեռ մնում են չգերազանցված: Իսկ դա ամբողջովին Ներսիսյան դպրոցում մանկավարժության դասավանդման փալյուն դրվածքից էր իրում, որ գալիս էր հայկազայ մանկավարժներ Ամիրյան Մանդինյանից, Կարապետ Կոստանյանից:

Ներսիսյանավարտ ու Ներսիսյան դպրոցի ուսուցիչ էրվանդ Լալայանի հիմնադրած «Ազգազական համ-դան» հսկայական դեր կատարեց մեր հնչողուններ-րի և ժողովրդական բանահյուսության գործարների հավաքման գործում, դասավ մեր ժողովրդի կենցա-դի, քաղքերի ու սովորությունների ուսումնասիրող ու հավաքագրող մի հանրագիտարան: Արժեքավոր ձևություն էր Գյուտ Աղանյանի «Դիվան հայոց պատ-մությանը», որը հարուստ նյութ էր պարունակում վերջին շրջանի հայոց պատմությունից:

Մշակութային և հասարակական կյանքի նոր ու հզոր վերելքի համար, ինչպիսի դեր կատարեցին Հովհ. Թումանյանի հիմնադրած «Հայ գրական միու-թյունը», Սամվել Բալայանի և Աշխարհբեկ Քալան-թարի ակտիվ մասնակցությամբ հիմնադրված «Հայ հրատարակչական ընկերությունը», քառտարաբնու-թյուն «Արտիստական ընկերությունը», «Բաքվի կուլտուրա-կան ընկերությունը»: Այս բոլոր հաստատություննե-րում, որ մշակութային հզոր վերելքի գործոններ էին, գլխավոր կորիզը և գործոն ուժը եղել են հեր-սիսյանցիները՝ ուսուցիչներ թե սաներ:

Նույնը կարելի է տեսնել նաև քառտարական ար-վեստի բնագավառում: Ներսիսյան դպրոցից ելած հայ քառտարական գործիչները (Գևորգ Չճշկյան, Միր-դաստ Ամիրխյան, Արտաշես Մատինյան, Գևորգ Սի-րադյան, Մկրտիչ Ավալյան, Աղամ Սարգսյան-Ա-րեվշտյան, Գեղուն Միրադյան, Գևորգ Պարո-նյան, Կաման Գալստյան, Վարդան Միրզայան, Միքայել Գավրոշ, այս սերունդն է, որ վճռական դեր է խաղում ներկա դարիս սկզբին հայ քառտրոնի վերափոխման գործում: Դառնում է իրապատական **ուղղության հաստատողն ու զարգացնողը մեզ մոտ**, տանում քառտրոնը դեպի առավել **դեմոկրատացում**, քառտարական արվեստը ժողովրդական լայն զանգ-վածների սեփականություն դարձնում:

Եթե անդրադառնանք երգի ու երաժշտության բնագավառին, ապա Ներսիսյան դպրոցի ուսուցիչ-ներ Մակար Եվմայանի, Գրիգոր Մյունու, Սպիրիդոն Մելիքյանի, այնուհետև այդ դպրոցի սաներ Տիգրան Նալբանդյանի, Արմենակ Շահ-Մուրադյանի, Շարա Տալանյան, Արամ Տեր-Հովհաննիսյանի, Անտոն Մաի-յանի, Միքայել Միրզայանի, Ազատ Մանուկյանի կատարած աշխատանքը համակված է նույն հիմնա-

կան միտումով՝ մի կողմից հայ երգն ու երաժշտու-թյունը տանել դեպի ժողովրդի լայն խավերը, այն ա-ռավելորեն դեմոկրատացնել, մյուս կողմից իրեն՝ բուն ժողովրդի երգը դարձնել հայ երաժշտական ստեղծագործության հիմնական ակունքը, նրան սնող ու հարստացնող սկզբնաղբյուր:

Ներսիսյան դպրոցից ելած հայ կոմոսիտների նե-վազ սերունդը, նրանց միացած «Նոր-սերունդ»-ա-կանները և հետագայում կոմոսիտական շարժմանը հարած բոլոր ներսիսյանավարտները ոչ միայն պան-ժացիեն Ներսիսյան դպրոցը, այլև իրենց հուղափո-խական գործունեությամբ մեծագույն դեր խաղացին հայ ժողովրդի պատմական ճակատագրի, նրա փր-կության, նրա սակավահամարյան վերստեղծման գոր-ծում:

Ներսիսյանցիները փալյուն մասնակցություն բերե-ցին Հայաստանում և Վրաստանում սովետական կարգերի հաստատման գործին: Մեծ է եղել նրանց մասնակցությունը հայ նոր պետականության հաս-տատման, նրա քաղաքական, տնտեսական ու մշա-կութային շինարարության գործում:


Երբ ստեղծվում է Հայաստանի պետական հա-մալարանը, նրա առաջին տնամանակի դասախո-սների մեջ արդեն պատկանելի թիվ էին կազմում ներսիսյանցիները՝ 14 հոգի: Դրանք էին՝ Մանուկ Արեղյանը, Սարգիս Արվալյանը, Գևորգ Ասատուր, Գևորգ Գրձկյանը, Արտու Նոյազարյանը, Գուրգեն Լեղիսյանը, Ստեփան Լիսիցյանը, Սիմոն Հակոբյանը, Արշավիր Համարյան, Տիգրան Տիրազյան, Ավե-տիք Տեր-Պողոսյանը, Արշակ Տոնյանը, Պապա Բա-լանդարյանը, Աշխարհբեկ Բալանթարը: Հետագա-յում նրանց թիվն ալկակացավ:

Նույնն էր դրությունը նաև Հայաստանի նորա-ստեղծ գիտությունների ակադեմիայում, որի ակադե-միկ դեմքերից էին՝ Մանուկ Արեղյանը, Ստ. Մա-լապյանը, Դ. Դեմիրճյանը, Վարդան Գուրաբյանը, Գուրգեն Մալալ, ինչպես նաև գիտության բազմաթիվ այլ բնագավառների շատ ճանաչվող գործիչներ:

Երբ ստեղծվում է սովետական հայ քառտրոնը, նրա առաջին կազմակերպիչներն ու ղեկավարները եղել են ներսիսյանցիները՝ Ստ. Բալանյանյանը, Ամո Նարազյանը, Արմեն Գուրաբյանը, Իսահակ Ա-լիխանյանը, Վարդան Միրզայանը, Տիգրան Շամիր-խանյանը, Ավետ Ավետիսյանը, Սարգիս Մելիքսե-րյանը, Արշակ Հարությունյանը, սովետահայ քառտրոնի աչքի ընկնող գործիչներ՝ Պանարեն, Դորի Ամիրխյան-յանը, Սարգիս Քոչարյանը և ուրիշներ:

Նշանակալից է եղել ներսիսյանցիների վատակը օպերային քառտրոնի ստեղծման և առհասարակ սո-վետահայ երաժշտության համակարգի վարպետան գոր-





Ներսիս Ե ԱՅՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍԻԱՆ ԴՊՐՈՅ ԳԱՄԹԻՈՒՄԱՆ ԿԱԶՄԸ ՈՒ  
1903—1904 ՈՒՍՈՒՐԱՆԱՆ ՏԱՌԱՎ ԵՐԶԱՆԱՎԱՐՏԵՐԸ

ծնունդ: Հիշենք միայն Շարա Տալլանին, Արմենակ Տեր-Արքայանյանին, Գուրգեն Միրզայանին, Արամ Տեր-Հովհաննիսյանին, Մուշեղ Աղայանին, Ազատ Մամուկանյանին, Կարո Զաքարյանին, Մարտին Մազմանյանին, Երվանդ և Կարոյան Կարթումյաններին:

Հայ ճարտարապետության այսօրվա փառավոր նվաճումների մեջ ինչպիսի անգնահատելի դեր են կատարել ներսիսյանցիներ Կարո Հալաբյանը, Միքայել Մազմանյանը, Գևորգ Քոչարը, Թիֆլիսում Խուրեն Աղաբաբը:

Սովետահայ կինոյի ստեղծման գործում մեծ վաստակ ունեն Դանիել Դզունցին, Ավետ Ավետիսյանը, Սարգիս Մելիքսեյանը, Արամ Ամիրբեկյանը և այլ ներսիսյանցիներ:

Սովետահայ քանդակագործության փառքն ու պատիվն են կազմում ներսիսյանցի Երվանդ Քոչարի «Սասունցի Դավիթը», առհասարակ մեծ է նրա դերը սովետահայ նկարչության մեջ:

Երևանաբնակ, արդյունաբերության, առողջապահության, գյուղատնտեսության, մանկավարժության և տարբեր այլ բնագավառներում ղեկավար ու առաջնակարգ դեր կատարած ներսիսյանցիների թիվը շատ մեծ է:

Գործըրկանին մի սերունդ էր դա, որ գիտակցաբար ընտրել կյանքում դժվարությունների ու զրկանքի ուղին, երբեք չորոնց կյանքում հնչել ու լավ ապրելու միջոցներ: Նրանք գիտակցաբար գնացին դեպի քանոն, տարած ամեն հալածանք, բայց միշտ եղան պայքարի մեջ, միշտ վտանգավոր գծերում, որ ամեն վաղուկան կյանքը վտանգի էր նկատվում: Նրանք խոշորագույն մասը գիմնոլոգիայից մի մեծ գաղափարի, որը բազմաբովանդակ էր ու համապարփակ, որովհետև իր մեջ պարունակում էր հայրենասիրությունն ու մարդասիրությունը, գաղափար, որը հաճախ պայքար է մարդու երջանկության համար:

Ոչ մի հայկական դպրոց հայ ժողովրդի ամբողջ պատմության ընթացքում չի կատարել այնպիսի մեծ դեր, մանավանդ նրա ճակատագրի ամենաբարձրորոշ և վճռական շրջանում, ինչպիսին Ներսիսյան դպրոցը: Իսկ դա նշանակում է, որ պետք է հազդել ու վատ պահել այդ դպրոցի, մշակութային այդ հույսակա օջախի ավանդներն ու հիշատակը:

(Նյութեր Ներսիսյան դպրոցի պատմությունից, Երևան, 1967 թ., Տեր-Հովհաննիսյան Մ. Ս., էջ 7—8, 9, 11—12, 12—18, 18: Գր. Գրիգորյան, էջ 19, 28: Հր. Գրիգորյան, էջ 84, 87—88, 47, 48, 49—51, 58, 59, 61, 62—68, 68, 64):

Առաջին մարդը, որ լրբորակ գրավել վրահայոց լուսավորության և ապագայացման առաջն առնելու խնդրով, իր Ներսես Աշտարակեցին, մեր նոր պատմության պատկանելի անուններից մեկը: Ինչպես ինքն է վկայում դեռ քառամյա հասակից շատ

է խորհել մայր հայրենիքում, առանձնապես Էջմիածնում, մի կարգին վարժարան հիմնելու շուրջ...

Հանգամանքների քերտմով Ներսեսը հետագայում նշանակվեց վրահայոց առաջնորդ և 1814 թ. մարտի 7-ին ժամանեց Տփլիս: Այս նոր միջավայրում լրբորեն ծանր ու թեթև անելով իրադրությունները և խորամուխ լինելով իր ինժանյան հանձնարար հոգի հոգեկոր կյանքի ու առօրյայի մեջ, Ներսես Աշտարակեցին հաճում է այն եզրակացության, որ անհետաձգելիորեն պետք է մտածել վրահայոց հոգևոր կյանքն ու կենցաղը քարվորելու մասին՝ արժատանիլ անել և հոգևոր իշխանության ուժով վերջ տալ ճնուցի վեր թույն դրած կենցաղային արատավոր սովորությունները, որոնք առանձնապես աղետարին էին երիտասարդության համար. դադարեցնել տգիտ և բարոյական հետաքննարկող շուրջը աճանց հոգեկորական ձեռնադրելը, որոնք հետո վատ օրինակ էին դառնում հասարակության համար. վերջապես՝ հիմնել դպրոց, ազգային ուսումնարան, ուր կարողանային ուսանել բոլոր կարգի ու դասի հայերը, որը վրահայոց և հայության ամենախոնավոր հատկանշիկ կարողանար տալ ուղիղ հովիվներ, զարգացած ուսուցիչներ և կրթված քաղաքացիներ:

Տփլիսում Ներսես Աշտարակեցու հրահանգներով բացված առաջին ճախապարտաստական դասարանն, ըստ Երիցյանի, գործել է 1815 թվականի վերջերի: Այն ուներ քսանմեկ չափ աշակերտ և տեղավորված էր Վանքի եկեղեցու հյուսիսային կողմում ընկած խցիկում, որոնք, չգիտես ինչու, տեղացիները «կոշկ» էին անվանում: Ուսուցիչը 1804 թ. Վաղարշապատից Տփլիս վերադարձված Հովհան Ոսկերչյան քահանան էր, մի մատենասեր, շրջաֆայոց ու հայրենասեր անձ: Ոսկերչյանը գրած է նաև իր ժամանակի անցքերի ընդարձակ պատմությունը, իր հուշագրությունները, որոնցից մեծապես օգտվել է հետագայում Հարություն Արարաթյանը:

Դպրոցի բոլոր աշակերտներն էլ հոգևորականների որդիներ էին և քահանայացուներ:

1821 թվականի սեպտեմբերի 18-ին Ներսես Աշտարակեցու հակորդյամ վերջնականապես առանձնացնելով ապագա ուսումնարանի տեղը, Վանքի Մայր եկեղեցու հնձորյա ու լքված գերեզմանից գետնի վրա, ինչպես նաև հավանություն տալով ճարտարապետի ներկայացրած ճախագծին, սկսվում են փորել հիմքերը: Օճերի հատակագիծը, Ներսես Աշտարակեցու խնդրանքով և գեներալ Ա. Պ. Երմոլովի հանձնարարությամբ, կազմել էր ինժեներ-տեխնիկոս Ֆ. Լեկելովը: Երբ հողային աշխատանքներն արդեն ավարտված էին, հաջորդ, 1822 թ. փետրվարի 7-ին, Ղևոնդյանց ճախատակների տոմին, հան-



դիտարկող պայմաններում, հայ ու այլազգի ակամավոր անձանց, հռչակավոր Երմոլովի և այլ ութ գեներալների ներկայությամբ, Ներսեսը կատարում է իր դպրոցի հիմնադրության հանդեսը. դրան են ապագա Ներսիսյան ուսումնարանի վիմերի հիմքերը, ստաշին շաղախը լցնում պատերի մեջ:

Ինչպես երևում է՝ նախորդ ողջ գիշերը Աշտարակեցին չէր քնել, թողակցություններով էր պարսպել: Խառնաժամանակ ապագա հաջողություններով՝ նա շտապում էր օր առաջ գտնել կարող և փորձված ուսուցիչներ, ճմուռ հայաց լեզվին ու եկեղեցու պատմությանը: Նրա հաջաբը հատնում է դեպի հյուսիս, և Լազարյան ճեմարանի այն օրերի տեսուչ Արովյանը պարզապես ինչպես իր նամակում խնդրում է, «զի գտեք Յարութիւնն որ երբեմն վարժապետ ձերում մանկանց համաձայնությամբ նոցին վնասազնութեան աղայ հովակիմայ և աղայ Խաչիկայ, պատրաստուշիք լոյլ վսան ուսումնարանի մերոյ յառաջիկայ պահոցն յորժամ պատրաստեսցին զարմանային յաջող ճանապարհորդութիւնք...»:

• •

Դպրոցի նոր շենքի շինարարությունը 1823 թվականին ընթացում էր արագ թափով: Հիմնադիրը կարծում էր, որ միանգամայն հիմնավոր կլինի նորակառույց շենքում հոկտեմբերից դասեր սկսել, շուրջ 400 աշակերտ այնտեղ դաստիարակել, ինչպես և դպրոցի տպարանը գործի գցել: Ուսուցիչ զխավոր հոգսը դարձյալ մնում էր ուսուցիչներ գտնելը: 1823 թ. մայիսի 10-ին Ներսես Աշտարակեցին հրավիրագիր է ուղղում ջուղպեցի պարոն «Բեդդաշե»-ին, որ ազգությամբ հայ էր և ապրում էր Թավրիզում՝ հորդորելով ժամանել «քաղաք Հայոց» Տփլիս և ստանձնել «Վրաստանի հայոց ուսումնարանի» «պարսկական

լեզվի ընթերցանության» դասերը: Նա բանակցում է գեներալ Ա. Երմոլովի հետ ևս՝ ուսաց լեզվի ուսուցիչ գտնելու շուրջ: Գեներալը թեպետ խոստանում է, սակայն Աշտարակեցին չի համաձայնում դրանով և մայիսի 14-ին, Մոսկվա հղած մի ժամանակոր նամակում, Լազարյանների և Արովյան վարդապետի կարծիքն է հարցնում:

1823 թ. նոյեմբերի երկրորդ կեսին վերջապես ծածկում են դպրոցի առաջին հարկը, հետո սկսում ներքին հարդարամաս աշխատանքները՝ ենթադրելով, գոնե, նոր տարում սենյակներից 4—5-ն օգտագործել: Նույն ամսին Տփլիս է ժամանում նաև պարսկերենի ուսուցիչ Բեդդաշեյը և հաջորդ տարվա սկզբից սկսում դասեր տալ, նախապես ունենալով միայն տասը աշակերտ: Բեդդաշեյի ուսուցչությունը շարունակվում է մինչև 1828 թ. ապրիլի 9-ը: Պարսկերենից իր աղքատիկ գիտելիքներն Արովյանը քաղել է նրա դասատվությունից, երկու տարվա ընթացքում:

Դպրոցական շենքից ու դասատուներից ո՛չ պակաս Ներսես Աշտարակեցուն մտառանում էր դասագրքերի խնդիրը: Քանի աշակերտները քիչ էին, մի կերպ կարելի էր գործն առաջ տանել, քայքայի՜նք անել, եթե աշակերտների թիվը հասներ նախատեսածին՝ 400-ից մինչև 800: Արդեն 1824 թ. փետրվարից մկատելով, որ հատկապես մեծ կարիք կա քերականության դասագրքի, Ներսեսը ճանաչվել խնդրում է կոստանդնուպոլսեցի ոմն Տեր-Մարտիկ և Մ. Սալյաթյանցին՝ ողջարկել իրենց երկաթիամ քերականության ձեռագրերը, որպեսզի հարմար գտնվելու դեպքում տպագրի, հակառակ պարագայում հարկադրված պիտի լինեին վերահրատարակելու Զառչյանի հիմն քերականությունը: Հետագայում այդպես էլ անում է:

(Գ. Հ. Հակոբյան, «Ժաշատոր Արովյան», Երևան, 1967 թ., էջ 162, 163, 165, 167, 184—185):





ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՍԵՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑԻ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
(1770—1857)

Մայր Աթոռ ս. Էջմիածնի կաթողիկոսների և 19-րդ դարի հայ ազատագրական շարժման պատմության մեջ իր ուրույն ու արժանավայել տեղն ունի Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսը:

Ներսեսը՝ տեր Հարություն քահանայի որդին, ծնվել է 1770 թվականի փետրվարի 18-ին Արագածոտն գավառի Աշտարակ գյուղում: Փոքր տարիքից նա աշակերտում է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում, որտեղ իր ուշիւնությամբ և աշխատասիրությամբ արժանանում է Դանիել Սուրմառեցի եպիսկոպոսի հովանավորությանը:

1796 թվականին Ներսես Աշտարակեցին, որպես օգնական, ուղևորվում է Դանիել եպիսկոպոսին Ջմյուռնիա, նրա նվիրակության տարիներին: Այս թվականից սկսվել մոտ 61 տարի շարունակ անխնայ ծրույթյամբ Ներսես Ե Աշտարակեցին աշխատում է մինչև իր կյանքի վերջին օրն իսկ, հաճում Մայր Աթոռի պայծառության և հայրենիքի բարօրության:

1799 թվականին երբ Դանիել Սուրմառեցի եպիսկոպոսը ընտրվում է Կ. Պոլսի պատրիարք, Ներսես Աշտարակեցին վերադառնում է Էջմիածին, ուր մնում է մինչև 1801 թվականի մարտի 20-ը, երբ որպես պատվիրակ ուղարկվում է Եվդոկիա՝ ճորճտիր Դանիել Սուրմառեցի կաթողիկոսին Էջմիածին՝ հրավիրելու:

1802 թվականի մայիսի 25-ին տեղի է ունենում Դանիել Սուրմառեցու օծումը:

1807 թվականի մայիսի 14-ին Ներսես Աշտարակեցին Դանիել կաթողիկոսից եպիսկոպոս է ձեռնադրվում:

1808 թվականի մայիսի 25-ին Մայր Աթոռում կազմված Սինդիի հոգևորական վեց անդամներից

մեկը Աշտարակեցին է լինում և աչքի է ընկնում իր բազմակողմանի գործունեությամբ:

1808 թվականի սեպտեմբերի 20-ին Ներսես Աշտարակեցին ամբաստանության ենթարկվելով Դավիթ կաթողիկոսի կողմից, հարցաքննության է ենթարկվում Աքրաս-Միրզա խանի կողմից, մեղադրվելով այն բանում, թե իբր Ներսես Աշտարակեցու խորհրդով և հրավերով է, որ ռուսները հարձակվել են Երևանի վրա: Աշտարակեցին Էջմիածնի Դիվանի միջից գտնում է Դավիթ կաթողիկոսի նամակը, ուղղված Ցիցիանովին, ռուսական բանակը հրավիրելու մասին, ու ներկայացնում Աքրաս-Միրզա խանին և ապացուցում Դավթի մեղավոր լինելն ու ներքում զրպարտանքը, որով Դավթի վերջնական կործանման պատճառ է հանդիսանում:

1808 թվականի սեպտեմբերի 30-ին, Դանիել կաթողիկոսի մահից հետո, տեղի է ունենում Եփրեմ Չորագեղցի կաթողիկոսի ընտրությունը:

Եփրեմի կաթողիկոսությամբ Ներսես Աշտարակեցին առավել ապահով է իշխանությամբ սկսեց բուռն գործունեություն ծավալել Մայր Աթոռում: Այս խանդավառ գործունեությունը դժգոհություն է առաջացնում մի խումբ չարամիտների մոտ՝ Հովհաննես Եպիսկ. Կարբեցու գլխավորությամբ:

1812 թվականի դեկտեմբերի 10-ին Ներսես Աշտարակեցին ներկայացնում է իր հրաժարականը՝ Սինդիից դուրս գալու, սակայն Եփրեմ կաթողիկոսը մերժում է նրա հրաժարականը:

1814 թվականի մարտին վթառացյոց թեմի առաջնորդ է ընտրվում: Աշտարակեցին կարգ ու կանոն է հաստատում թեմում և ամուր կապեր՝ Կովկասի կառավարչության և ռուսական արքունիքի հետ:





Ներսես և Աշտարակեցու տապանաքարը ս. Էջմիածնի Մայր տաճարի զանգակատան  
մարավարժության մասում

1816 թվականին Թիֆլիսի Վանք կոչված Մայր եկեղեցու շրջափակում, Գյուլյ կոչված տեղում, Ներսես Աշտարակեցին վարժարան է բացում, որտեղ սովորել են Խաչատուր Աբովյանը, Ստ. Նազարյանը, Առաքել Արարատյանը և ուրիշներ:

1821 թվականի սեպտեմբերին Աշտարակեցին ձևոնարկում է ապագա Ներսիսյան վարժարանի շինությանը, իսկ սրաշտոնական հիմնարկները տեղի է ունեցել 1822 թվականի փետրվարի 7-ին:

1824 թվականի սեպտեմբերին Ներսես Աշտարակե-

ցու՝ անդադրում չանցնելով բացվում է նորակառույց վարժարանը: Վարժարանի առաջին տեսչը եղավ Հարություն քհն. Ալամյարյանը:

Աշտարակեցի թիֆլիսում պաշտոնավարելով համ-դերձ, շարունակում էր վարել Էջմիածնի հոգևոր գոր-ծերը: Այս նպատակով է, որ 1828 թվականի հուլիսի 29-ին, ուս-պարսկական պատերազմի մախոյակին, եկեղեցական իշխանությանը, հայրենաշունչ շրջաբե-րական է ուղղում ուսանալուստակ շրջանների՝ Թիֆ-լիսի, Գանձակի, Արցախի, Նախիջևանի, Օսմանիի և Բաքվի համայն հայությանը՝ օգնելու ուստական

սանդր Նևսկու Ա կարգի շքանշան:

1827 թվականի նոյեմբերին, Երևանի գրավումից հետո, գեներալ Կրասովսկին նշանակվում է ճահան-գապետ, իսկ Ներսես Աշտարակեցին երկրորդ դեմք: Էր համարվում խորհրդականի հանգամանքով:

1828 թվականի փետրվարին Աշտարակեցին հե-ռացվում է Երևանի ժամանակավոր կառավարության գլխավոր խորհրդականի պաշտոնից՝ նշանակվելով Բեսարաբիայի թեմի առաջնորդ:

1828 թվականի հունիսի 4-ին Ներսես Աշտարակե-ցին մեկնում է Էջմիածնից իր նոր պաշտոնատեղին,



Ներսես Ե Աշտարակեցին ի գլուխ Մայր Աթոռի միաբանության և հայ կաթողիկոսական գնդի դիմավորում է ուսաց գործին

գների հաջողությանը. «Մնացուք քաջութեամբ ի վե-րայ եղբարց մերոց և ոչ խառնեցուք զանուն վա-տուրեան ընդ արութիւնս քաջութեան»:

1827 թվականի փետրվարի 2-ին Աշտարակեցին իր հայրենասիրական գործունեության համար ար-ժանանում է կայսերական երախտագիտության:

1827 թվականի ապրիլի 18-ին Ներսես Աշտարա-կեցին հայ կաթողիկոսների գլուխն անցած և ուսական գործը Բենեկնոսորժի հրամանատարությամբ մտան Էջմիածին:

1827 թվականի հոկտեմբերի 2-ին, Երևանի գրա-վումից հետո, բերդի պարիսպների տակ Ներսես Աշտարակեցին գոհաբանական մաղթանք է կատա-րում:

1827 թվականի հոկտեմբերի 26-ին Էջմիածնի Սի-նոդի փոխարեն Ներսես Աշտարակեցին կազմակեր-պում է վանական կառավարություն՝ իր գլխավորու-թյամբ:

1828 թվականի հունվարի 26-ին Նիկողայ կայսրի կողմից Ներսես Աշտարակեցուն շնորհվում է Ալեք-

Քեսարաբիա՝ որպես պատվավոր արտարական:

1830 թվականի ապրիլի 23-ին Կարբեցին նշա-նակվում է Թիֆլիսի առաջնորդ:

1831 թվականի մարտի 15-ին, հրաժարյալ ելիքն կաթողիկոսը դուրս կենդանի, ստիպողական պարա-գաների տակ Կարբեցին կաթողիկոս է ընտրվում:

1842 թվականի մարտի 26-ին Կարբեցին վախճան-վում է:

1848 թվականի ապրիլի 18-ին Էջմիածնի մեջ տեղի ունեցած ժողովը միաձայնությամբ կաթողիկոս է ընտրում 72-ամյա Ներսես Աշտարակեցուն, վերջի-նիս բացակայությամբ:

1843 թվականին Ներսես Աշտարակեցին ուղևոր-վում է Պետերբուրգ և նոյեմբերի 28-ին անձամբ կայսրից ստանում է իր հաստատության հրովարտա-կը և շքանշաններ:

1844 թվականի մայիսին մեկնում է Պետերբուրգից Մոսկվա, ուր գրադվում է եկեղեցական ու ազգային հարցերով, Լազարյան ճեմարանով:

1844 թվականի հուլիսին մեկնում է Մոսկվայից:



Նույն թվականին մեկնում է Քիշնև՝ իր թերի թողած գործերը ավարտելու: Այստեղ գտնված ութ ամիսների ընթացքում նա ավելի կազդուրվում է:

1845 թվականի սեպտեմբերին այցելում է Նոր Նախիջևան, դեկտեմբերի 13-ին՝ վաղիկով վաս, որտեղից հարյուր կազակ հեծյալների ուղեկցությամբ դեկտեմբերի 17-ին, շաքաթ օրը, մեկնում է Թիֆլիս: Աշտարակեցու Թիֆլիս մտնելու օրը կատարյալ

1848 թվականի դեկտեմբերի 17-ին, Լջմիաճնում օծումից վեց ամիս մնալուց հետո, վերադառնում է Թիֆլիս՝ իր սիրած ու փայփայած վարժարանի հարցով զբաղվելու:

1847 թվականին մի հանձնաժողով է կազմում և վիճակային կոմսիտորիայից պահանջում՝ վերջին 10 տարիների կատարած աշխատանքների ու հաշիվների վերաբերյալ տեղեկագիր:



Ներսես Ե Աշտարակեցու շորքառը

տուն էր. դիմավորելու էին եկել հայ, ռուս, վրացի, թուրք և քուրդ: Դիմավորելու էր եկել նաև փոխարքա Վորոնցովը անձամբ: Թիֆլիսում նա հառկապես զբաղվում է Ներսիսյան վարժարանի հարցով:

1846 թվականի մայիսի 15-ին դուրս է գալիս Թիֆլիսից, 8-ին հասնում է Երևան:

1846 թվականի հունիսի 9-ին մեծ հանդիսությամբ տեղի է ունենում Աշտարակեցու կաթողիկոսական օծումը, Մայր Աթոռի տոնի օրը:

Այսպիսով, 1843 թվականի ապրիլի 13-ին, ընտրությունից մինչև 1846 թվականի հունիսի 9-ը, Ներսես Աշտարակեցին թեև ոչ օձյալ, սակայն կաթողիկոսական գործերը դեկավարում է անձամբ ինքը:

1848 թվականի մայիսին Թիֆլիսի մեջ ժողով է գումարում, եկեղեցական-կրթական գործերով, ապա հուլիսի 1-ին վերադառնում Լջմիաճին:

1848 թվականի սեպտեմբերի 5-ին Կարապետ վրդ. Շահնազարյանին ճշանակում է Ներսիսյան վարժարանի տեսուչ:

1849 թվականի գարնանը Ներսես Աշտարակեցին կրկին գալիս է Թիֆլիս և վերադառնում 1850 թվականի հունիսին:

1852 թվականի ապրիլի 26-ին մորից Թիֆլիս է մեկնում վերջնականապես ավարտած լինելու համար կրթական հարցերը: Աշտարակեցին վարժարանի նոր տնտուչ է ճշանակում երիտասարդ մտավորական

Պետրոս Ծանջաճին: Աշակերտության թիվը հասցե-  
նում է 300-ի:

1852—1857 թվականներին Ներսես Աշտարակեցին  
գործերի բերումով մերթ էջմիածնում, մերթ Թիֆլի-  
սում էր լինում:

1857 թվականի փետրվարին Գործնորդ Ալեքսանդր  
Բ կայսեր հանձնարարականով Թիֆլիս է գալիս իշ-  
խան Բարաթիմսկին և իրեն անձամբ այցելած Ներ-  
սես Աշտարակեցուն հանձնում կայսեր ամունով  
սուրբ Անդրեի շքանշանը:

Փոխադարձ այցելություններ են տեղի ունենում  
իշխան Բարաթիմսկու և Ներսես Աշտարակեցու մի-  
ջև: Փետրվարի 12-ի գիշերը, երբ վերադարձել էր  
իշխանի կազմակերպած հերթական ընդունելությու-  
նից, կաթողիկոսն իրեն վատ է զգում, և 18-ի լույս  
առավոտյան Աշտարակեցուն վախճանված են զըտ-  
նում իր առանձնասնձակում, թաց գրիչը ձեռքին,  
86 տարեկան հասակում: Մեծ է լինում հայության,  
մանավանդ թիֆլիսցիների վիշտը:


Փետրվարի 17-ին Աշտարակեցու մարմինը դնում  
են առաջնորդարանի դահլիճը, ապա 18-ին՝ տեղա-  
փոխում վանքի Մայր եկեղեցին, ժողովրդյան մեծ  
թափուրով, որին մաս է կազմում փոխարքա Վորոն-  
ցովն իր շքախմբով:

Փետրվարի 23-ին էջմիածնից Թիֆլիս են հասնում  
սինդակաձև վեց եպիսկոպոսներ և փետրվարի 24-ին,  
հանդիսավոր պատարագից հետո, բազմազգ ժողո-  
վրդային թափրը, Ենթախանջիների դպրությանը  
և զինվորականության ուղեկցությամբ, ձգվում է միմ-  
չևի շաղաքի Երևանյան դուռը, ապա կաթողիկոսի  
անունը դրվում է ոսկեզօծ կառքի մեջ և 12 հեծյալ-  
ների ուղեկցությամբ, արագ ընթացքով, փետրվարի  
26-ին հասնում են էջմիածին և հաջորդ օրը, փե-  
տրվարի 27-ին, հանդիսավոր պատարագից և հոգև-  
հանգստյան արարողությունից հետո, Ներսես Աշ-  
տարակեցու մարմինը ամփոփվում է էջմիածնի Մայր  
տաճարի զանգակատան հարավ-արևմտյան կողմում:


Աշտարակեցու տապանաքարի վրա արձանագրված  
է «Պաշտպան հայրենեաց» բառերը: Ինքը Ներսես Ե  
Աշտարակեցին իր գիտակցական կյանքի ավելի քան  
61 տարիները ի սպաս դրեց հայ ժողովրդի միու-  
թյան ու ազատագրման գործին, Մայր Աթոռ ս. էջ-  
միածնի զորացման ու ծաղկմանը, հայ հասարա-  
կական մտքի ու դպրության զարգացմանը:

Թող հավերժ անթառամ մնա Ներսես Ե Աշտարա-  
կեցի կաթողիկոսի Գլխական հիշատակը:

ՀԱՎԱՐՔ ՍՐԿ. ԳՅՈՎԱԶԻՆ.







ՆԵՐՍԵՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ԾՆՆԴՅԱՆ 200-ԱՄՅԱԿԻՆ  
ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

**Ա. պատարագ և հոգեհանգիստ.**—Սեպտեմբերի 27-ին, կիրակի: Ազգիս Վեհափառ Հայրապետի փետրվար 13 թվակիր կոնդակի հրահանգի համաձայն Մայր Աթոռում ևս հանդիսավորությամբ նշվեց երջանկահիշատակ Ս. Տ. Ներսես Ե Աշտարակեցու ծննդյան 200-ամյակը:

Առավոտյան ժամը 11-ին Մայր տաճարում մատուցվում է ա. պատարագ: Պատարագում է ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Տիրայր վրդ. Փանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ տ. Գևորգ վրդ. Սեբադյանը ընթերցում է Վեհափառ Հայրապետի՝ Ներսես Աշտարակեցու ծննդյան 200-ամյակի առթիվ գրած 1970 թ. փետրվար 13 թվակիր կոնդակը:

Հավարտ ա. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափոռով առաջնորդվում է Մայր տաճարի զանգակառան հարավ-արևմտյան կողմում գտնվող Աշտարակեցու շիրիմը և հախագահում հոգեհանգըստյան արարողությանը:

Ա. պատարագին, ինչպես նաև հոգեհանգըստյան արարողությանը, ներկա էին բազում ուխտավորներ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Լիբանանից և այլ վայրերից ժամանած հավատացյալների հոծ բազմություն:

**Հորեյանական հանդիսություն Վեհաբանում.**—Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհաբանի հանդիսությանը դասվում տե-

ղի է ունենում հորեյանական հանդիսություն՝ Վեհափառ Հայրապետի բարձր հախագահությամբ՝ նվիրված Ներսես Ե Աշտարակեցու կյանքին ու գործունեությանը:

Հանդիսությանը ներկա էին շուրջ 300 հրավիրյալներ, այդ թվում՝ Գերագույն հոգեվոր խորհրդի անդամները և Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր անմարանի դասախոսական կազմը, մայրավանքի պաշտոնեությունը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շրջանավարտների միության ներկայացուցիչներ, մտավորականներ:

Հանդիսությանը ներկա էին նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Կիլիկյան Աթոռի միաբաններ տ. Ղևոնդ արքեպ. Չեպեյանը, տ. Տաճատ արքեպ. Ուրֆայանը և տ. Տիրայր վրդ. Փանոսյանը:

Հանդիսությունը բացվում է ՀՍՄՀ պետական հիմնի նվագով: Ապա կատարվում է «Որք զարդարեցին» շարականը:

Հոգևոր անմարանի տեսուչ տ. Ծնորմը վրդ. Գառապրյանը հանդես է գալիս հանդիսության բացման խոսքով՝ նշելով բազմավաստակ Հայոց Հայրապետի կյանքի և գործունեության ուսանելի հանգրվանները:

Օրվա գլխավոր բանախոսն էր «Էջմիածին» ամսագրի խմբագիր և հոգևոր անմարանի ավագ դասախոս Ա. Հատիսյանը, որը հանդես է գալիս Աշտարակեցու կյանքին և գործունեությանը նվիրված բովանդակալից

և ոգևորիչ գեկուցումով, որը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 22):

Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և Ներսիսյան դպրոցի շրջանավարտ, արվեստաբան Ա. Մելիքսեթյանը ողջույնի խոսք է ասում՝ վեր հանելով Ներսիսյան դպրոցի կատարած լուսավորական դերն ու նշանակությունը բնդհանրապես հայ մշակույթի և ի մասնավորի հայ մանկավարժական, գիտական մտքի զարգացման, ինչպես նաև արվեստի և այլ բնագավառներում:

Հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Հ. Ժ. Սիրունին, հանուն սփյուռքի հայ մտավորականության, ողջույնի խոսք է ասում:

Հանդիսության առաջին մասն ավարտվում է «Էջ Միածինն ի Հօրե» շարականի նվագով:

Տասր րոպե ընդմիջումից հետո սկսվում է հանդիսության գեղարվեստական մասը:


Առաջինը հանդես է գալիս 12-ամյա երգահան-դաշնակահար Արտեմ Ղազարյանը, որը դաշնամուրի վրա կատարում է Սկառլատիի «Մի միևր» սոնատը և իր «Գիշեր և հափշտակում» ու «Ալերցո» ստեղծագործությունները:

Հանրապետության վաստակավոր արտիստուհի Բեյա Դարբինյանը հուզումով կատարում է՝ «Երևանի գիշերները» (Ա. Դովլանյան), «Մայր» (Նովիկով), «Ամարիլիս» (Գաչինի), «Յար, առանց քեզ» (Գուսան Աշոտ) երգերը:

Համերգի վերջում հանդես է գալիս Հայկական պետական ֆիլհարմոնիայի լարային քառյակը՝ հետևյալ կազմով. Լևոն Մամիկոնյան (առաջին ջութակ), Մարտին Երիցյան (երկրորդ ջութակ), Յուրի Մանուկյան (ալտ) և Ֆելիքս Սիմոնյան (թավջութակ):

Բառյակը մեծ վարպետությամբ կատարում է. «Հունգարական պար» (Բրամս), «Հնդկական հյուրի երգը» (Ռիմսկի-Աորսկով), Չորրորդ մաս «Ին թեմոլ մածոր» և «Երաժշտական ակնթարթ» (Ծուբեյրո), Առաջին մասը «Առաջին կվարտետ» (Ա. Այվազյան), «Գարուն ա», «Կոունկ», «Կաքավիկ» և «Կաղարշապատի պար» (Կոմիտաս) հանճարեղ ստեղծագործությունները:

Երջանկահիշատակ Ս. Տ. Ներսես Ե Աշտարակեցու հիշատակին նվիրված սույն հանդիսությունը վերջանում է երեկոյան ժամը 10-ին, խանդավառ մթնոլորտում:







## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

**Օգոստոսի 30-ին, կիրակի.—Տօն Գիտի Գոտեյ Սրբառնոյ Աստուածածնի.**

Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Հակոբ քմն. Հակոբյանը:

..

**Մեպտեմբերի 1-ին, երեքշաբթի.—Այսօր, մատիշօրնի ժամը 14-ին, ուխտավորացայ Մայր Աթոռ է ժամանում Լիբանանի հայոց քեմի առաջնորդ տ. Տաճատ արքեպ. Ուրֆայանը: Երևանի օգնականպարանում արքեպզան հորը դիմավորեցին տ. Հուսիկ եպս. Սահյուրյանը և Դավարոս արկ. Աշոտեղյանը:**

..

**Մեպտեմբերի 3-ին, հինգշաբթի.—Երեկոյան ժամը 21-ին Մայր Աթոռ վերադարձավ, Հայրախանի Ամերիկա կատարած իր ուղևւորությունից, հոգևոր մեծարանի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գառպարյանը:**

..

**Մեպտեմբերի 6-ին, կիրակի.—Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Գեվորգ վրդ. Սերադաբյանը և քաջողով՝ տ. Շնորհք վրդ. Գառպարյանը՝ «Եկաք առ իս ամենայն վատասկեալք և բեռնատրք և ես հանգուցից դրեզ» քնարանով:**

Ա. պատարագին ներկա էր Վեմափառ Հայրապետը:

..

**Մեպտեմբերի 9-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 12-ին, Վեմափառ Հայրապետը Վեմարանում ընդունում է աղեկաբայունը Շեղունի քույրդարական հոգևոր տնտի և նրա երկու ուղեկիցներին:**

..

**Մեպտեմբերի 10-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեմարանում գումարվում է Գերազույն հոգևոր խորհրդի ներքազան միտքը՝ Վեմափառ Հայրապետի համապատկարհուն ներքո:**

..

**Մեպտեմբերի 11-ին, ուրբաթ.—Այսօր, ժամը 14-ին, Նրուսաղեն մեկնեց, Վեմափառ Հայրապետի կարգադրությամբ, Մայր տաճարի յուստարարապետ տ. Հայկազուն արքեպ. Արքառամյանը՝ մասնակցելու համար Նրուսաղենում ամենապատիվ տ. Շեղեկ պատրիարքի համապատկարհուն ներքո կազմված հայկապոսական հանձնաժողովի նիստերին, որը քննարկելու է Մայր Մաշտոցի և Ջեռնադրության Մաշտոցի կրճատման հարցերը՝ այն Վեմափառ Հայրապետին ներկայացնելու հայտնի հայկապոսաց ժողովի զոմարումից առաջ:**

Նույն օրը, երեկոյան ժամը 21-ին, Ռամենիայի Մայր Աթոռ ժամանեց պրոֆ. Հ. Սիրունին:

**Սեպտեմբերի 12-ին, շաբաթ.**—Այսօր, տասներորդան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետին են սպելում տ. Բարսեղ եպ. Վարժապետյանը և Կարապետ Սյուրանյանը՝ ԱՄՆ-ից:

**Սեպտեմբերի 18-ին, կիրակի.**—Խաչվաթա.

Մայր տաճարում հանդիսավոր ա. պատարագ է ժատուցում տ. Հուսիկ եպ. Սանթրոքյանը:

Հաջորդ ա. պատարագի քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Մյուսն է նոցա, որ մազմանայ իցեն վասն ազգաբարձրան, գի նոցա է արցաբարձիս երկնից» քնարանով: Իր քարոզի մեջ Վեհափառ Հայրապետ արտաբով ոգեկոչում է հաև Այնթապի Ռեյտահարտի 50-ամյակի առիթով գովածների խնկիկի Ռիչարտանը: Այս Վեհափառ Հայրապետը հաժազանում է Ռոզեհանգաղտան արարողությանը, որին ներկա են լինում ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Իսրանիայից, Սիրիայից ժամանած Այնթապի Ռաբինակաղտան փոքրտունների պաշտահանան ներկայացուցիչներ և Ռաբինակաղտան քաղում այն թապցիներ:

Ա. պատարագի և Ռոզեհանգաղտան արարողությանը ներկա են լինում հաև ամերիկահայ, Ֆրանսիայի և իսրանահայ ուղտավարական հոծ խմբեր, որոնք Վեհաթանում աշանամբուրով տառում են Հայոց Հայրապետի օրհնությունները: Հայոց Հայրապետը զերմորեն ողջունում է ուղտավարական խմբերի ժամանումը Մայր Աթոռ և, իտար առնկով, շեշտում է՝ Մայր Աթոռ ա. Եզմիածին և մայր Ռաբինիք ուղտի գաղտ Ռոզար և Ռաբինակաղտան նշանակություն և Ռոզարում է՝ ապրել միշտ Մայր Աթոռ ա. Եզմիածին օրհնությամբ և վերածնված Ռազար աշխարհի վառ գաղտուններով: Ուղտավարներից շատերը զերմ երաժաշտափոքրտան և շնորհակաղտության իտար են առում Հայոց Հայրապետին՝ արտադին ընդունկություն և Ռաբինակաղտան Նրա պառազանների համար:

Մերկույան ժամը 16-ին Վեհափառ Հայրապետը հաժազանում է Մայր տաճարում Խաչվաթաի թափոթին, ժամանակությամբ Մայր Աթոռի միաթաղտան և ի ներկաթության իտունկան հաժազաղտանների:

**Սեպտեմբերի 14-ին, երկուշաբթի.**—Մեհկոց.

Մայր տաճարում պատարագից տ. Հուհաննես քնն. Մարտիրոսը:

Հաջորդ ա. պատարագի տեղի է ունենում Ռոզեհանգաղտան՝ «վասն հաժարեն ներկեղտու Նոյն օրը, երկուրան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետը «Ռառան» հաժարանում հաժազանում է Նոր Այնթապի անվանակաթության առիթով կազմակերպած հաժազանթապցիների հաչկությունին՝ Իր օրհնությամբ և Ռաբինակաղտան հաժաղ ուղտերով բուր մերկաներին:

**Սեպտեմբերի 15-ին, երեքշաբթի.**—Այսօր Մայր Աթոռ են ժամանում Երեկոյան Աթոռի միաթաղտան տ. Վանկ աղտից. Չաչկույան և տ. Տիրաթ զրգ. Փանաղտան:

Մրևանի պառազանկաղտանում հաղտիկի Ռոզերին զմեղաթրեցին տ. Հուսիկ եպ. Սանթրոքյանը և Արարատ արկ. Գաղաղտանը:

**Սեպտեմբերի 20-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում ա. պատարագ է ժատուցում տ. Մուշեղ զրգ. Ռաբինիքանը՝ «Հայր մեր»-ից առաջ քարոզից տ. Տանատ արքեպ. Ռոբիպաղտանը՝ «Սա զիտայ քա և եկ զկնի իմ» քնարանով:

Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

**Սեպտեմբերի 21-ին, երկուշաբթի.**—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Մայր տաճար աղտիցին Մրևանում հոքաթաթար գառնկով Մոհի թաղարաղտու Լուի Գրաղտից, թաղարաղտաթության իտերնի անդամներ, Մոհի հաժանի Ֆրանս—ԱՄՄ քարեկառուրան ինկերություն հաժազան, իրազանտ Ամբր և ուրիշներ:

Հաղտիկի Ռոզերը, որոնց թվում էր հաև Մոհի հաղ հաժայինի ժառար աղազաններից Նաղտեհն Գուղաթյանը, հաժազանորեն ծանոթաղան Մայր տաճարի պատարագի և աղա աղտեղին Մայր տաճարի առնիքի երեկեղտան արկտուի թաղարաղտան:

Այնուհետև Վեհաթանի հանդիսաթաղան զառնկում հաղտիկի Ռոզերին ընդունց Ամանակ Հայոց Վեհափառ Հայրապետը: Ն. Սրթաթյուն և Մոհի պարուն թաղարաղտուց ողտուց և թաղաղաղտան հաղտ և հաժաներին փոխանակեցին:

Աղտում Ռոզերը հոքաթաղտեղին Վեհաթանի աղտ քնտիր մղտերով:

Մոհի պարուն թաղարաղտուց և իրեն ընկերակաղտ պաշտանական ողտեղները հոքա-



ծեշտ առանձնական Հայրապետից և Մայր Աթոռից լավագույն տպավորություններով:

\*  
\*

**Սերտեմբերի 27-ին, կիրակի.—Տօն է Վարդապետ Սրբոյ Խաչի.**

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Տիրայր վրդ. Փանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը ընթերցում է Ներսես Ե կաթողիկոս Աշտարակեցու ծննդյան 200-ամյակին նվիրված 1970 թվականի փետրվար 13 թվակիր հայրապետական կոնդակը: Հավարտ պատարագի քարոզում է Վեհափառ


Հայրապետը՝ «Ինձ կեանք Քրիստոս է, և մեռանել՝ շահ» բնաբանով: Իր քարոզում Վեհափառ Հայրապետը ոգեկոչում է նաև հիշատակը Ուրֆայի հերոսամարտում զոհվածների:

Քարոզից հետո տեղի է ունենում հոգեհանգիստ՝ Ուրֆայի հերոսամարտի զոհվածների հիշատակին:

\*  
\*

**Սեպտեմբերի 28-ին, երկուշաբթի.—Այսօր, հետմիջօրեի ժամը 14-ին, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, Բեյրութ մեկնեց Լիբանանի հայոց թեմի առաջնորդ տ. Տաճատ արքեպ. Ուրֆայանը:**





## Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ 1970—1971 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԾՐԶԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 7-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11.30-ին, տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 1970—1971 ուսումնական տարվա հանդիսավոր բացումը:

Հանդիսությունը նախագահում էր Վեհափառ Հայրապետը:

Ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և քաղմաթիվ ծնողներ:

Հանդիսությունը բացվեց Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագով: Ապա հոգևոր ճեմարանի երգչախումբը կատարեց «Որք զարդարեցին» թարգմանչաց շարականը: Այնուհետև հոգևոր ճեմարանի դասախոս տ. Գևորգ վրդ. Սերադյարյանը ընթերցում է Մատթեոսի Ավետարանից «Սերմնացանի ստակ»-ը: Երգչախումբը կատարում է «Աշակերտը Քրիստոսի» շարականը:

Ապա հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ծնորին վրդ. Գաապարյանը հանդես է գալիս քացման ոգևորիչ ճառով և վեր է հանում հոգևոր ճեմարանի դերը ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում հայ եկեղեցու պաշտության և մեր ժողովրդի հոգևոր, քրիստոնեական և հայրենասիրական դաստիարակության շնորհակալ գործում:

Տեսուչ հայր սուրբը կոչ է անում ուսանողությանը՝ լինել համեստ, խելացի, աշխատել

տեղ ալեկի արդյունավետ կերպով, գիտություն ամբարել, պատրաստվել զալիք օրերի ծառայության սուրբ գործին, որին անհամբեր սպասում են մեր եկեղեցին, մեր ժողովուրդը: Տեսուչ վարդապետը ջերմ խախտեսություններ վստահեցնում է Վեհափառ Հայրապետին, որ Աստծու օգնությամբ և Ն. Ս. Օծության անմիջական հոգատարության ներքո այս տարի ևս ճեմարանի կամարների տակ, ձեռք-ձեռքի տված դասախոսների հետ, միասնական ու սիրով կաշխատեն՝ իր կոչման քարձրության վրա պահելու ուսումնա-դաստիարակչական գործը հոգևոր ճեմարանում:

Իր խոսքի վերջում տեսուչ հայր սուրբը հայցում է Վեհափառ Հայրապետի օրհնությունը սույն ծանր, պատասխանատու, սակայն պատվաբեր գործը հաջողությամբ պսակելու համար:

Ա խորանի ուսանող վրեժ Նաչարյանը ընթերցում է մի հատված Նարեկից՝ ս. Հոգու շնորհաբաշխությանը նվիրված:

Ապա խանդավառ մթնոլորտում հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը և Իր հայրական խրատներով և հորդորներով մի անգամ ևս քաջալերում ուսանողությանը:

Հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական արդյունով:

Ժամը 13.30-ին Վեհափառ Հայրապետը



բարեհաճում է վեհաբանում ընդունել դասախոսական կազմին շնորհավորում ուսումնական նոր տարին օրհնում նրանց աշխատանքը, տալիս մի շարք կարևոր խորհուրդներ և թելադրություններ ուսումնա-դաստիարակչական աշխատանքների վերաբերյալ:


Սեպտեմբերի 8-ին, առավոտյան ժամը 9.30-ին, ուրախ ու տոնական է հնչում մեծարանի հարկի տակ 1970—1971 ուսումնական տարվա առաջին զանգը:

Այս տարի հոգևոր մեծարանում կատարվեց 15 նոր ուսանողների ընդունելություն:

Հոգևոր մեծարանում ուսանողության ընդհանուր թիվն է 46՝ քաժանված հետևյալ դասարանական և լսարանական բաժինների վրա.

Ա դասարան՝ 14  
Բ դասարան՝ 9  
Գ դասարան՝ 10,  
Ա լսարան՝ 7,  
Գ լսարան՝ 6:

Այս ուսումնական նոր տարվա առիթով սպասվում են ուսանողներ և՛ Լիբանանից, և՛ Երուսաղեմից:





## ԱՎԱՐՏԱԾԱՌԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 19-ին, շաբաթ օրը, ժամը 12-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությանը դահլիճում, Վեհափառ Հայրապետի քարձր նախագահությամբ, տեղի ունեցավ 1969—1970 ուսումնական տարվա հոգևոր ճեմարանի շրջանավարտներ քարեշնորհ Ղազարոս սրկ. Կյուրեղյանի, Կարպիս սրկ. Գալստյանի և Վարդան սրկ. Տեղեքյանի ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը և վկայականների հանձնումը:

Հանդիսությանը ներկա էին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տանն՝ Կիլիկիայի՝ Անթիլիասի կաթողիկոսության միաբան տ. Ղևոնդ արքեպ. Չեպեյանը և տ. Տիրայր վրդ. Փանոսյանը:

Քննիչ հանձնաժողովի կազմում էին՝ ճեմարանի ավագ դասախոսներ Ա. Հատիսյանը, Կ. Ավետիսյանը, Պ. Ծափազյանը, Գր. Գյուլյանը և Ս. Անթույանը:

Ուսանողների հերկայացրած գրավոր ավարտաճառերը հանձնաժողովն արդեն քննել էր և գրավոր միջնորդություն հարուցել ճեմարանի տեսչությանը՝ նրանց բանավոր պաշտպանության թույլտվության համար:

Քննիչ հանձնաժողովի անդամ Ա. Հատիսյանը ըստ էության խոսում է ներկայացված ավարտաճառերի արժանիքների և թերությունների մասին:

Այնուհետև առանձին-առանձին խոսք է տրվում շրջանավարտ սարկավագներին, ո-

րոնցից յուրաքանչյուրը համառոտակի պատմում է իր կատարած աշխատանքի մասին և պատասխանում հանձնաժողովի անդամների հարցերին:

Բարեշնորհ Ղազարոս սրկ. Կյուրեղյանի ավարտաճառի նյութն է «Տարոնի սրբավայրերը», որը բաղկացած էր առաջաբանից և երեք գլուխներից, շուրջ 60 մեքենագրված էջ ծավալով:

Ավարտաճառի բանավոր պաշտպանությունը գնահատվում է «գերազանց»:

Բարեշնորհ Կարպիս սրկ. Գալստյանի ավարտաճառի նյութն էր «Հայ-ռուս եկեղեցական հարաբերությունները», որը բաղկացած էր առաջաբանից և հինգ գլուխներից, շուրջ 50 մեքենագրված էջ ծավալով:

Ավարտաճառի բանավոր պաշտպանությունը գնահատվում է «լավ»:

Բարեշնորհ Վարդան սրկ. Տեղեքյանի ավարտաճառի նյութն է «Հովհաննես Երզնկացիի որպես մատենագիր և երաժիշտաւարան», որը բաղկացած էր առաջաբանից և յոթ գլուխներից, շուրջ 60 մեքենագրված էջ ծավալով:

Ավարտաճառի բանավոր պաշտպանությունը գնահատվում է «գերազանց»:

Հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ծմորհր վրդ. Գաապարյանը շնորհավորում է շրջանավարտների ավարտաճառերի հաջող պաշտպանությունը և խնդրում է Վեհափառ Հայրապետին՝ իր օրհնությունը տալ՝ հանձ-



նելով նաև վկայականները:


Այնուհետև քարեշնորհ սարկավագները հերթով մոտենում են Վեհափառ Հայրապետին, համբուրում Նրա աջը և, ծափահարությունների ներքո, ստանում իրենց դիպլոմները:

Վերջում հայրական օրհնության ջերմ ու սրտատույ խոսք է ասում Վեհափառ Հայրապետը՝ իր բարձր գնահատության արժանացնելով հոգևոր ճեմարանում կատարված ուսումնա-դաստիարակչական աշխատանքները և, շնորհավորելով շրջանավարտ սար-

կավագներին, թելադրում է, որ այսուհետև էլ միշտ լինեն որքան հավատքի ու ծառայության, նույնքան և ուսման ու կրթության մշակներ, և իրենց երիտասարդական թարմ ուժերով կատարեն սպասք մեր եկեղեցուն և մեր հայրենիքին:

Հոգևոր ճեմարանի հարկի ներքո 1969—1970 ուսումնական տարվա շրջանավարտների դիպլոմային պաշտպանությանը նվիրված հանդեսը ավարտվում է հայրապետական «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերումնական աղոթքով:





## ՈՒՂՂԱՓԱՌԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՐՐՈՐԴԻ ԽՈՐՀՐԴՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի օգոստոսի 16—21 օրերին ժնկի Սենազ կրոնական կենտրոնում տեղի է ունեցել ուղղափառ եկեղեցիների ներքոյ խորհրդակցությունը: Նախորդ երկու ժողովները տեղի են ունեցել, առաջինը՝ 1964 թվականին Դանիայի Աարհուս և երկրորդը՝ 1967 թվականին Անգլիայի Պրիստոլ քաղաքներում:

Այս խորհրդակցության նպատակն է եղել հարթել բյուզանդական օրթոդոքս և հին առեկելյան ուղղափառ եկեղեցիների միջև դարեր շարունակ գոյություն ունեցող դավաճաբանական տարակարծությունները, որոնք սկիզբ էին առել տակավին 451 թվականի Քաղկեդոնի ժողովից:

Հանուն Հայաստանյայց եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի խորհրդակցությանը մասնակցում էին Վիեննայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը և ժնկի հայոց հոգևոր հովիվ տ. Ներսես ծ. վրդ. Ողապայանը:

Խորհրդակցության հինգ օրերի ընթացքում գլխավորապես քննվել և ուսումնասիրության նյութ են դարձել հետևյալ հարցերը՝ Քաղկեդոնի ժողովը, Քաղկեդոնից նախորդող և հաջորդող պատմական դեպքերը, տիեզերական ժողովների դերը եկեղեցու դավանաբանության և հոգևոր կյանքում, Դ, Ե, Զ և է «տիեզերական» կոչված ժողովների ընդունման կամ մերժման հարցը, տիեզերական ժողովների դավանաբանական որոշումներն ու կանոնները, միակամյա վարդապետությունը, երկու ընտանիքների ավանդություններին՝ պատկանող սրբերը և փոխադարձ դատապարտություններն ու անեծքները:

Ժողովում ընթերցվում են մի շարք ուսումնասիրություններ: Մեր եկեղեցու անունից տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը հանդես է

գալիս «Առաջին երեք տիեզերական ժողովները և նրանց նշանակությունը հայ եկեղեցու համար» զեկուցումով:


Հայ եկեղեցու պատգամավորները գործոն մասնակցություն են ունեցել ժողովի աշխատանքներում: Նրանք զանազան առիթներով պարզել և բացատրել են հայ եկեղեցու դավանաբանությունը, տեսակետը՝ զանազան հարցերի մասին, դիրքը՝ Քաղկեդոնի ժողովի նկատմամբ և հերքել են մի շարք թյուրիմացություններ և սխալ մեկնաբանություններ հայ եկեղեցու պատմության և անտվածաբանության վերաբերյալ: Նրանք շեշտել են քույր եկեղեցիների հետ համագործակցության անհրաժեշտությունը, սակայն հրստակորեն ժխտել են վարչական վերամիության կարելիությունը:

Ժողովը մշակում և հրապարակում է երկու տեղեկագրեր, որոնցից առաջինը ամփոփում է խոսակցությանը և վիճաբանությունների բովանդակությունը, իսկ երկրորդը՝ թեւադրություններ և առաջարկներ, որոնցից գլխավորներն են՝ փոխադարձ այցելություններ եկեղեցիների պետերին, եպիսկոպոսների և աստվածաբանների կողմից: Նման այցելություններ անցյալում մեծապես նպաստել են քույր եկեղեցիների միջև փոխադարձ վստահության, հասկացողության, համաձայնության և սիրո ամրապնդմանը:

Սույն ժողովի բովանդակության և եզրակացությունների խմբագրության հանձնախմբի անդամ է ընտրվել տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը: Նա նույնպես ընտրվել է հինգ անդամներից մեկը այն հանձնախմբի, որը պիտի շարունակի կազմակերպել հետագայում համաման խորհրդակցություններն ու աշխատանքները:

Օգոստոսի 21-ին, ուրբաթ օրը, ժողովն ավարտել է իր նստաշրջանը:





## Ս Փ Յ Ո Ւ Ռ Ի Գ Ո Ւ Մ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ  
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ 68-ՐԴ ԹԵՍԱԿԱՆ  
ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի 68-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը գումարվել է 1970 թվականի մայիսի 1—2-ին, ուրբաթ և շաբաթ օրերին, Նորտ Ֆիլադելֆիայի Չեյթենհամի հայոց ս. Երրորդություն եկեղեցու սրահում: Ժողովին նախագահել է թեմակալ առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը: Սրբազան հոր աղոթքով սկսվել է ժողովը, որին հրավիրված են եղել շուրջ 60 եկեղեցական և 50-աշխարհական պատգամավորներ:

Թեմական պատգամավորական ժողովի առաջին նիստը բացվում է ուրբաթ օրը, ժամը 13-ին: Նախ տեղի է ունենում պատգամավորների ստուգում և դիվանի ընտրություն: Այս առաջնորդ սրբազան հայրը կարդում է Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքը՝ ուղղված համագումարի մասնակիցներին:

Այնուհետև թեմական տարեկան իր հաշվետու գեկուցումով հանդես է գալիս առաջնորդ սրբազանը, որն իր գեկուցման մեջ լայնորեն անդրադառնում է թեմում կատարված եկեղեցաշեն-ազգագուտ գործերի ընդհանուր պատկերը. «Երախտապարտ ենք Վեհափառ Հայրապետին,—իր խոսքի վերջում ասում է սրբազանը,—այս օգտաշատ կարգադրության համար, և վստահ ենք, որ ս. Էջմիածնի դարավոր պատմության հավերժական շղթայի գորավոր մեկ օջախը պիտի շարունակե մնալ մեր թեմը, ինչպես

ման սփյուռքի մեջ գործող բոլոր թեմերը՝ ապահովելով անստան միությունը մեկ և անբաժանելի Հայաստանյայց եկեղեցիին, Ամենայն Հայոց Հայրապետության հովանիին ներքո»:

Այս ընթերցում են թեմական խորհրդի վարչական և տնտեսական տեղեկագիրը և հոգևորականների տարեկան համագումարի գեկույցը:

Երկրորդ նիստը տեղի է ունենում մայիսի 2-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 9—13-ը, որի ընթացքում քննության են առնվում ներկայացված հարցերը:

Երրորդ նիստում շարունակվում են օրակարգի մյուս հարցերը: Սույն ժողովում հաստատվում է առաջնորդարանի 1970 թվականի տարեկան բյուջեն:

Վերջին՝ Դ նիստում պատգամավորական ժողովը զբաղվում է հետևյալ հարցերով. ընտրություն թեմակալ առաջնորդի, ընտրություն կալվածոց ավանդապահ մարմնի մեկ անդամի, ընտրություն վերստուգիչ հանձնաժողովի, և որոշում՝ հաջորդ թեմական պատգամավորական ժողովի գումարման վայրի:

Դ նիստում, խանդավառ մթնոլորտում, ձայների մեծամասնությամբ (103 քվե) թեմակալ առաջնորդ է վերընտրվում տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը:

Քվեարկության արդյունքը ժողովականներին հայտնեցուց հետո, թեմակալ սրբազանը հոգևոր հայրերի և պատգամավորների առաջնորդությամբ, հրաշափառով ա-



Պատգամավորական ժողովից մի պահ



ռաջնորդվում է տաճար, որտեղ մա իր շնորհակալությունն է հայտնում բոլոր ներկաներին՝ իրեն վստահված սույն դժվարին, սակայն պատվաբեր գործի համար: Առաջնորդ սրբազանը վերստին շեշտում է, որ իր ուժերի բովանդակ լարումով կաշխատի հոգևոր և ի պաշտառություն մեր եկեղեցու, Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնության և հովանու ներքո:

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՑԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԱՏՅԱՆ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

1970 թվականի մայիսի 1—2-ը Կալիֆոռնիայի Ֆաուլթր բաղադրի ա. Գրիգոր Լուսավորչի եկեղեցում գումարվել է Հյուսիսային Ամերիկայի հայոց արևմտյան թեմի 43-րդ թեմական պատգամավորական ժողովը, որին նախագահել է թեմի առաջնորդ տ. Եղիշե եպս. Սիմոնյանը՝ առեմապետության Տիրան Անարոնյանի:

Ժողովականները հոտակալա ունկնդրում են Ամենայն Հայոց Հայրապետի՝ 1970 թվականի ապրիլի 13 թվակիր օրհնության գիրք: Ապա կատարվում է պատգամավորների ստուգում: Հրավիրված 63 պատգամավորներից առաջին նիստին ներկա են լինում 45-ը: Կատարվում է դիվանի և հաճնածոյովների ընտրություն:

Այնուհետև թեմի տարեկան գործունեության վերաբերյալ զեկուցումով հանդես է գալիս սրբազան առաջնորդը: Ատենադպիր Գևորգ Մանտուսյանը ընթերցում է թեմական տարեկան տեղեկագիրք:

Ապա ընթերցվում է զանազանի և հաշվեքննիչ հաճնածոյովների տեղեկագրերը: Թեմական ժողովի երկրորդ նիստը գումարվում է մայիսի 2-ին, որին ներկա են լինում 52 պատգամավոր:

Ամառային Քեմքի հաճնախմբի առեմապետը տեղեկություններ է տալիս հաճնախմբի գործունեության մասին:

Այնուհետև կարդացվում են թեմական վերականգնակերպության հատուկ տեղեկագիրք, ինչպես նաև՝ կաճնածոյովության բարեփոխման հաճնածոյովի տեղեկագիրք:

Ժողովում քննարկվում է նաև հայրավալին Կալիֆոռնիայի եկեղեցիների խորհրդին հայ եկեղեցու անդամակցության հարցը:

Ժողովի Գ նիստը գումարվում է նույն օրը, ժամը 2-ին, 56 պատգամավորների ներկայությամբ:

Հյուսիսային Ամերիկայի հայոց առաջնորդական վիճակի 68-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը մեծ հաջողությամբ և արդյունավետությամբ ավարտում է իր աշխատանքը մայիսի 2-ին, հետմիջօրեի ժամը 5-ին: Իսկ ժամը 7-ին եկեղեցու սրահում, ի պատիվ պատգամավորների, տրվում է ճաշկերույթ, որն անցնում է խամդավառ մթնոլորտում:

Առաջնորդ սրբազան հայրը նիստում տեղեկություններ է հաղորդում ս. Ներսես աստվածաբանական վարժարանի մասին:

Ժողովի սույն նիստում քննվում է նաև ս. Ծնունդը արևմտյան եկեղեցիների հետ տունկալ հարցը:

Ապա ժողովականներին է ներկայացվում թեմի 1970 թվականի բյուջեն ի քննություն: Այնուհետև ժողովի անցնում է թեմական առաջնորդի ընտրության: Չայների մեծամասնությամբ ճորից առաջնորդ է վերընտրվում տ. Եղիշե եպս. Սիմոնյանը:

Թեմական ժողովի Գ նիստը շարունակվում է նույն օրը, երեկոյան ժամը 9.30-ին: Ժողովի սույն նիստում ընտրվում է թեմական խորհրդի նոր կազմ, ժան Մ. Պոպանյանի՝ առեմապետության: Այնուհետև քննվում է հաջորդ տարվա թեմական ժողովի գումարման տեղի հարցը:

Հյուսիսային Ամերիկայի արևմտյան թեմի թեմական ժողովը իր աշխատանքներն ավարտում է համերաշխ և խանդավառ մթնոլորտում: Քննվող օրակարգի բոլոր հարցերի շուրջ ընդունվում են համապատասխան որոշումներ:

Թեմական ժողովը իր աշխատանքների ավարտին որոշում է հատուկ հետադրով Ամենայն Հայոց Ամառային Հայրապետին հալանել իր «Եփր» և հավառարժուրան զգացումներ ու նաև երախտագիտությունը Անոր շնորհած օրհնության գիրքի համար:

Ժողովի ավարտին նորընտիր առաջնորդ սրբազանը, որպես ժողովի նախագահ, իր շնորհակալության և զնահատանքի խոսքն է ատում ուղղված բոլոր ժողովականներին, թեմում կատարված եկեղեցանկեր, հոգևոր, մշակութային քնազավառներում ձեռք բերած հաջողությունների համար:

Ժողովը փակվում է առաջնորդ սրբազանի աղոթքով երեկոյան ժամը 10.30-ին:

## ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵԳԴՏՈՍՈՒՄ

Կահիրեի և Ալեքսանդրիայի հայոց քաղաքական ժողովների և կոմսական միացյալ խառը ժողովը տեղի է ունեցել 1970 թվականի հուլիսի 7-ին Ալեքսանդրիայի ազգային առաջնորդարանի դահլիճում: Ժողովին նախագահել է Ալեքսանդրիայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ տ. Զավեն եպս. Չինչիկյանը՝ Մարտին Զարբ-հանալյանի ատենապետությամբ և Խաչիկ Հակոբյանի ատենադարձությամբ:

Ժողովին ներկա են եղել 16 անձեր՝ երկու հոգևորական և 14 աշխարհական՝ քաղաքական ժողովի անդամներ: Ժողովին հյուրարար հրավիրված են եղել ներկա գտնվելու նաև Ալեքսանդրիայի պատգամավորական թեմական ժողովի ատենապետ Զարոյություն Ամատունին և ատենադպիր Լ. Արիփաբյանը:

Ժողովը բացվում է սրբազան հոր աղոթքով:

Օրակարգի հարցերը եղել են հետևյալները՝

ա) Ընթերցում և վավերացում 1970 թվականի հուլիսի 3-ի Կահիրեի և Ալեքսանդրիայի թեմական ժողովների ներկայացուցիչների խորհրդակցական ժողովի ատենագրությանը:

բ) Եգիպտահայ թեմի առաջնորդական տեղապահի ընտրություն:

Ժողովում կարդացվում և վավերացվում է Ալեքսանդրիայի առաջնորդարանում 1970 թվականի հուլիսի 3-ին գումարված Կահիրեի և Ալեքսանդրիայի թեմական ժողովների ներկայացուցիչների խորհրդակցական ժողովի ատենագրությունը՝ առաջնորդական փոխանորդի ընտրության վերաբերյալ:

Այնուհետև ժողովը գաղտնի քվեարկությամբ և միաձայնությամբ (13 քվե) եգիպտահայ թեմի առաջնորդական տեղապահ է ընտրում Ալեքսանդրիայի առաջնորդական փոխանորդ տ. Զավեն եպս. Չինչիկյանին:

Ժողովի ատենապետը հայտնում է ընտրության արդյունքները, այն ընդունվում է սրտագին ծափահարությամբ:

Ապա նորընտիր առաջնորդական տեղապահ տ. Զավեն եպիսկոպոսը խոսք է վերցնում և ժողովականներին հայտնում իր խորին շնորհակալությունը՝ իր հանդեպ ցույց տրված ուշադրության համար, և շեշտում, որ առաջնորդական այս գործը չափազանց դժվար է, ուստի պետք է միասնաբար աշխատել, ի մի բերել թեմի բոլոր ուժերը՝ ձեռնարկված թեմի եկեղեցական, մշակութային և աշխատանքները հաջողությամբ պատկերելու համար:

«Այս առթիվ կուզենք անգամ մը ևս հաստատել մեր հավատարմությունը, — շեշտել է սրբազանը, — Ամենայն Հայոց Մայր Աթոռ ս. Էջմիածնի և անոր արծաձավոր գահակալ Ն. Ս. Օծություն Ս. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի հանդեպ»:

Նորընտիր տեղապահ սրբազանը բոլոր ներկաներին վստահեցրել է, որ ինքը չանք չի խմայի՝ թեմի եկեղեցական, մշակութային կյանքը իր պատշաճ քարծրության վրա պահելու համար:

Այնուհետև ժողովականներից տ. Սպիակավազ քահանա Շաքարյանը, Ալեքսանդրիայի քաղաքական ժողովի ատենապետ Մարտին Զարբհանալյանը և Կահիրեի քաղաքական ժողովի ատենապետ Ա. Պրոքտանյանը իրենց ելույթներում ուրախությամբ նշում են, որ երկու քաղաքների քաղաքական ժողովները միասնաբար, համերաշխության մթնոլորտում կատարեցին սույն ընտրությունը: Նրանք վստահություն են հայտնում նաև, որ այդ համերաշխությունն ու փոխադարձ ըմբռնողության ոգին այսուհետև կշարունակվի և կհարստանա ու կտա իր բարի պտուղները՝ ի բարգավաճումն ու թեմի եկեղեցական, մշակութային կյանքի, նաև թեմական առաջնորդի ընտրության ժամանակ:

Վերջում ժողովը միաձայն որոշում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին մասնավոր հեռագրով հաղորդել տ. Զավեն եպս. Չինչիկյանի ընտրությունը՝ ի հաստատություն առաջնորդական տեղապահի պաշտոնում:







## ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի սկզբներին Մայր Աթոռ ս. Էջմիածին ժամանեցին Ամերիկայի հայոց արեվելյան թեմի հայ եկեղեցու երիտասարդաց կազմակերպության 25 անդամ-անդամուհիները, առաջնորդությամբ իրենց ղեկավար քարեշնորհ Հովհաննես տարկավագ Գաապարյանի:

Հուլիսի 18-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 5-ին, ամերիկահայ ուսանողները ուխտի եկան Մայր Աթոռ, մոտիկից ծանոթացան հայ եկեղեցու դարավոր կենտրոն ս. Էջմիածնի և նրա միաբանության կրճերին և գործունեությանը:

Երիտասարդների՝ հայրենիք գալու նպատակն էր եղել նաև մոտիկից ծանոթանալ վերածնված հայոց աշխարհի նվաճումներին, սերտորեն շփվել հայրենաքանակ հայ ժողովրդի հետ, մոտիկից տեսնել և զգալ նրա մեծ առաջադիմությունը շինարարության, տնտեսական և մշակութային ապարնեցնելու:

Երիտասարդները Մայր տաճարում կատարեցին իրենց աղոթքն ու ուխտը և ապա ներկա եղան կիրակյամսի ժամերգությանը, որին նախագահում էր Վեհափառ Հայրապետը:

Ժամերգության ավարտին Վեհափառ Հայրապետը քարեհաճում է ընդունել

ԱՄՆ-ի հայ երիտասարդաց եկեղեցասեր կազմակերպության անդամներին:

Հանուն աներկաների որդիական երախտագիտության սրտագին խոսք է արտասանում Հովհաննես սրկ. Գաապարյանը:

Հայոց Հայրապետը ողջունում է ներկայությունը երիտասարդաց կազմակերպության անդամների և իր օրհնությունը բաշխում բոլորին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը իր խոսքի մեջ անդրադառնում է հայ եկեղեցու և հայ ժողովրդի կյանքում Մայր Աթոռ ս. Էջմիածնի կատարած հոգևոր, մշակութային և հայրենասիրական մեծ առաքելությանը և շեշտում՝ սեփական հայրենիք և պետականություն ունենալու երջանկությունն ու ապահովությունը, իբրև անսպառ ներշնչումի աղբյուր և ամրակուտ խարիսխ՝ մեր ժողովրդի գոյության և ապագա բոլոր իդեալների իրականացման համար:

Հանուն երիտասարդաց կազմակերպության, որդիական երախտագիտության և շնորհակալության անկեղծ խոսք է ասում Հայոց Հայրապետին Արամ Նորսիկյանը, նաև այն բանի համար, որ Ն. Սրբությունը ամեն դյուրություն ընձեռել էր՝ հաջողեցնելու համար ամերիկահայ մի խումբ երիտասարդների ուխտավորությունը Մայր Աթոռ ս. Էջմիածին և վերածնված հայոց աշխարհ:

Ի նշան ամերիկահայ երիտասարդաց կազմակերպության դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը ունեցած անխախտ հավատարմության և նրա արժանընտիր գահակալ Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետի բարձր Անձը ու եկեղեցանվեր գործունեությունը Ա. Նորսիկյանը Մայր Աթոռի պայծառության համար ամերիկահայ երիտասարդաց կազմակերպության կողմից նվիրում է 1000 դոլար:

Վեհաբանում ամերիկահայ երիտասարդների հետ հանդիպումն ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և աջահամբույրով: Բոլոր ներկաները հյուրասիրվում են մրգերով:

Ժամը 21-ին Վեհաբանի հանդիպությանը դահլիճում ամերիկահայ երիտասարդները դիտում են Վեհափառ Հայրապետի՝ 1955 թվականի ընտրության և օծման հանդիսություններին, ինչպես նաև վերջերս Ն. Ա.

Օծության Հոռո՝ Սրբազան Պապին տված պատմական այցելությանը նվիրված կինո-ժապավենները:

Այնուհետև ամերիկահայ երիտասարդները շուրջ մեկ ամիս շրջագայում են մայր հայրենիքում և կատարելագործում մայրենի լեզվի իրենց իմացությունը: Նրանք միևնույն ժամանակ պարի մասնավոր դասեր են վերցնում:

Երիտասարդները հաճախ ներկա էին լինում Մայր տաճարում եկեղեցական արարողություններին:

Հայրենասեր երիտասարդները իրենց ազատ ժամերին ծանոթանում էին նաև հայրենիքի տեսարժան վայրերին և ուխտի գրումում պատմական վանքերն ու եկեղեցիները:

Չափազանց ողջունելի է այս հայրենասիրական նախաձեռնությունը:







ՀԱՆԳԻՍ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀՄՍՅԱԿ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ  
ՏԵՐ-ԽԱՀԱՏՐՅԱՆԻ  
(1895—1970)

Օգոստոսի 9-ին Լեւոնական քաղաքում վախճանվեց արժանապատիվ տ. Հմայակ ավագ քահանա Տեր-Խաչատրյանը:

Հանգուցյալը ծնվել է 1895 թվականին Բաղնշում (Բիթլիս), քահանայի ընտանիքում: Դա իր նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում: 1908 թվականին հանգուցյալը ընդունվում է Արմաշի դպրեվանքը, որտեղ ստանում է հոգևոր կրթություն և ձեռնադրվում սարկավագ:

1914 թվականին մի խումբ հոգևորականների հետ մեկտեղ արտրվում է Տեյր Էլ Զորի անապատները, մինչև միուր ըմպում է ազգային ճակատագրի դառնության բաժակը և, ատվածային նախախնամությամբ փրկվելով կոտորածից, հասնում է Երուսաղեմ: 1922 թվականին այդտեղից անցնում է Հունաստանի Սելանիկ քաղաքը:

1925—1937 թվականներին Հունաստանի Էլոն քաղաքում ուսուցչական պաշտոն է վարում ու 1937 թվականին նա քահանա է ձեռնադրվում Կարապետ արքեպ. Մազյունյանի կողմից և քահանայագործում Հունաստանի Պատրաս քաղաքի հայ համայնքում:

1938 թվականին նշանակվում է Կրետե կղզու հայոց հոգևոր հովիվ:

1946 թվականին հանգուցյալն իր ընտանիքով ներգաղթում է Հայաստան և ընտրվում հաստատում Էջմիածին քաղաքում: 1948 թվականին Ամենայն Հայոց Գևորգ Զ կաթողիկոսի կարգադրությամբ տեղ Հմայակը պաշտոնավարում է Լեւոնականի ս. Աստվածածին եկեղեցում:

1956 թվականին հանգուցյալը իր բարեխիղճ և ավիրյալ գործունեության համար Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի

կողմից պարգևատրվում է լավագույնով: Իսկ 1965 թվականին, իր երկարամյա և անբախիր գործունեության համար, արժանանում է ավագ քահանայության պատվի:



Տեր հայրը ուր էլ որ քահանայագործել է, վայելել է իր հոտի սերն ու համդիսացել է բարի և քաջ հովիվ: Հանգիստ իր ոսկորներին:

Յ 1761 Գ ՁՈՒՆՎՍՏՈ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                                                                                    | Էջ |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՃԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ Կոնդակը Ներսես կաթողիկոս Աշտա-<br>րակեցու ծննդյան 200-ամյակի առթիվ . . . . .                                                       | 3  |
| ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Ներսես և Աշտարակեցի . . . . .                                                                                                                           | 6  |
| Հատվածներ Ներսես Աշտարակեցու ճառերից ու նամակներից . . . . .                                                                                                       | 9  |
| Վկայություններ Ներսես Աշտարակեցու մասին . . . . .                                                                                                                  | 13 |
| Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Ներսես և Աշտարակեցի . . . . .                                                                                                                          | 22 |
| Էջեր Ներսիսյան դպրոցի պատմությունից . . . . .                                                                                                                      | 41 |
| ՀԱՎՈՐԱՐԿ, ԳՅՈՒԶՑԱՆ—ժամանակագրություն Ներսես և Աշտարակեցի կաթողիկոսի<br>Ներսես և Աշտարակեցու ծննդյան 200-ամյակին նվիրված հանդիսություններ Մայր<br>Աթոռում . . . . . | 52 |
| ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ . . . . .                                                                                                                                            | 54 |
| Ա. Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1970—1971 ուսումնական տարեշրջանի բացումը . . . . .                                                                                     | 57 |
| Ավարտաճառերի բանավոր պաշտպանություն հոգևոր ճեմարանում . . . . .                                                                                                    | 59 |
| Ուղղափառ եկեղեցիների երրորդ խորհրդակցությունը . . . . .                                                                                                            | 61 |
| ՍՓՅՈՒՌՔՈՒՄ                                                                                                                                                         |    |
| Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի 68-րդ թեմական<br>պատգամաւորական ժողովը . . . . .                                                                  | 62 |
| Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արևմտյան թեմի թեմական ժողովը . . . . .                                                                                          | 64 |
| Առաջնորդական տեղապահի ընտրություն Եզիպտոսում . . . . .                                                                                                             | 65 |
| Ամերիկահայ ուսանողները ս. Էջմիածնում . . . . .                                                                                                                     | 66 |
| Հանգիստ արժանապատիվ տ. Հմայակ ավագ քահանա Տեր-Խաչատրյանի . . . . .                                                                                                 | 68 |

## ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

### «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».  
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 31/VIII 1970 թ.: Ստորագրված է տպագրության 19/X 1970 թ.,  
տպագրական 4,25 ժամով + 2 երկրորդ, թուղթ 60×84<sup>1</sup>/<sub>8</sub>, պատվեր 648

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան